

3872

9147.925

2-85

0 - G.B

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՎԱՆԴԷԱՆ

(Ուրբ-հայկական ընդհարումները, նրանց պատճառները)

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Թ Ի Ֆ 1, Ի Ս

1907

9(47.925)

Հ - 85

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՆԴԷԱՆ

(Թուրք-հայկական ընդհարումները, նրանց պատճառները)

«Կովկասեան կտորածները մի մասն են այն կուրի, որ մղում է ժամանակակից քաղաքակրթութիւնը ասիական բարբարոսութեան դէմ, ոչ միայն Կովկասում, այլ և Ռուսաստանում»:

ԼՈՒԻՋԻ ՎԻԼԼԱՐԻ

(«Fire and Sword in the Caucasus»)

ԹԻՖԼԻՍ

ԵՆԵՏԻՄԱՅԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.

1907

(31)

11384

93487-42

12004



(319-59)

1612-2002

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Առանց վարանման չէ, որ մօտենում ենք այս ծանր ու ցաւոտ պրօբլեմին: Մեր ժամանակում անպատեհ է թւում զբաղւել ազգամիջեան հաշիւներով, բանակռիւններով: Եւ սակայն դա էլ գործ է, այժմէական անհրաժեշտ գործ:

Պէտք է սկսել գրել պատմութիւնը: Պէտք է փորձել լուսարանելու մեր չարարախտ երկրի պատմութեան ամենասև, ամենապշտալի դրւագը, որ արձանագրւած է արեան տառերով համամարդկային տարեգրութեան մէջ:

Սակայն, փաստերն արձանագրելը չէ մեր նպատակը: Դրա համար անհրաժեշտ կըլինէր տարիների քրտնաջան աշխատանք և այն էլ ոչ թէ տարածութեան վրայ, այլ տեղն ու տեղը, ընդհարումների արիւնոտ վայրերում: Մէկ ու կէս տարի պատերազմ... Եւ այն՝ համարեա անդուլ, անդադրում: Բըռօշիւրներ չէ, որ պէտք է գրել, այլ հատորներ: Եւ դա՞ կը պահանջէ բազմաթիւ ուժերի սերտ գործակցութիւն:

Մեր գործը էապէս բացատրական է, ոչ նկարագրական: Մենք պիտի փորձենք—ճշմարտութիւնն ունենալով իբրև դեկավար—թափանցել այն իրական ֆակտորների մէջ, որոնք առաջ բերին երկու ժողովուրդների այդ հոյակապ ու արիւնահեղ բաղխումը: Պիտի պատասխանենք և անիրազեկ ու անմտած մեղադրանքների և շահախնդիր ու չարակամ դատախազներին, պիտի աշխատենք ջրել աչառոտ ու միակողմանի լուսարանութիւնները:

Նրանք, որոնք ծանրանում են բացառապէս կառավարութեան դաւերի վրայ, նրանք ճշմարտութեան կէսն են միայն ասում. միւս կէսը մնում է վարագուրւած: Իսկ հայ ժողովուրդը, հայ աշխատաւոր և սզաւոր ընդհանրութիւնը բնաւ շահ չունի այդ վարագուրութեան ից, նա փափագում է պարզւած տեսնել բովանդակ ձըձմարտութիւնը:

Մ Ե Ծ Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Ը

Պատճառների շարքը

«Շէլթանի» նպատակն իրագործւած.—Թուրքական դրոշը և կովկասեան «գիւտ-նօստիկները».—Մեկնութիւններ.—Տնտեսական և ազգայնական պատճառաբանութիւն.—Սօցիալ-դէմօկրատները և անալօգիայի մեթօդը.—«Մեղաւորը դրօշակահաններն են».—«Новое Время» և «Искра».

Մարդ-զազանը վեր բարձրացաւ բնութեան արգանդից և մասսային նախճիրների մէջ վերստին փորձեց յազուրդ տալ արեան անյազ ծարաւին: Հին, դժնդակ ուրւականը, բոլոր վայրագ ուժերի մարմնացումը, կրկին անգամ դուրս լողաց մոռացութեան ալիքներից և գրոհ տւեց փոքրիկ, անբախտ, արիւնաքամ ժողովրդի դէմ, որը երկնք գարեբից ի վեր քաղաքակրթութեան դրօշն էր հակադրել այդ ահարկու ուրւականին...

Շղթան փշրեց, վագրը անզուսպ մոլեգնութեամբ գահավիժեց դէպի իր գոհը... Եւ սկսեցին դժոխային արարողութիւնները, և հարեանը սկսեց ծւատել հարեանին...

Ոճիրը արագ, ցիկլօնի պէս շրջան արաւ Անդրկովկասում. ամեն տեղ, ասես ուզմական մի ազգանշանով, գլուխ բարձրացրեց անգիտակից, արիւնսածարաւ խուժանը և ամեն տեղ սփռեց կոտորած ու աւերած, յուսահատութիւն ու նզովք...

Մարտափահար, անակնկալի բռնւած զոհը մի վայրկեան խելակորոյս նայեց իր շուրջը, մի վայրկեան «հաւանքի» յուսակտուր աղաղակ հանեց, ապա զգաստացաւ, դարկեց ահագանգը, շտկեց գարեբի հայկական բեռի տակ կորացած մէջքը և սեղմելով իր մարտական կազմակերպութեան շուրջը՝ սկսեց պատշպանել... Հարւածին՝ հարւած...

Եւ նոյն վայրկեանին, երբ Ռուսաստանում, ամբողջ կայսրութեան մէջ ժողովուրդները քաղաքական ու սօցիալական ազատագրութեան դրօշն էին պարզել, նոյն այդ վայրկեանին կովկասեան վեհապանծ լեռների տակ երկու ժողովուրդ, երկու դարաւոր դրացիներ, որոնք ըստ երևոյթին կոչւած պիտի լինէին ընդհանուր ուժերով կռիւլ իրենց ճակատագիրը, միացներու իրենց ջանքերը յանուն ընդհանուր ազատութեան—էին անյիշատակ դարերի, հին մովսիսական օրէնքն էին գործադրում իրենց փոխադարձ յարաբերութիւնների մէջ...

Երկու գոհերը յօշոտում էին իրար, մինչդեռ անարգ tertium gaudens-ը «եբրորդ խնդացողը»—շէյթանական, անհոգի բիւրօկրատիան—որ վաղուց փափագել ու հոգացել էր այդ սոսկալի մեռելապարը՝ ցնծութեան քրքիջ էր արձակում...

Եւ եղեոնը դեռ այսօր էլ վերջնական դադար չի առել, դեռ մահու հրեշտակը սաւառնում է կովկասեան հօրիզօններում, դեռ արիւնածարաւ բնագոյնները գոհացում չեն ստացել: Ցաւից ու սարսափից յոգնած, ուժասպառ՝ երկու ժողովուրդները դեռ կանգնած են դէմ առ դէմ, երկու թշնամի բանակների պէս, պատրաստ վերստին գահավիժելու իրարու վրայ:

Խ^{ոս} է կատարում—գարհուրանքով հարց տւին իրանց բոլոր մտածող քաղաքացիները այդ արիւնալի կօշմարի հանդէպ...

Եւ անա սկսեց հարցի ղիպնօզը: Դրսի աշխարհը սկսեց վերլուծել այդ մեծ առեղծւածը, որ այնպէս յանկարծակի գալիս էր թունաւորելու համակովկասեան ազատութիւնն ու բարօրութիւնը տենչացող բոլոր անհատների վարդագոյն երազները:

Հայ ժողովուրդը սրտատրոփ ականջ դրեց: Մի չարատանջ հարց էր նկարւած նրա վշտոտ ու անարեկ հայեացքի մէջ:

—Արդօք այս գարհուրելի փորձութեան հանդէպ, ուր նրա լինելու-չըլինելու խնդիրն էր դրւած՝ օտարները, գիտուն ու անաչառ դատախազները գէթ կը գնահատեն նրա արհաւիրքը, կը քննեն աղէտի խոր պատճառները, ճշմարտավայել բացատրութիւն կը տան...

Եւ նա գուր սպասեց: Նրա տարաբախտ ճակատագիրը այս դէպքում ևս ինքն իրան հաւատարիմ ֆնաց: Նրա ծով տառապանքին՝ ոչ մի սրտացաւ համակրութիւն, նրա անօրինակ ճգնաժամին ոչ մի վեհանձն, ազդու, իրական միջամտութիւն... Դրա փոխա-

րէն՝ առատութեամբ ցելս նրա հասցէին, նրա լաւագոյն յեղափոխական ուժերի հասցէին,—ինսինուացիաներ, ամբաստանութիւններ, անարգանքներ... Եւ նա դարձեալ լքւած՝ շուռ տւեց երեսը և գնաց իր ուղին, տարտամ հայեացքը յառած հօրիզօնին, իր ինքնօգնութեան դրօշակին փարած...

Այո. մինչ հայ ժողովրդի բոլոր առնական ու գործօն ուժերը, համախմբւած ինքնապաշտպանութեան դրօշակի շուրջը, գերմարդկային ճիգ էին թափում յետ հակաեղափոխութեան ու լանկթամուրեան բարբարոսութեան արշաւանքը, մինչ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, մին-մենակ կուրի դաշտում, ընդհարում էր կիսավայրենի և միշտ նախադրածակ հրոսակների հետ, ձգտելով ըստ կարելւոյն շուռ վերջ դնել մի քսամնելի ողբերգութեան, ուր նա վատնում էր և՛ իր թանկագին ոյժն ու եռանդը, և՛ իր հմայքը, իբրև ազատութեան համար կուռղի, իբրև միմիայն բռնապետութեան դէմ մարտնչողի—դուրսը, հասարակական անմասն շրջաններում, մարդիկ դիպնօղի ենթարկելով իրողութիւնները, մեծ եռանդով մերկացնում և խարազանում էին պատասխանատու հեղինակներին: Եւ ձև...

Ծանր ու շժմեցուցիչ էր ժողովրդական ճգնաժամին ապրող կազմակերպութեան համար, երբ նա մի վայրկեան աչքերը դարձնելով արիւնոտ կրկէսից, ականջ էր դնում այդ անեղագոչ արէօպագին, այդ իմաստուն ու խորհրդաւոր դատախազներին, որոնք իրանց կոյր, յախուռն, կրքոտ դատավճիռների մէջ յաճախ մոռանում էին նոյնիսկ շէյթան-ոճրագործին, իրանց վեր հանած պատճառների շարքում՝ մոռանում էին գլխաւորները, էականները:

Բռնակալութեան փաստարան մամուլը և երբեմն նոյնիսկ ազգի անունով ճառող ինտելիգենցիան, բէակցիայի մարմնացում-ուժերը և յեղափոխական սօցեալ-դէմօկրատները միանում էին մի սրտաշարժ համաձայնութեան մէջ, մէկ նշանաբանով, որի ընդհանուր իմաստն այն է՝ թէ «զոհերը իրանք են մեղաւոր, պէտք է դատապարտել իրանց, զոհերին»...

Բուն յանցաւորները կամ չքանում էին հրապարակից կամ թէ նրանց համար փաստարանում էին մեղմացուցիչ հանգամանքներ, և մեղադրեալի նստարանի վրայ էր դրւում դարձեալ նոյն

ոյժը, նոյն յաւիտենապէս ամբաստանւած ոյժը, որ տազնապնների, գոռ փոթորիկների ժամին նետուել է միշտ կրակի մէջ՝ ժողովրդի ղատին նեցուկ կանգնելու և հակառակորդի արիւնոուշտ բնազդները սանձահարելու համար...

* * *

Ուշագրաւ է «պատճառների» սերիան: Անդրկովկասեան մեծ աղէտի պատճառ են հաղիսանում, մեր «խրագեկ» դատաւորների կարծիքով,—մերթ հայի տնտեսական ճնշումներն ու թուրքի սնանկ, անճար վիճակը, մերթ երկու ազգերի բուրժուա ու ազնւական դասակարգերի մրցակցութիւնը, բայց ամենից աւելի հայկական նացիօնալիզմը և մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան ազգայնամոլ հաւատամքն ու ընթացքը, սխալ տակտիկան, նրա գրգռումներն ու պրօվօկացիաները թուրք ժողովրդի դէմ և այլն և այլն:

Ծայրէ-ծայր՝ սխալ կամ ինսինուացիա ու զրպարտութիւն: Շտապներ յիշեցնել, որ պրօվօկարները մեծ մասամբ սօցիալ-դէմօկրատներ էին...

Սխալ լուսաբանութիւնները, ոչինչ իհարկէ, եթէ մնում են տխալ լոկ թէօրիայի մէջ. բայց նրանք ցոյց են տալիս իրանց վնասակարութիւնը և գործնականում, նրանք խրախուսում են հայ ժողովրդի թշնամիներին, թե են տալիս պրօվօկատօր համխալամականներին և նրանց հովանաւոր ոստիկանութեանը, փոքրացնելով սրանց յանցաւորութեան չափը:

Փորձներ նախ և առաջ պատասխանել այդ զարհուրելի մեղադրականներին: Ի՞նչ դեր ունէր այդ դժբախտ հայկական «նացիօնալիզմը» կովկասեան աղէտների մէջ...

Մի կատաղի գրոհ էր, որ սկսեց Դաշնակցութեան դէմ: Եւ սօցիալ-դէմօկրատիայի օրգաններն էին— «Искра», «Пролетарий» և այլն—որ տւին ազդանշանը: Միացած «Новое Время-ի» ու «Московскія Вѣдомости-ի» հետ, նրանք անլուր ամբաստանութիւններ տեղացին հայ մարտական կազմակերպութեան վրայ: «Մեղաւոր են ամեն բանում Դրօշակեանները»—այսպէս յայտարարեցին նրանք: «Աղէտների պատճառը հայկական կօմիտէի շօվինիզմն է, նեղ ազգասիրութիւնը, նացիօնալիզմը»... Այն, սօցիալ-դէմօկրատներ և Սովօրիւններ միաբանեցին այդ անմաքուր արշաւանքի մէջ... Les extrémités se toushent.

Դրօշակեանները և Դաշնակցութիւնը ամենքի շրթունքների

վրայ էր... Մինչդեռ «Նովոէ Վրեմիան» այդ սև օրերում փրփուրը բերանին յոխորտում էր «փոքրիկ յանդուզն ժողովրդի դէմ, որ կռիւ է հրատարակել երեք պետութիւնները»—«Մօսկովսկիա Վէզօմօստին» կատաղութեամբ շանթեր էր թափում Դաշնակցութեան վրայ: Իր №244-ում (1905 թ.) Կատկովի արժանաւոր ժառանգը հետեւալն էր գրում, ի միջի այլոց.

«Թուրքերը տառապող կողմն են... Խարբայ ու վաճառած ձայները (ակնարկած են հայ յեղափոխականները) ցեխոտել են ուղում Ռուսաստանի աւանդականօրէն հաւատարիմ հպատակ՝ երեք ու ու կէս միլիօն թուրք ազգաբնակութիւնը, խրախուսելով նրա մէջ գաղտագողի մարդասպանների անջատական հակումներ, ի ֆուսս ուս կայսրութեան անգործութեան ու ամբողջութեան: Եւ, ինչպէս միշտ, արիւնհեղութիւնները աշխատում են զցել ուս կատարութեան վրէն: Ահա մի քաղածք Կովկասի մէջ ամենատարածւած Հայկական Կօմիտէի—Դաշնակցութեան—մի պրօկլամացիայից»...

Առայ է բերւած Կովկասեան մեր մի կենտրոնական մարմնի թռուցիկ—կոչը, ուղղւած թուրքերին, ուր վերջիններին՝ մարմինը յորդորում է ճանաչել իսկական թշնամիներին ու յետ կենալ եղբայրասպան կուրից:

«Մեղաւորը հայ յեղափոխականներն են»...

Այդ անամօթ նշանախօսքը չէ՞, որ կատաղութեան փրփուր է հանում դեռ այսօր ևս զանազան Տակայշվիլիների ու Լեվիցկիների շրթունքներին. նա չէ՞, որ մի և նոյն ժամանակ թե է տալիս կովկասեան Կրուչեվաններին և մահմեդական խուժանին, որոնց այսքան հաճելի է յեղափոխականի կարծեցեալ մեղքերով վարագուրել իրանց զաղիր շահատակութիւնները:

Բայց... խուժանը խուժան է, բիւրօկրատն էլ բիւրօկրատ. ոչ թուրք խուժանից ու Աղաներից, ոչ Տակայշվիլիներից, ոչ էլ բռնապետութեան գօրավիզ կազմող վատ մամուլից՝ մենք չենք պահանջում, չենք կարող պահաջել ազնիւ, շիտակ վերաբերմունք դէպի հայ կօմիտէների գործունէութիւնը և նրա հետ կապւած հրատապ խնդիրները... Մեզ համար միայն անըմբռնելի է, որ այդ սև բանակի խաղն են խաղում—թէկուղ տարբեր նկատումներով հասարակական լաւագոյն տարրերը, ամենաարմատական ներկայացուցիչները:

«Դաշնակցութիւնն է մեղաւորը»—մի՞թէ այդպէս չեն ազդակում ամբողջ մէկ ու կէս տարուց ի վեր Կովկասում հաստատւած սօցիալ-դէմօկրատ կազմակերպութիւնները ևս. մի՞թէ կուսակցական կուրուքիւնը թոյլ է տւել երբ և իցէ այդ կազմա-

կերպութիւններին, նրանց օրգաններին՝ որևէ արդար, ճիշտ ու նպաստաւոր խօսք արտասանել այն մարմնի մասին, որը իրանց իսկ վկայութեամբ՝ «ցանցով պատել է Անդրկովկասի հայաբնակ գաւառները» («Искра»)։

Նրանք վաղուց արդէն կնքել են այդ մարմինը «նացիօնալիստ» ու այլ նման ածականներով, բռնել են նրա դէմ բացասական դիրք—թէկուզ և այդ ընթացքով յաճախ իրանք իսկ յայտնեն բացասական դիրքում՝ դէպի հայ ժողովրդական դատի պահանջները։

Ինչպէ՞ս կարելի էր հանգիստ թողնել «Դաշնակցութիւնը» մեծ, անսովոր աղէտների պատճառները քննելիս. անշուշտ, նա դեր խաղացել է այդ աղէտների մէջ և, իր ընտրեալ համեմատ, բացասական դեր։ Նացիօնալիստ, թիթու, ազգայնամոլ ու յարձակողական ձգտումներով բռնւած մի կազմակերպութիւն, անտարակոյս, իր պատասխանատուութեան բաժինն ունի թուրք ամբոխի վայրագութեան ու մոլեգնոտ ցնցումների մէջ. հայ նացիօնալիստները, անշուշտ, գրգռել են։

Այդպէս պէտք է լինէր այն բոլոր մարդկանց երևակայութեան մէջ, այն բոլոր զործիչների բմբռնումով, որոնք ծանօթացել են «Դաշնակցութեան» հետ թուրքիկ, հատ ու կտոր մակերեսային գրոյցներից։

Եւ ահա անողորմ խարազանումներ։ Ահա յախուռն դատավճիռներ, ուր իզուր կը փնտրէք անաչառութեան սուերն անգամ։ Դաշնակցութեան դերը էապէս բացասական է, հակաժողովրդական։ Նա դրական ու օգտակար ոչինչ չունի իր գործունէութեան մէջ. ինչ որ արւած է ժողովրդի ինքնապաշտպանութեան, զինման ու առաջնորդութեան համար՝ արել են ուրիշները... Դաշնակցութիւնը անհետացել էր նոյն իսկ փետրվարեան օրերում Բագրի առաջին կոտորածի միջոցին, նա չէր, որ ջարդելով յետ մղեց վայրենի խուժանը և կնքել տւեց հաշտութիւնը. ոչ, սօցիալ-դէմօկրատական «Բակրա»-ի վկայութեամբ՝ փետրւարեան օրերում Բագուն պաշտպանել են «բոլոր ազգութիւններից շտապով կազմւած բանւորական խմբերը»...

Դաշնացութիւնը միայն գրգռում է, միայն վնասում է։ Եթէ անգամ նա իր պաշտպանութեան տակ է առնում աւերի ու սարսափի մատնւած նաւթաշրջանը — գարձեալ վնասում է։ Նա

դրանով իսկ գրգռում է, նա իր պաշտպանողական գործունեութեամբ իսկ աղբիւր է դառնում կառավարական խտուրթիւնների, թրքական արշաւանքների և ջարդերի: Այդպէս էր տրամաբանում, օրինակ, «Пролетарий» թերթը, ուստի սօցիալ-դէմօկրատիայի միւս արտասահմանեան կենտրոնական օրգանը: Չավազանց ընտրոշ է այդ յայտնութիւնը մեր հակառակորդների ընդհանուր նկարագրի համար, ուստի մենք այն առաջ կը բերենք ընդարձակ քաղաքով *):

«Ռուսները լուռ են և քթի տակ հայնոյում են հայերին, որպէս ամբողջ խտուրթեան հեղինակներին: Բանւորական լայն մասսաները, ճնշւած անաշխատութիւնից ու սպառնացող սովից, փնտրում են մեղաւորին և ակամայ փրկարում են նրան մօտիկում...»

«Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բազելի կոտորածի օրերում) իրանց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ Իրօշակեանները, հաստատում է իմ կարծիքով միայն այն, որ կառավարութեան տակտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—աշոգութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւններ, որոնք իրանք իրանց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական նպատակներ: Թող լինէր Բազելում հարիւր ուսու բանուր, հրացաններով զինւած—նրանց երևան դալը և դործօն միջամտութիւնը կուսենալը անազին քաղաքական նշանակութիւն և հայերին աւելի կը տար, քան թէ կարող են տալ հարիւրաւոր լաւ գինւած դրօշակեաններ...»

Մի մեծ կուսակցութեան կենտրոնական օրգաններից կարելի է պահանջել երևոյթներ լուսաբանութեան մէջ փոքր ինչ աւելի լրջմտութիւն... Ռուսական սօցիալ-դէմօկրատները, որ սրտացաւ ականատես էին հայ ազգաբնակչութեան խողխողելուն, անտարակոյս, սօցիալիստական վեհանձնութեամբ հրապարակ կը նետէին ու վերջ կը դնէին մարդկային գարշելի սպանդանոցին, խըլիւլով հայ ժողովրդի պաշտպանութեան դործը «նացիօնալիստ» դրօշակեանների ձեռքից, որոնք ընդունակ են միայն պատճառ դատնալ նորանոր ջարդերի և աւերումների: Ռուս սօցիալ-դէմօկրատները անշուշտ կանէին այդ, եթէ միայն... գէնք ունենային:

Լաւ ականջ դրէք:

«Որքան և ցաւալի է, բայց պէտք է արձանագրել, որ աղէտի ամբողջ ժամանակամիջոցում ոչ մի անգամ յայտնադէս և ակտիւ կերպով հրապարակ

*) Այս քաղաքները ժամանակին արել ենք ժնեւում,—տարաբախտաբար չենք յիշատակել թերթերի համարները (1905 թւի գարնանային ամիսներում):

չեկան՝ ոչ կուսակցական կօմիտէն (խօսքը սօցիալ-դէմօկրատ Մեծամասնութեան մասին է), ոչ էլ Փոքրամասնութեան միութիւնը... Նրանք երկուսն էլ ոչնչով ցոյց չը տւին իրանց:—Իր այդ կրաւորական զիրքը կօմիտէն բացատրում է անաջող անցած գործադուլով, որը պիտի կայանար աղէտի նախօրեակին, բայց զլիաւորապէս զինաւորման պակասութեամբ»:

Մի դժբախտ գործադուլ «աղէտի նախօրեակին» երբ թուրք խուժանը հասել էր բոլորքման գազաթնակէտին, երբ բաւական էր մի կայծ՝ մթնոլորտը բռնկեցնելու համար... Որքան հեռատեսութիւն և որքան սրտացաւ մտահոգութիւն՝ հայ ժողովրդի կեանքի և գոյքի վերաբերմամբ...

Եւ դարձեալ ընթերցող, Դրօշակեաններն են, պատճառ, որ ոուս սօցիալ-դէմօկրատները անդէն էին մնացել. որ այն սարսափելի օրերում նրանք ոչնչով ցոյց չը տւին իրանց գոյութիւնը...

«Որ ոուս բանւորները մնացին կրաւորական զիրքում, այդտեղ մեծ չափով մեղաւոր են իրանք Դրօշակեանները: Նրանք շատ միջոցներ, շատ զէնք ունէին. բայց նրանք միեւնոյն ժամանակ կզգիւնում էին ուսներեցի, հրաժարւելով օգնել կօմիտէին (սօց.-դէմ.) կազմակերպելու զինւած խմբեր ոուս բանւորներեցի, որանք պատրաստ էին օգնութեան գալու: Տեղական կօմիտէն միջոցներ չունենալով (ամբողջ բուրժուազիան այստեղ հայերեց է բազկացած), ոչինչ չը կարողացաւ անել իր գրօշներով»...

Ի զուր, ի զուր կը փնտրէք մի անկեղծ ու ճշմարիտ խօսք ինսինուացիաների այս այլանդակ հիւսւածքի մէջ: Բաւական չէ, մեր դառն, ցաւազին հիասթափութիւնը հանդէպ այն տխուր իրողութեան՝ որ հսկայական աղէտի օրերում ոուս յեղափոխական կուսակցութիւնները, իրանց իսկ կոպիտ խոստովանութեամբ, «ոչնչով» ցոյց չը տւին իրանց գոյութիւնը, որ ամեն օր, ամեն մի առթիւ ազգերի եղբայրութեան անուշով խօսող, բարձրագոյն նշանաբաններով օգը խլացնող մտաւորականներն ու մասսաները ցոյց տւին ապառաժայ անտարբերութիւն անօրինակ տագնապի օրերում, երբ ամեն մի պարզ քաղաքացու պարտականութիւնն էր օգնութեան գալ հայ ժողովրդին, քանի որ սա մղում էր ինքնապաշտպանութեան հարկազրած կռիւր վայրենութեան դէմ—բաւական չէր այդ բոլորը, դեռ նրանք անսովոր քաջութիւն ունէին հրապարակով այպանելու, սևացնելու նրանց, որոնց սիրտը արիւնոտուում էր ի տես հարազատների մասսային խողխողման, որանք առաջ էին նետում՝ երկաթի ուժեղ հակահարուածներով կանգնեցնելու ոճրագործ ձեռքը... Այո, նրանք զեռ իրենց զարմանալի ընթացքը քաշքշուկներով վարագուրելով, չէին վարանում

նոյն իսկ à l'unisson «Մօսկովսկիա Վէրօմօստի»-ի և ուրս կառավարութեան ամբաստանութիւններին՝ հրապարակել ի լուր աշխարհի, թէ Հ. Յ Դաշնակցութիւնը գիտակցաբար կամ անգիտակցաբար պրօփօկատօրի դեր է, ստանձնել թուրք-հայկական արիւնալի կօշմարի մէջ... Դառն է, քստմեկ է:

Կան ողբալի թիւրիմացութիւններ, նախապաշարունակներ հայ ժողովրդի նկատմամբ, որոնք բերնէ բերան, երկրէ երկիր տարածւելով, ստեղծում են որոշ շրջաններում աննպաստ, նոյնիսկ թըշնամական տրամադրութիւններ դէպի հայութիւնը, նրա իրէպաները, նրա պաշտպանած դատը, նրա մղած պայքարը:

Այդպիսի այլանդակ նախապաշարունակներից է այն վայրիվերոյ յայտարարութիւնը՝ թէ հայկական շարժումը, տողորած մոլեռանգ նացիօնալիզմով, ձգտում է անկախ հայկական պետութեան, կամ այն միւս տարածւած պարագօքսը, որի համեմատ հայ ժողովուրդը յայտնուում է որպէս շահի ու կեղեքման տենչանքով բռնւած, էապէս վաշխառու, առևտրական մի տարր:

Թուրք բուրժուազիայի և մահմեդական ֆանատիկոսութեան իդէօլոգները ճարպիկ կերպով կարողացան շահագործել հայ յեղափոխութիւնն ու հանուր հայութիւնը վարկաբեկող այդ թիւրիմացութիւնները: Նրանք հնչեցրին անազանգը հայ հարստահարիչ դրամագլխի «ոտնաձգութիւնների» դէմ, նրանք տարածեցին առասպելներ հայ կօմիտէի, նրա երեակայական շահատակութիւնների ու դաւերի մասին: Նրանք ամեն առթիւ, առանց այն էլ կասկածամիտ ու հայատեհաց բիւրօկրատիայի առջև, շեշտեցին հայի «սեպարատիզմը», հայ յեղափոխականի անջատական, ազգայնամոլ ձգտումները: Նրանք ի ցոյց դրին հայ գործիչին, որպէս ամբարիշտ, ֆանատիկոս մի տիպ, որ միայն թունաւոր ատելութիւն ունի դէպի դրացի ժողովուրդները, մասնաւորապէս դէպի թուրքութիւնը:

Եւ այդ առասպելներն ու ինսինուացիաներն էին, որ մեր միւս դրացիները ևս, ուրս ու վրացի որոշ կարգի սօցիալ-դէմօկրատները փութկոտութեամբ որդեգրեցին և ազմկեցին մթնոլորտը մարտական լօզունգներով—«Հայ նացիօնալիզմի դէմ», «հայկական առանձնացման դէմ», «Դաշնակցութեան դէմ»:

Թուրք իդէօլոգներին, պանիսլամիզմի աւազանում մկրտւած թուրք ագիտարօրների հակահայկական ու հակայեղափոխական

այդ տրամաբանութիւնը բղխում էր, անտարակոյս, մասամբ հեռաւոր իրողութիւններից,—բղխում էր այն մեծ, ազատագրական պայքարից, որ հայ մարտական կազմակերպութիւնը տասն և հինգ տարուց ի վեր մղում է Տաճկաստանում, բռնակալ մի տիրապետութեան դէմ, հերոսական անձեւիրութեամբ ու անօրինակ զոհողութիւններով...

Դժւար է, այն, պահանջել Աղաներից մի վայրկեան թօթափել ցեղա-կրօնական ազգակցութեան, սուլթանական բռնութեան կուլտը և հասկանալ, գնահատել հայ մարտիկի հոգեբանութիւնը, նրա հերոսական պայքարի իմաստը. դժւար է պահանջել այդ մտաւոր անանկներից նոյնիսկ տարրական ծանօթութիւնը՝ պատմական փաստերի, հայ քաղաքական կուսակցութեան ծրագրի, նրա տակտիկի և սկզբունքների, նրա առաջադրած maximum-պահանջների և այլն: Բայց մեզ թւում է, որ այդքան ծանօթութիւն կարող էինք պահանջել վրացի և ռուս սօցիալ-դէմօկրատներից, առաւել ևս սրանց հայացեղ համախոհներից, որոնք օրթօդօքսութեան մէջ յետ չը մնալու համար, նոյնպէս երբեմնեւ երբեմն հրապարակ են գալիս կովկասեան մամուլի մէջ, պատրաստ կատեգորիկ յայտնութիւններով, ուր գրեթէ բոլոր պատուհանների մեղքը զցում են հայկական կապիտալիզմի ու նացիօնալիզմի վրայ: Հասկացողութիւնները խեղաթիւրում են և ազացոյցների տեղ դուք տեսնում էք միայն պարաօքսների ու պոռաւական բամբասանքների մի տարափ...

Հայ յեղափոխութիւնը սեպարատիստ: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ազգային առանձնացման շատագո՞վ, ազգերի համերաշխութեան հակառակօրդ, կուի ու ատելութիւն սերմանող... Բայց ո՞վ է տասնուհինգ տարուց ի վեր Տաճկաստանի մըռայլ հօրիզօններում համերաշխութեան քարոզ հնչեցնողը, քրդին ու տաճկին համերաշխ կուի հրաւիրողը, ո՞վ է որ իր օրգանների մէջ, երկար տարիներ ընթացքում արծարծել է խաղաղ համայնակեցութեան գաղափարը ամենայլազան համայնքերի միջև, մեղադրել է միշտ—հայկական անծայր ողբերգութեան մէջ—միմիայն սուլթանական բռնակալութիւնը և միշտ արդարացման քէ է տւել թիւրք ժողովրդին, չը նայած վերջինի ուղղակի մեղսակցութեան, նրա հայակեր Ֆանատիկոսութեան բռնկումներին...

Անցեալի դառն, հիասթափեցնող փորձերն այդ ուղղութեամբ

չէին վհատեցնում հայ յեղափոխական կազմերպուծիւնը և վերջին, 1904-ի Ընդհանուր ժողովը, տողորւած նոյն համերաշխութեան ոգով, միաձայն որոշում է՝

«Շարունակել թիւրքահպատակ այլ և այլ տարրերու հետ (քիւրդ, տաճիկ, տարի, լիբանացի, մակեդոնացի և այլն) համերաշխ գործակցութեան տակտիկը, որով մինչև օրս դեկավարւած է Դաշնակցութիւնը՝ յանձնարարելով բոլոր պատասխանատու մարմիններուն ու կենտրոնական կոմիտէներուն, ըստ տեղական հանդամանքի, գործնականապէս մշակել ըտզմալի մերձացումի պահանջը այդ տարրերու հետ»:

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը քանի՜ քանի անգամ համերաշխութեան յորդորներ է ուղղել նոյնիսկ Երիտասարդ թիւրքերին, քանի՜ցս փորձել է միանալ նրանց հետ, ծրագիրներ են կազմել, համաձայնութիւն է կնքել որոշ յեղափոխական ձեռնարկների շուրջը, բայց և միշտ վիժել են այդ չարաբաստիկ էքսպլոիմենտները, շնորհիւ տաճիկ յեղափոխականների բարոյական հեղկութեան, գաղափարական նկարագրի և թուխքների բացաղայութեան:

Նոյն համերաշխութեան կոչերը չէն ուղղել և կովկասեան թուրքերին... Տասնեակ տարիների ընթացքում նոյն իսկ հայկական լիբերալիզմը չէ, որ յանձին Արծրունու, սխտէմատիկաբար համերաշխ, եղբայրական գործակցութեան է հրաւիրել մահմեդական տարրը, խաղաղ, կուլտուրական ասպարէզում: Հետևանքը... Այս՞ է արդեօք հայ նացիօնալիզմը, սօցիալ-դէմօկրատական «Պրօլետարի»-ի հոշակած «ազգային առանձնացումը»...

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը համաձայնութեան դաշն է կուում Տաճկաստանում՝ մակեդոնացիների հետ, Ռուսաստանում՝ ռուս և վրացի, լեհ ու ֆինլանդացի յեղափոխական սօցիալիստների հետ՝ ընդհանուր ոյժերով պայքարելու բռնապետութեան դէմ և իրագործելու ամենալայն ռամկավարական ազատութիւններ:

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը առաջադրել է տաճկահայկական իր ծրագրի մէջ՝ ոչ զուտ ազգային, այլ տերրիտօրիական ինքնավարութիւն, որի բարիքները պիտի վայելեն հաւասարապէս ապագայ ազատ նահանգների բոլոր համայնքները, առանց խտրութեան ցեղի և կրօնի:

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը, դեռ տասն և հինգ տարի սրանից առաջ, մտցրել է նոյն ծրագրում ռամկավարութեան և սօցիալիզմի գաղափարները, ծանուցել է աշխատաւոր դասա-

կարգի գալոց յադթանակը, արծարծել է այդ գաղափարները իր հրատարակութիւններին մէջ—ինտելիգենտ տարրերի համար—և այդ այն ժամանակ, երբ հայրենիքում հալածւողների ճիշը և կուռի շահնդը միակ ցաւոտ այժմէութիւնն էին:

Եւ, համաձայն կուսակցութեան սկզբունքներին, նրա լայն, միջազգայնական դաւանանքին, Դաշնակցութեան ֆէդայիները Տաճկահայաստանում իրանց երկարամեայ փոթորկոտ կռիւներում թուրք կառավարութեան և քրդական հրոսակիւների դէմ՝ ունեցել են գաղափարական զինւորներին յատուկ վեհանձնութիւնը՝ խնայել թոյլերին ու ամեղներին—կանանց, ծերերին, երեխաներին—մի մտահոգութիւն, որ նրանք երբէք չեն տեսել իրանց անհոգի թշնամիների մէջ... Նոյն տակտիկով էր ղեկավարւում Դաշնակցութիւնը և ներկայ կովկասեան տագնապի միջոցին, թուրքերի դէմ ուղղած ինքնապաշտպանութեան կուռւմ: Նա բարբարոսի փոզրոզութեամբ գրոհ չէր տալիս հակառակորդի դէմ այն վայրերում, ուր վերջինը կազմում է աննշան փոքրամասնութիւն, նա տրամադիր չէ փոխ առնելու դրացու նախապատմական կուռի մեթոդը և ծւատւած դիակների շուրջը դիւային խրախճանքներ սարքելու... Չերկարացնենք:

Նացիօնալիստ հայ կուսակցութեան խորհուրդը, վերջապէս,— առաջին հեղինակաւոր մարմինը Ընդհանուր ժողովից յետոյ— մշակեց 1904 թւականին Անդկովկասի համար գործունէութեան մի նախագիծ, հիմնւած մի կողմից՝ կովկասեան ազատ ինքնավար ազգերի դաշնակցութեան, միւս կողմից սօցիալիստական միջազգային կօնգրէսների հիմնական սկզբունքների վրայ:

Ահա «Դաշնակցութեան» նացիօնալիզմը: Ահա թէ ինչպէս են հրապարակ նետւում—ինչպիսի աններելի թեթեամտութեամբ ամենաժանր ամբաստանութիւնները մի կազմակերպութեան դէմ, որ իր դերն ունի տանջւող ու ազատագրւող մի ժողովրդի պատմութեան մէջ:

Ահ, անտարակոյս, բամբասանքի ու ինսինուացիայի հերոսները, որ հետամուտ են դաշնակցականների ամենաաննշան աբարքներին անգամ և որ անսովոր փութկոտութիւն են ցոյց տալիս՝ այդ արարքները յադթական ձեւերով հանրային ուշադրութեանը մատնելու համար, չեն համակերպի անգամ ամենայտուկ փաստերի առջև, նրանք կը յիշեն ձեզ այս ինչ միջադէպը, այն

ինչ անկանոն, դատապարտելի քայլը, կատարւած կուսակցութեան այս կամ այն անդամի կամ խմբի կողմից: Նրանք կը յիշեն դաշնակցական նացիօնալիզմի ու շօվինիզմի այս կամ այն հակադարձ շարժումները թէկուզ հէնց վերջին երեք տարւայ ընթացքում, եկեղեցական գոյքերի յափշտակման, բիւրօկրատիայի ու թուրք խուժանի արշաւանքների միջոցին... Բայց ի՞նչ կը զարմացնեն նրանք, ի՞նչ կարող են զարմացնել նոյնիսկ ծայրայեղ նացիօնալիզմի այդ մասնակի արտայայտութիւնները մի էպօխայում՝ երբ հայը իր շուրջը տեսնում է միայն արիւն ու արհաւիրք, երբ դրակօնական, բացառիկ օրէնքները բոլոր թափով նրա վրայ են ծանրանում, երբ նրա գոյութեան դէմ, նրա հաւաքական, ցեղային գոյութեան դէմ դաւեր է նիւթում բոլոր սև ուժերի դաշնակցութիւնը, երբ երեկւայ խաղաղ ու անդորր կարծւած հայրենիքում բռնաբարում են նրա ամենամարտական սրբութիւնները, արիւնով ներկում եկեղեցիների գաւիթները, կողակների սեփնների տակ տալիս կանանց և երեխաներին, երբ լանկթամուրական արշաւանքը ուրազանի պէս պայթում է անզէն ժողովրդի վրայ, անապատ դարձնում հայի արիւնքբոխը մշակւած շէն վայրերը, չորս կողմը սփռում դիակների կոյտեր, կսկիծ ու հառաչանք, նզովք ու ցասում,— և երբ արիւնալի այդ քաօսի մէջ, բռնութիւնները, լացի ու փախի այդ հսկայական տարտարոսում չը կայ ոչ մէկը, որ դէթ կարեկցութեամբ ձեռք մեկնէ անարգ, հրէշային գաւաղրութեան արիւնոտ գոհին, երբ շրջապատող հասարակութիւնները ընդհանուր առմամբ անզգայ հանդիսատեսի դեր են կատարում և նոյն իսկ լռելիայն կամ բացարձակօրէն՝ մեղադրում են գոհին, փաստաբանում դահճին... Ասացէք խնդրեմ, ի՞նչ խելահաս մարդը կարող է քար նետել այն երիտասարդի վրայ, որը անհնարին դայրագնութեան մէջ այս կամ այն դէպքում, այս կամ այն առթիւ — թէկուզ հէնց յեղափոխական դրօշակի տակ բուռն, ծայրայեղ արտայայտութիւն է տալիս իր շատ բնական հայրենասիրութեան...

Հայահալած չարակամութիւնը սահման չունի: Հայի ինքնապաշտպանութեան քայլերն անզամ աններելի յանցանք եղան կովկասեան հայաստեաց արէօպագի աչքում: Յիշեցէք, բնթերցող, թէ որպիսի թշնամանք ու ցասում յայտնեցին վրացի և թուրք շօվինիստները Նակաշիձէի սպանութեան առթիւ, ինչպիսի անպատ-

319-59
1612-1002



կառ ցոյցեր եղան հայերի դէմ: Հնաւանդ, վայրենի ատելութիւնը չէր կարող մարսել, որ երեկւայ հլու «առայն» կարողանար այնքան սասանեցուցիչ ձևերով պատժել իր ժողովրդի դահիճներին: Նրանք չէին կարող մարսել և ուրիշ մի շարք տերրօրական ակտեր, որ Դաշնակցութիւնը ի գործ դրեց—ընդհանուր մասսային շարժման հետ միասին—իբրև անհրաժեշտ պրէվանտիւններ, իբրև կանխիչ և միանգամայն վրէժխնդիր միջոցներ, որոնք նպատակ ունէին ըստ կարելոյն նւազեցնել սարսափներէ, կռուավարչական տերրօրների կրկնողութեան հնարաւորութիւնը: Հայը համարձակուում է պաշտպանւել, դժոխք և անէծք,—ոռնում էր մարդախոշոշ արէօպագը...

Cet animal est très mechant

Quand on l'attaque, il se defend. *)

Եւ զայրանում ու զարկում են անակոչանակը հայի մեղապարտ յանդգնութեան դէմ. ուումքն ու տերրօրք ենթարկում են Կէուք ազաների ու մօլանների, վրաց պորտաբոյժ ազնւականութեան շանթարձակ անաթեմաներին, որոնք մի անլուր ցինիզմով հնչեցրում են կովկասեան կռուավարչապետի պալատում... Հայի դրացի ժողովուրդների իշխող դասակարգերը այդպիսով ձեռք ձեռքի տւած, մի սրտառուչ համերաշխութեամբ, հանդիսաւորապէս ստանձնում են մասնիչի դեր և ամբողջ հայ ժողովուրդը դրւում է մեղադրեալի նստարանի վրայ: Հսկայական պատմութեան մէջ չը տեսնւած օտորակիզմ... Հայութեան երդեալ թշնամիները չեն կարող հանդուրժել առհասարակ հայկական շարժումը և, ինչպէս որ հայ կապիտալիզմի մէջ նրանք տեսնում են համայնակուլ մի հրէշ, որ մի օր պիտի նւաճէ բովանդակ կովկասը, այնպէս էլ հայ շարժման մէջ նրանք կարծես ընդհնամարում են մի չարաղէտ սկզբունք, ուղղւած ոչ միայն բիւրօկրատիայի, այլ և իրանց բոլորի դէմ: Ահա մի ողբալի մտավիճակ, որ պակաս դեր չէ խաղում մեր ժողովուրդի դժբախտութիւնների մէջ: Հայ յեղափոխական տարրի ամենաբնական կուլի ձևերը, բիօլոգիական աշխարհում իսկ ընդունւած ու սրբագործւած արտայայտութիւնները, դառնում են օտար չարակամ քննադատների աչքում մի անախրօնիզմ, դիւային մի խաղ...

Ոչ, և դարձեալ ոչ: Մենք «ազգային առանձնացում երբեք չենք քարոզել և չենք դաւանել: Եւ եթէ վրացի սօց-դէմօկրատ-

*) Այս կենդանին շատ չարն է, երբ նրան խօսւում են—պաշտպանւում է:

ները որոշել են անդադար կուել նացիօնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում» *)), եթէ ադտեղ ի նկատի ունեն մեր նացիօնալիզմը, ապա նրանք զարնւում են բաց դռները: Նոյնքան անմտած են վրացի սօցիալ-դէմօկրատներին միւս յայտարարութիւնները՝ թէ «վտանգաւոր է պարզել ազգային դրօշակները»—իբր թէ նրանք են պատճառ դառնում խուլիգանական շահատակութիւններին—թէ ազգայնական ընդհարումները ծնունդ են հէնց նացիօնալիզմի, թէ ուրիշ կուսակցութիւններին շնորհիւ է, որ «հայ գիւղացիները ոչ մի մասնակցութիւն չեն առնում ընդհանուր յիլափոխական շարժման մէջ և այլն և այլն»:

«Ազգային դրօշակներ չը պէտք է հանել»—ահա մի պահանջ, որ միանգամայն ներդաշնակուած է ուրև «պրօլետարի»-ի ծանօթ յիշատակած յայտարարութեան հետ՝

«Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բազուի կտորածի օրերում) իրանց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ Դրօշակեանները, հաստատում է, իմ կարծիքով, միայն այն, որ կտաովարութեան տակախիլը—զրգուել մի ազգութիւն միւսի դէմ—աջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւնները, որոնք իրանք իրանց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական նպատակներ»:

Կովկասեան ինքնատիպ մարքսիզմը դեռ շատ անակնկալներ պիտի պատճառէ մեզ պրօֆաններին, իր ինքնատիպ սօցիալօզիական գիւտերով:

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել, ազգի անունով առհասարակ չը պէտք է խօսել ու գործել—դա նացիօնալիզմ է և գուցէ... սօցիալիզմի պրօֆանացիա... Օրինակը վարակիչ է, մանաւանդ հայերի մէջ, ծանծաղամիտ կօմսօլօլիտիզմը «առաջադիմութիւններ» է անում—և մինք չենք զարմանում, տեսնելով անհատներ, որոնցից իւրաքանչիւրը իր նորընծայական յովիշտակութեան մէջ, «ուղղադաւան» թէօրիաներով տարւած՝ կասէ ձեզ, օրինակ, թէ ինքը «մարդ է» կամ սօցիալ-դէմօկրատ է, կամ ուրևաստանցի սօցիալ-դէմօկրատ է, և դժկամակութեամբ ու ամաչելով միայն կը յիշատակէ իր ազգային ծագումը,—ճիշտ այնպէս ինչպէս հին փիլիսօփայութեան նէօ-պլատօնական յայտնի շկօլայի ներ-

*) Այդպէս է աւսած վրաց «Սօցիալ-Դէմօկրատ»-ի մի յօդւածի մէջ, որ թարգմանւած է ուրևական «Սօցիալ-Դէմօկրատի»-ի 8-րդ համարում 1905 թ. և այնտեղից անցած «Րէւօլ. Բօսսիայի» մէջ:

կայացուցիչ Պլօտէնեսը ամաչում, կարմրում էր, որ մարմին ունէր, այնքան սպիրիտուալիզմը, հոգեպաշտական դօգմաները գերել էին նրան...

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել... 1903-ի աշնան չը պէտք էր հրապարակ գալ ազգային պարօլով, թէպէտև իլում էին ազգի ուրոյնութեան վերջին մնացորդները. յեղափոխական տարը չը պէտք է կոչէր՝ «կեցցէ՛ հայութեան բռնաբարւած իրաւունքը. «Իաշնակցութիւնը» չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիրօկրատիայի ու թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ, նա չը պէտք է առաջ մղէր քաղաքների և գիւղերի վտանգւած հայ ժողովուրդը՝ նոյն վտանգւած հաւաքական գոյութիւնը գէնքը ձեռին պաշտպանելու համար... Այդ բոլորը «նացիօնալիզմ» է և «Իաշնակցութեան» այդպիսի միջամտութիւնը, վրաց ս.-դ. օրգանի ասելով, տրամադրում էր «հայ գիւղացիներին՝ ոչ մի մասնակցութիւն «առնել ընդհանուր յեղափոխական շարժման մէջ» (կարծես հայ ժողովրդական այդ ըմբոստացումը կալւածների գրաւման առթիւ՝ այդ ընդհանուր, հակապետական շարժման մի արտայայտութիւնը չը լինէր)... Այդ բոլորը նացիօնալիզմ է, դրա փոխարէն պէտք էր միայն կանգնել հրապարակի վրայ և զիլ ձայնով աղաղակել՝ «պրօլետարներ բոլոր երկրներին, միացէ՛ք»—և հայ ժողովուրդը դարման կը ստանար իր ցաւերին...

Ժամանակ է, որ թողնեն սխօլաստիկական մտածողութեան այդ տարամերժ ձևերը, չը կաշկանդեն, չը խեղաթիւրեն նրանցով նոր կեանքի կոչւող երիտասարդութեան հարցասէր միտքը: Առողջ տրամաբանութիւնը ըմբոստանում է այդ կամայական ու բռնազրօսիկ ֆօրմուլաների դէմ. նա ասում է, որ կարելի է սօցիալիստ լինել և ամենաջերմ պաշտպան կանգնել իր ազգային իրաւունքների ու անկախութեան. նա հաստատում է, որ կարելի է նոյնիսկ ուղղափառ մարքսիզմ դաւանել և հրապարակ գալ ազգային դրօշակի ու նշանաբանի տակ, որոշ մօմենտում, երբ վտանգ է սպառնում ազգայնութեան ինքնուրոյնութեան, նրա ազատ ու նօրմալ զարգացման:

Ճշմարիտ, ոչ խեղաթիւրւած սօցիալիզմը զանազանում է այն ուղմատենչ, աշխարհակալող ու ֆրասակար նացիօնալիզմը, որ վերջին տարիներում գլուխ է բարձրացրել ու այնքան տխուր հոչակ է ստացել Ֆրանսիայում ու Անգլիայում, և այն միւս «նա-

ցիօնալիզմը», որ այլ ինչ է, բայց եթէ ձգտում ազգային վերածնութեան ու առաջադիմութեան, ձգտում՝ կրթելու և բարձրացնելու հարազատ ժողովուրդը համամարդկային իդէալների ոգով: Ճշմարիտ սօցիալիզմը նշաւակում է, անարգ սիւնին միխում ոչ այն ազգայնութիւնը, որ սեփական արիւնն է թափում ազատ, ինքնագլուխ ապրելու համար, այլ այն միւսը, որը արեան հեղեղների մէջ խեղդել է ուզում ուրիշ ազգերի ազատութեան թռիչքները: Չափազանց տարրական բաներ են սրանք և վաղուց ժամանակ է հասկանալ:

Հայ դաշնակցականը նոյնպիսի իրաւունքով կարող է փաստարանել իր ազգայնութեան դատը, որպիսի իրաւունքով մի Բէրէլ կամ մի Պրէսանտ պատրաստականութիւն կը յայտնեն զէնքը ձեռին ասպարէզ նետելու՝ իւրաքանչիւրը իր Հայրենիքը պաշտպանելու համար:

Հայ դաշնակցականը նոյնքան իրաւունքով կարող է սիրել իր լեզուն, երկիրը, պատմութիւնը, որքան իրաւունքով մի էստրանգիփօման սօցիալիստ Ֆերրի կարող է բացականչել. «ես շատ սիրում եմ իմ մեծ հայրենիքը՝ Իտալիան»:

Այդպէս է հրահանգում իսկական, չը խեղաթիւրւած սօցիալիզմը: Այդ է բուն իմաստը և այն ծանօթ, տարածւած բանաձևի, որի անունն է «ազգայնական ինքնորոշում» և որը Ռուսաստանի ու կովկասի սօցիալ-դէմօկրատների աչքում կարծէք մի դատարկ աւելորդ ֆօրմուլ է, որ ծառայում է միայն ազիտացիական նպատակների և որի մէջ երբէք չը պէտք է դնել որ և է կօնկրետ բովանդակութիւն, այլապէս կընկնէք նացիօնալիզմի դիրկը և կարժանանաք կովկասեան պապերի անեղ բանադրանքին...

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐՈՂԸ ԵՒ ՀԱՅ ՆԱՅԻՕՆԱԼԻԶՄԸ

Սօցիալ-դեմօկրատիայի խաղացած դերը

Նախապաշարումներ.— «Դաշնակցութեան» նացիօնալիզմը.— «Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել».— Սօցիալիզմ և նացիօնալիզմ.— Վրացական ինտելիգենցիայի դիրքը.— Իվերիականներ և մարքսիստներ.— Ս.— դ.— ներքի սխրագործութիւնները.— Ս.— դ.— ահան մի ըէզօլիցիա.— Հայ և թուրք հաւասարացէս մեղսակից.— Հայ լիբերալիզմի և բուրժուազիայի դերը.— Թուրքական գրոհը և «կադմակերպած պրօլետարիատը».— Ս.— դ.— ահան մի օրիգինալ առաջադրութիւն.— Հայը պէտք է հաւասարի թուրքին.— Վրացամոլութիւնը կովկ. սօցիալ-դեմօկրատիայի մէջ.— Մի դօկումենտ.— Մի պրօկլամացիա.— Սօցիալ-դեմօկրատիան՝ պրօօկկատօրի դերում.— «Դաշնակցութեան» թուրքիկները հայ-թուրքական ընդհարումների առթիւ.—

Անորակելի է և անհաւատալի այն բողոքը, ինչ որ կոպիտսեան սօցիալ-դեմօկրատիան ասեց ու գրեց վերջին մէկ ու կէս տարւայ ընթացքում թուրք-հայկական ընդհարումների և Դաշնակցութեան դերի առթիւ։ Սկզբից մինչև վերջ—տեղեկնցիօղ ու աչառատ վերաբերմունք՝ դէպի կատարուող իրողութիւնները, դէպի հայերը, դէպի նրանց պաշտպան կազմակերպութիւնը։

Սկզբից մինչև վերջ վրացական բորբոսնած շօվինիզմն էր բարձրաձայն ազադակում այդ կուսակցութեան խօսքի ու գործի մէջ, մի կուսակցութեան՝ որ իր ճնշող մեծամասնութեամբ կազմւած է վրացիներից և որի մէջ այդ տարբը գրեթէ բողոքովին լուծւում է, դիմազուրկ լինում, կամ յամենայն դէպս կատարում է մի չափազանց արգահատելի դեր, յայտնելով իբրև հլու աւտօմատ, իբրև կոյր գործիք, իբրև մի տեսակ instrumentum vocale...

Գանգատներ ունի հայ ժողովուրդը իր հարեան վրացիների դէմ, դառն, կշտամբող, արգար դանդառներ, որ մի օր, վստահ ենք, պիտի արձանագրեն իրանք վրացի պատմագիրները և պիտի զզւանք ու ցասում զգան, տեսնելով, թէ որքան անարժան դեր է խաղացել վրաց ինտելիգենցիայի մի սոււար մասը հայ մորթուուող ժողովրդի դիմաց, նրա պատմական, անօրինակ ու աշխարհազրոյր տագնապի ընթացքում... Փաստերը չափազանց շատ են և մոռանալ անհնարին է։

Այդ շօվինիստ ինտելիգենցիայի օրգանները չէին «Իվերիա» ու «Մօզզաուրի» և այլն—որ փրփուրը բերինն արշաւում էին հայերի, միշտ հայերի դէմ և միաժամանակ աչքերը փակում թուրք ազալարներին մշտնջենական դաւերի վրայ, թուրք խուժանի սիստեմատիկ նախարծակների վրայ...

«Իվերիան» չէր, որ թիֆլիսի ընդհարումներից յետոյ հրապարակով պահանջում էր քննութիւն կատարել Դաշնակցութեան կատարած դերը պարզելու համար, quasi—մարքսիստ «Մօզզաուրին» չէր, որ խորիմաստ կերպով պատճառաբանում էր.

—«Եթէ հայ պրօլետարիատը դասակարգային գիտակցութիւն ունենար, և չը շահագործէր հայ շօվինիստ բուրժուազիայից ու հողերականութիւնից՝ տեղի չէին ունենայ հայ-թուրքական ընդհարումները»...

Վրացի մարքսիստների բերան-օրգանը դրանով պարզ ակնարկում էր, որ հայ պրօլետարիատը ոչ միայն մեղսակից է ընդհարումներին, այլ և ուղղակի պրօվօկատոր է, որ նա գրգռել ու յարուցել է ընդհարման աղէտը:

Նոյն լեզուն է բանեցնում, նոյն ստայօղ ու չարագործ միտքն է յայտնում և այն նշանաւոր «բէզօլիւցիան», որ վրացական սօցիալ-դէմօկրատիան ձևակերպեց 1906-ի մայիսի 26-ին, թիֆլիսի լիազօրների համագումարում (Պետական Դումայի ընտր. միջոցին).

«Ի նկատի ունենալով, որ կովկասեան արիւնտ իրականութեան խոշոր երևոյթներից մէկը, արսպէս անւանած թուրք-հայկական կոտորածը, անմիջական հետեանք է կառավարչական պրօվօկացիայի, որ հստատաւ էր և բ կ ու թ շ ն ա մ ա ց ա ծ կ ո ղ մ ե ը ի մ ու թ ու ը է ա կ ց ի օ ն ե ը տ ա ը ը և ը ի վ ը ա յ, որոնց կառավարութիւնը ստրի էր կանգնեցնում ու գրդռում ազգաբնակչութեան խողով մասի վրայ, այդպիսով կազմելով քաղաքականապէս բեկեցիօն (յետադէմ) մի բանակ և ուղղելով նրան ընդհանուր ազատագրական շարժման դէմ»...

Ահաւաստիկ առաջին նախադրեալը այդ վրդովեցուցիչ «բէզօլիւցիայի», որ յիշեալ համաժողովը ընդունեց հայ-թուրքական ընդհարումներին առթիւ և յանձնարարեց իր ընտրեալին պաշտպանել Պետական Դումայում:

«Կառավարչական պրօվօկացիան, հաստատուած երկու թշնամացած կողմերի մոտ ու յետադէմ տարրերի վրայ» *): Այս էր արդիւնքը

*) Նօտրագիրը մերն է:

մէկ ու կէս տարի շարունակող հայկական աղետարշ նահատակութեան... Եւ ի՞նչ զարմանք, որ այդ տեսակ յայտարարութիւններից կարող էին ցնծալ թուրք ժողովրդի խուլիզանները, ուրախութեան ծափ կը զարկէին պանիսլամիզմի ու հակայեղափոխութեան այլասեռած շամպլիօնները,—նրանք այլևս մենակ չէին, նրանց հետ միասին տեղաւորում էին միևնոյն սև տախտակի վըրայ, մեղադրեալների միևնոյն աղտոտ նստարանի վըրայ՝ հայ ժողովրդի «մութ ու բէակցիօն տարրերին»... Կովկասեան սօցիալ-դէմօկրատները այդպէս էին որոշել, «արդարութեամբ», «անաչառութեամբ», և պատրաստ էին այդպէս ծանուցանել ամբողջ աշխարհին: Ամբողջ աշխարհը պէտք է իմանար, որ եթէ Կովկասում երկու ցեղեր 18 ամսից ի վեր պատերազմի մէջ են՝ դրանում մեղաւոր են հաւասար չափով երկու ցեղերն էլ: Թուրք տարրը չէ միայն, որ հղօր պատուար է հանդիսանում հակայեղափոխութեան,—այլ և հայ տարրը. նա էլ ենթակայ է պրօֆօկացիայի, նա էլ արտադրում է «մութ ու բէակցիօն տարրեր», որոնք անարգ գործիք են լինում Նակաշիձէների ու Տակալչվիլիների կեղտոտ ձեռքերում. մի խօսքով, հայ ժողովուրդը ևս, թուրք խուժանի պէս, միացած համառուսական խուլիզանութեան, սև-հարիւրակեան շարքերին՝ փչում է եռանդով բէակցիայի ազատասպան կըրակը...

Զազիր ու ոճրագործ սուտ—և զիտակից սուտ, ոչ թիւրիմացութիւն, ոչ մոլորութիւն: Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, որոնց շարքերում այնքան վառ է վրացական նացիօնալիզմը, դիտակցարար, առանց վարանման խեղաթիւրում էին ճշմարտութիւնը և այդպէս վարեկելով, նրանք յաւակնութիւն ունէին խօսելու նոյն իսկ հայ մասսաների անունից... Թշւառ, վատարախտ հայ մասսաներ, ի՞նչ ամարդի ոճիրներ են գործւում քո անունով և սօցիալիզմի հովանու տակ... Թշւառ սօցիալիզմ, ինչպէս անայլայլ թեթևամտութեամբ իմաստակները ամեն քայլափոխում արատաւորում են քո դրօշակը...

Մենք չենք իդէալականացնում հայ ժողովրդին և ամենեկին տրամադիր չենք կարծել, թէ նրա մէջ չը կան մութ ոյժեր, չը կան յետադէմներ. այդպիսի միտք անգամ չի անցնում մեր գըլխով: Հայերի մէջ կարող են լինել շատ մութ ու անզիտակից մարդիկ, նոյն իսկ թուեղ արքայականներ և խուլիզաններ, բայց

նրանք երբէք մասսա չեն կազմել և, որ գլխաւորն է, նրանք երբէք կառարչական պրօվօկացիայի չեն ենթարկուել: Ինքը՝ կառավարութիւնը երբէք չէր յանդգնի գրգռել հայերին իրանց դրացիներէի դէմ, նա գիտէր, որ հայ ժողովուրդը իր ամբողջ էութեամբ, իր ամբողջ պատմութեամբ մի խաղաղասէր ու կուլտուրապաշտ համայնք է, ազատ՝ գիշատիչ, յարձակողական ակտրօ-ժակներից, հետու արիւնալի արկածներից. նա գիտէր այդ և չէր յանդգնի փորձ անգամ անել գրգռելու հայերին. դրա համար նա բնաւ հող չունէր... Եւ եթէ, վեջապէս, par impossible, մոգական գաւազանի մի հարւածով, սրանից մի երկու տարի առաջ պայթէր խմբովին նախայարձակը որևէ տեղ հայերի կողմից իրանց դաւաճութեամբ հարեանների դէմ—ապա կար հրապարակի վրայ այն քաղաքական, կազմակերպած ոյժը—Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը—որ անմիջապէս կը խեղդէր եղբայրասպան ոճիրը և քաւել կըտար նրա սատարող հերոսներին... Սա մի անվիճելի իրողութիւն է, որ չի կարելի ժխտել առանց մեղանչելու ազնուութեան դէմ: Ազիտացիան չը պէտք է միջնացնէ, խեղդէ մեր մէջ բարոյական տարրական պահանջը: Ազիտացիական ինտերեսից դուրս՝ կայ ճշմարտութեան ինտերեսը, աւելի բարձր, աւելի հրամայական՝ որին և միայն պէտք է համակերպենք: Թուրք կալածատէր Զիաթխանօֆն անգամ, Պետական Դումայում արտասանած իր ճառի մէջ—թուրք-հայկական ընդհարումների վերաբերեալ—զգուշացել էր սօցիալ-դէմօկրատական պատճառաբանութեամբ հրապարակ զալ ու պնդել երկու կուռղ ժողովուրդների համահաւասար մեղսակցութեան վրայ:

Ոճիր է, այն, մի արիւնաքամ ժողովրդի զիմաց—որ ինքը մեծագոյն զոհն է բոլոր շարագործ ինտրիզների ու պրօվօկացիաների, որին երեկ բիւրօկրատիան և թուրքական խաւար տարրերի խուլիզանութիւնը պառկեցրել էին շարշարանքի անկողնի վըրայ—ոճիր է, ասում ենք, նետել մի այդպիսի ժողովրդի երեսին անարգական մեղադրանքը, թէ՛ «դու էլ պատճառ ես կղած քո դժբախտութիւնների, դու էլ արտադրել ես՝ «մութ, խուլիզան, բէակցիօն, տարրեր», որոնք թե ևն աւել արիւնածարաւ բիւրօկրատիային և հայաջինջ պօզրօմների պարագլուխներին՝ Նակաշիճէներին, Աւալխանիներին...

Միթէ՞ պարզ չէ այս մեղադրանքի բոլոր նողկալի սը-

տութիւնը: Մթիէ՞ կարող էին առանց խղճահարելու այդպէս տրամաբանել մեր սարսափելի ճգնաժամին սկզբից մինչև վերջ հետևողները, նրանք որ տեսել են, թէ ի՞նչ սանդարամետային դաւերով է առաջացրել Բագւի անդրանիկ կատաստրոֆը, նրանք որ վկայ են եղել Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի հողմանման աղէտներին, որոնք բոլորն էլ նախամտածւած, նախօրօք կազմակերպւած ձեռնարկներ էին հայ ժողովրդի դէմ, նրա կուլտուրական և ֆիզիքական գոյութեան դէմ... Մթիէ կարող են մարդիկ—թէկուզ և անւանւեն նրանք Կովկասեան սօցիալ-դէմօկրատներ—սնդիլ, առանց ճշմարտութիւնն անարգելու և իրանց քաղաքական կուսակցութեան արժանապատուութիւնն արատաւորելու, թէ այդ հայաջինջ աղէտների մէջ, այդ բացարձակապէս հակահայկական արշաւանքների մէջ, նրանց խթանների, պատճառների շարքում որևէ տեղ ունին հայ կոտորուող ու հրդեհուող ժողովրդի «մութ ու բէակցիօնէր տարրերը», թէկուզ հայկական բուրժուազիան, թէկուզ հայկական խուժանը...

Հայ բուրժուազիայի դաւերի վրայ ևս սիրում է ծանրանալ վրաց ինտելիգենցիան, մասնաւորապէս ս.-դ.-ները. սիրում են նրանք խօսել այդ դասակարգի «ազգային առանձնացման» ճրգտումների մասին շօլիխիզմի ու յարձակողական տրամադրութիւնների մասին և այլն:

«Հայ բուրժուազիան քարոզել է հայ ժողովրդական մասսաների մէջ ազգայնական առանձնացում և այդպիսով պարարտ հող է պատրաստել պրօվօկացիայի համար»,—այդպէս էր յայտարարում Վլադիկաւկազի ս.-դ.-ական «Голосъ Кавказа»-ն իր 1906-ի № 2-ի մէջ, ի պատասխան մեր մի յօդւածին, ուր քննադատել էինք սօցիալ-դէմօկրատիայի խաղացած դերը թուրք-հայկական անցքերի մէջ:

Չեռնհաս, խիստ ձեռնհաս են այդ պարոնները, մեր հայկական իրականութեան դէմ դատաւճիռներ արձակելիս...

Զրկայ գուցէ ամբողջ Ռուսաստանում, ամբողջ աշխարհում մի այլ բուրժուազիա, որ այնքան հեռու լինէր նեղ-ազգայնական մտահողութիւններից, որ այնքան քիչ կապւած լինէր իր ազգային ստացւածքների հետ, ինչպէս հայկականը: Նա իր մայրենի լեզուն անգամ դուրս է վտարել իր ընտանիքներից—լեզուն՝ որ ազգայնութեան էական խարխիսն է, նա յօժարակամ օտարախօս է—էլ ի՞նչ են դալիս շարունակ ճառում մեզ հայ բուրժուազիայի

նեղ ազգասիրութեան, շօվինիզմի, «ազգային պետութիւնը» վերականգնելու ձգտումների մասին և այլն... Դրանք բոլորը ծնունդ են միայն թերուս ու անուս իդէօլօգների երեակայութեան, — իդէօլօգների՝ որոնք հասարական ամեն մի երևոյթի քննութեան մէջ տեղի-անտեղի խոթել են ուզում իրանց սերտած, միանգամ ընդ միշտ բիւրեղացած ֆորմուլաները բուրժուազիայի, պրօլետարիատի, դասակարգային անտագօնիզմի մասին:

Շօվինիստ—հայ բուրժուազիան...

Մենք գիտենք, ճանաչում ենք ուրիշ բուրժուազիաներ, ճնշած, պատմական ազգութիւնների մէջ—Լեհաստանում, Իրլանդիայում, Յունաստանում, որոնք յիրաւի լցւած ազգային նախանձախնդրութեամբ, գիտակ իրանց հաւաքական ճակատազրին, ուրոյն պատմական առաքելութեան՝ ամփոփել են իրանց ազգայնական շրջանակների մէջ և յամառ ու յարատե պայքար են մղել շրջապատող բռնաւոր ուժերի ռոմնօգութիւնների դէմ, ռուսացման, անգլիացման, թիւրքացման վտանգների դէմ— և լաւ են արել նրանք, այդ բուրժուազասակարգերը, նրանք բացասական գործ չեն կատարել. այդ նացիօնալիզմը մի դրական ֆակտոր է մարդկային պատմութեան մէջ, առանց նրան Լեհաստանը, Յունաստանը, բոլոր փոքրիկ ու հալածական, օտար լծի տակ հեծող ազգերը պիտի լուծւէին իշխող տարրերի մէջ, պիտի կորչէին, իբրև ուրոյն, առանձնայատուկ միութիւններ, իսկ դա կը լինէր անդառնալի կորուստ մարդկութեան համար, որը, ձիշտ է, ուզում է մէկ լինել, ներդաշնակ լինել ու անբողջական, բայց ոչ միակերպ ու միապաղպղ, այլ բազմօրինակ և պլատարբ:

Այո, այդ նացիօնալիզմը, որ նոյնանում է ազգային իրաւունքների արգար ու օրինաւոր պաշտպանութեան հետ, նոյն իսկ այդ ինքնամփոփ, «բուրժուազական» նացիօնալիզմը մի դրական ու արգասաւոր գործօն է մանր ու ստրուկ ազգերի կեանքում. բայց կան, եղբէր է նա հայ բուրժուազիայի մէջ...

Թող լաւ իմանան մեր իրականութեան մասին այնքան սպաւումով ճոռմաբանող ս.-դ.-ները, որ հայ բուրժուա ու վաճառական դասը այն չէ, ինչ որ նրանք են իրանց պատկերացում, որ այդ դասակարգը հայոց վերածնութեան առաջին օրերից, Նազարեանի ու Նալբանդեանի ժամանակից ի վեր քարկոծել է միշտ հայ գրականութեան ու հրապարակախօսութեան մէջ և քարկոծ-

ւել է հէնց այն պատճառով, որ զուրկ է հայրենասիրական, ազգայնական ոգուց, որ նա, չնչին բացառութեամբ, անտարբեր է եղել միշտ դէպի ազգային ստացածքները, լեզուն, մամուլը, գրքականութիւնը և այլն, որ նա չի պայքարել բռնի ձուլման, բռնի ուսացման ձգտումների դէմ, այլ ընդհակառակը հանդէպ է դնացել այդ ձգտումներին, որ նա ընդհանուր առմամբ արհամարհել է, անտես է առել նաև իր ազգային-քաղաքական դատը թիւրքահայաստանում, ամենազօրախտն ու ամենաարիւնոտը բոլոր դատերից, արհամարհել է այդ դատը փաստաբանող, նրա համար մարտնչող յեղափոխական երիտասարդութիւնը, խուլ-համբ է ձևացել նրա սրբտառուչ յորդորների և օգնութեան ազադակների դիմաց... Հասկան՞ում են սօցիալ-դէմօկրատիզմի բոլոր օտար ու հայ նէֆօխները, թէ ինչպէս նրանք խեղաթիւրում են մեր իրականութիւնը, դուրս բերելով մեր ուլտրա-կօսմօպօլիտ բուրժուազիային, (ծոյլ ու անգոյն, ¹⁰² ¹⁰³ ապազգայնական կօսմօպօլիտիզմն է դա, որ ոչ մի ուրիշ պետութիւն չի ճանաչում, բացի դրամի անսահման, անարգ պաշտամունքից), իբրև ազգայնամոլ մի դասակարգ, որ իբր թէ տողորւած է ծայրայեղ հայրենասիրութեամբ, ազգայնական առանձնացման ու տիրապետութեան բաղձանքներով: Հասկան՞ում են նրանք, որ իրանց խակ դատողութիւններով ու մեկնութիւններով միայն հայակեր Սուլօրիների կրակին են իւղ ածում...

Ազգայնամոլ երբէք չի եղել և հայ լիբերալիզմը: Սօցիալիստ լինել—չի նշանակում ծուռ, խարդախ լինել, աղաւաղել ու կեղծել իրողութիւնը և առհասարակ անազնիւ միջոցներով դուրս գալ ոչ սօցիալիստ հակառակորդի դէմ: Սօցիալ-դէմօկրատ լինել չի նշանակում միեւնոյն ֆօրմուլային, միեւնոյն ընդհանուր յայտարարին վերածել աշխարհիս բոլոր լիբերալ, ազատամիտ կուսակցութիւնները: Շօվինիստ, նեղ ազգամոլ երբէք չի եղել և հայ լիբերալիզմը: Մեր խօսքը, ի հարկէ, այժմանի մասին չէ, որ քարշ է տալիս մի անդամալոյծ ու յուսահատ գոյութիւն, մենք խօսում ենք անցեալի լիբերալիզմի մասին, որի տաղանդաւոր ու հուժկու ներկայացուցիչն էր Արծրունին: Երբէք նա չի դաւանել այն մարդատեսաց, օտարամերժ շօվինիզմը, որ յատուկ է օրինակ գերմանական նացիօնալ-լիբերալներին, բիւսարկեանութեան պատուար կուսակցութեան: Ընդհակառակը: Եօթանասնական թւականներից նա քարոզել է միշտ թուրքին, վրացուն, ուսին, քրդին,

բոլոր ժողովրդներին՝ համերաշխութեան աւետարանը, կուել կատարութեամբ վրացական թթու ազգասիրութեան դէմ, պատեւրազմ է յայտարարել ազգայնական ամեն տեսակ նախապաշարմունքներին,—մի բան, որ այսօր սօցիալիստ կուսակցութիւնները շարունակում են միայն:

Որոտալով սկզբից ի վեր Դաշնակցութեան ու հայ բուրժուազիայի «պրօլօկատօրական» գործունէութեան դէմ, ս.-դէմօկրատ. ֆրանֆարտութիւնը շեշտում է յաճախ իր հերոսական սիրագործութիւնների վրայ, պնդում է, որ մենք ոչինչ չենք արել հակայեղափոխական արշաւանքների դիմաց և որ իրանք ս.-դէմօկրատներն են մղել անհաւասար կռիւր թէ բռնապետութեան և թէ հակայեղափոխութեան դէմ: Նոյն, վերը յիշած օրգանի № 2-ի մէջ սօցիալ-դէմօկրատիայի ձեռնհաս փաստաբանը բացականչում էր, դիմելով մեզ, դաշնակցականներին.

—«Գոնէ պիտի յարգէք այն կռիւր, որ ուղղած էր դէպի անմիջական պաշտպանութիւնը հայկական կուսակցութեան, գոնէ պիտի յարգէք այն արիւնը, որ թափւած էր ձեր ընտանիքների պաշտպանութեան համար: Մոռացել էք դուք նոյեմբերեան օրերը Թիֆլիսում ու Բագում, երբ կազմակերպւած պրօլետարիատը բռնել էր ամենավտանգաւոր դիրքերը»:

Որքան ընորոշ է այս պաթեթիկ և ստալոյ բացականչութիւնը: Եւ որքան նման է, ընթերցող, նոյն կուսակցութեան ժընեհան օրգանի, «Искра»-ի արդէն յիշատակած յայտարարութեան:

—«Փետրւարեան օրերում (սոսջին կոտորածին) Բագում պաշտպանեցին բոլոր ազգութիւնները շտապով կազմւած բանուորական խմբերը»...

Կարճը էք հաւատալ, ընթերցող, որ մի գաղափարական կուսակցութիւն, այն էլ սօցիալիզմի անունից խօսող, թոյլ տայ իրան, իր օրգանների մէջ, այսքան հրէշաւոր ալլանդակ կեղծիք...

Սահմանները ջնջւում են բարոյականի ու անբարոյականի, ճշմարտութեան ու ստույթեան միջև և մենք ապշանքով ենք դիտում այն գարհուրելի և անբուժելի անտարբերութիւնը, որ իշխում է ս.-դէմօկրատների մէջ, զրական էտիկայի վերաբերեալ բոլոր հարցերում: Եւ քանի քանի նոյնանման դէպքեր՝ որոնք ցատում են բերում ճշմարիտ յեղափոխականներին և վարկարեկում են սօցիալիզմի վարդապետութիւնը...

«Մոռացել էք, որ... կազմակերպւած պրօլետարիատը բռնել էր ամենավտանգաւոր դիրքերը»...

Ոչ, չենք մոռացել մենք այդ օրերը: Յիշում ենք սօցիալ-դէմօկրատական դժբախտ «միջնորդութեան» բոլոր բացասական հետեանքները, Դաշնակցութեան ուժերի կաշկանդելը և բօրչալ-ւեցիների ազատ մուտքը Թիֆլիսի դռներով, յիշում ենք սօցիալ դէմօկրատների ողբալի դասալքութիւնը (désertion), յիշենք, ինչպէս յուսախար մնաց նա իր միամիտ բէդօնէօրութեամբ, ինչպէս մի զոհ տալուց յետոյ փոքրօգութեամբ քաշուց ասպարէզից, թողնելով Դաշնակցութիւնը մին-մենակ՝ ամբողջ Թիֆլիսին սպառնացող բարբարոսութեան յորձանքի առաջ, մենք չենք մոռացել և այն՝ թէ ինչպէս Բագււի առաջին մեծ արիւնյիղութեան միջոցին «կազմակերպւած պրօլետարիատը» իր քաջարի ու սանձարձակ առաջնորդներով չքացել էր, անկիւնները մտել, թէ ինչպէս նոյն Բագււի յետագայ պօզրօմների ընթացքում թուրք խուժանը գործարաններից, «կազմակերպւած պրօլետարիատի» շարքերից որսում էր հայ աշխատաւորներին—ինչպէս ուռկանով կը որսան ձկներին—և նոյն «կազմակերպւած պրօլետարիատի» աչքերի առջև մորթոտում էր նրանց... Թէ ինչպէս Դաշնակցութիւնը, միշտ միայնակ, միշտ իր ռադմական պօստի վրայ, ճգնում էր յետ մղել խուլիզանական, հայակործան արշաւանքը և դարձեալ շարունակ ամբաստանւում էր ու անւանարկւում սօցիալ-դէմօկրատ ֆրակտօրների կողմից... Ոչ, մենք երբէք չենք մոռանայ, հայ աշխատաւորը երբէք չի մոռանայ այդ արիւնոտ իրողութիւնները, որոնք անարգանք են ամբողջ առաջադէմ կովկասի համար:

*

Սօցիալ-դէմօկրատական շահատակութիւնները հայ-թուրքական անտագօնիզմի հողի վրայ անցան ամեն չափ ու սահման: Նրանք երբեմն այնքան հրէշաւոր էին, այնքան այլանդակ, որ ուղղակի դժւարանում էինք հաւատալ և ընդունել նրանց իբրև ստոյգ իրողութիւններ: Լսեցէք թէկուզ այս մի փաստը.

Անցեալ 1906 թւի ապրիլին Բագււում մի սօցիալ-դէմօկրատ պարոն հրապարակական մի ճառ է արտասանում, որից մի կտոր տպւում է տեղական Баку լրագրում և այնտեղից անցնում է «Յառաջի» էջերը: Ահա այդ զարմանալի ճառի կտորը, որ թարգ-

մանարար զետեղած է «Յառաջի 1906 թ. ապրիլի 22-ի համարում (№ 76)».

«Քանի որ Կովկասեան տարբեր ազգութիւնների զարգացման մակերևոյթը անհասար է, ուստի որպէս զի հող չըստեղծելի վոխադարձ ընդհարումների համար—չըպէտք է թոյլ տայ, որ այս կամ այն ազգութիւնը երբ և իցէ անէ մի այնպիսի կուլտուրական քայլ, որին դեռ ևս յարմարած չէ միւս պահաս կուլտուրական ազգութիւնը: Ծիշտ է, զբա շնորհիւ առաջին ազգութիւնը արհեստականօրէն պիտի յետ մնայ իր զարգացման մէջ, բայց Տէրը նրա հետ՝ մի այդպիսի զարգացման՝ կթէ նա պէտք է առաջացնէ պոզիտիւսեր և հրդեհներ»...

Աքանչացէք, գոհնիկ մտքի այս հիւանդոտ արտադրութեամբ, որ ից անծայր դիմադրութիւն ու վարշանք է բուրում: Դուրս է գալիս, որ հայ ժողովրդը պիտի կաշկանդէ իր քաղաքակրթական տենչանքները, իր երազները, պիտի խեղդէ առաջադիմութեան իր ծարաւը, որպէս զի յարմարելի, հասարակի իր մահմեդական հարեանին, որպէս զի չը ծագեն ընդհարումներ...

Աս, կրկնում ենք, թւում է մի այլանդակ առասպել, բայց իրօք մի սովորական նորմալ բան է Կովկասեան սօցիալ-դէմօկրատիայի սանձարձակ Ֆրադէօլօգիայի մէջ:

Շատ ծանրացանք, բայց մեզ պէտք է մի երկու փաստ ևս յիշատակել, որոնք ընտրողում են այդ կուսակցութեան վայրենի մտալիճակը (mentalite') և նրան խեղաթիւրւած մօրալը. փաստեր, որոնք ցոյց են տալիս մասնաւորապէս վրացի սօցիալ-դէմօկրատներ Նեղսիբտ, աշտոտ վերաբերմունքը դէպի հայ ժողովուրդը և նրա պաշտպան կազմակերպութիւնը:

Պէտք է նկատել, որ նոյն վերաբերմունքը, նոյն շօվինիստական տրամադրութիւնները ցոյց են տալիս, տարաբախտաբար, և վրացի սօցիալիստ-ֆէդերալիստները, որոնք սկզբից հակամիտ էին ձեռք ձեռքի տւած ընթանալու «Դաշնակցութեան» հետ, իբրև ճրագրով ու տակտիկով իրանց նման մի կուսակցութեան:

1905 թւի վերջին ամիսներում սօցիալիստ-ֆէդերալիստները համաձայնութեան եկան Դաշնակցութեան հետ՝ հիմնելու մի օրգան ընդհանուր ուժերով և ծառայիցնելու այն՝ ընդհանուր դատին: Օրգանը հիմնեց «Возрождение» անունով և իմրադրութեան կազմի մէջ մտաւ Դաշնակցութեան մի ներկայացուցիչը, իբրև թերթի ղեկավարներից մէկը: Ընդհանուր համաձայնութեամբ՝ թերթը պէտք է նւիրւած լինէր բոլոր ժողովուրդների շահերին,

նա պէտք է արծարծէր անխտիր կերպով համակովկասեան իրա-
կանութեան մեծ հարցերը և պիտի լուսարանէր, ի միջի այլոց,
օրեկաբար, անաչառ կերպով հայ-թուրքական ընդհարման պրօբ-
լեմը,—այդ իրականութեան ամենացաւոտ, և ամենահրատապ խըն-
դիրը: Եւ հայկական բաժինը յանձնուեց «ղաշնակցական» խմբա-
գրին:

Սակայն, հէնց առաջին քայլերից սկսեց ցոյց տալ իրան՝
վրդովեցուցիչ շովինիզմը և տենդենցիօզ ու աչառոտ վերաբեր-
մունքը դէպի կուռղ կողմերից մէկը—դէպի հայերը: Վրացի «ըն-
կերները» սկսեցին ճնշել հայ ընկերոջ և իրանց խմբագրած յօդ-
ւածների մէջ փակեցին աչքերը «կովկասեան վանդէականների»
շահատակութիւնների վրայ և սխտեմատիկաբար աշխատեցին
սուեր ձգել ոչ միայն հայ տարրի, այլ և այն կազմակերպութեան
վրայ, որի ներկայացուցիչը հրաւիրւած էր նրանց կողմից, իբրև
խմբագրութեան անդամ: Յարաբերութիւնները սրեցին և այդ
վերջինը կազմակերպութեան որոշումով, հրաժարուեց խմբագրու-
թիւնից:

Հետաքրքրական է այդ հրաժարականի պատճառաբանութիւ-
նը, որ Դաշնակցութեան ձեռնհաս մարմինը խմբագրել էր իր
ժամանակին և ուղղել էր «Возрожденія»-ի վրացի խմբագրապե-
տին: Քաղում ենք այնտեղից մի քանի կէտեր.

1. «Դուք ձեր հաւանութիւնը տւիք մի յօդւածի, որ քննում էր մամուլի
դերը հայ-թուրքական ընդհարումների մէջ և որում առած էր, թէ մեզ ա-
ւսրը հայերն են, քանի որ նրանք իբր թէ ձգտում են Մեծ Հայաստա-
նի վերակառուցման: Այդ յօդւածը չըտղագրուեց միայն շնորհիւ խմբագրութեան
քարտուղար պ. Սօխոյօվսկու և մի քանի ուրիշ անդամների ուժովն բողոքին:

2. Թերթի հայկական բաժնի մէջ, հակառակ նրա խմբագրողի կամքին
այնպիսի կրճատումներ և ուղղումներ էիք անում, որոնցից յաճախ զրածը կորց-
նում էր իր իմաստը:

3. Դուք տպագրութեան յանձնեցիք ուսս պահպանողական օրգաններ
աշխատակից է. Լ-ինի մի յօդւածը «Կովկասեան գործերի» մասին և դարձեալ
միայն շնորհիւ նոյն Սօխոյօվսկուն և հայոց բաժնի խմբագրողին՝ աջողեց դուրս
հանել շ ա Ր ւ ա ծ ք ի յ այնպիսի կտորներ, որոնք կարող էին միայն զղանք
յարուցանել: Նոյնիսկ այն ձևով, ինչպէս այդ յօդւածը այնուամենայնիւ անցաւ,
նա յայտնում է անբարեխիղճ:

4. Ձեր թերթի մէջ տպւած էր, որ Թիֆլիսի ընդհարումներում քնատւած
մահմեդականների մեծամասնութիւնը պ ա ր ս կ ա հ պ ա տ ա կ ն ե ր են:
Եւ իբր մեր ընկերը, հիմնւած պարսից հիւպատոսարանական պաշտօնեայի վկա-
յութեան վրայ, հերքում զրեց՝ Դուք զետեղեցիք հերքումը, բայց հարկ համտ-

րեցիք դուրս ձգել հետևեալ նախադասութիւնը. «հիւպատոսը կարող է հաստատել, որ միմիայն «Դաշնակցութեան» ձեռքով հիւպատոսարան են բերւած ոչ պակաս, քան 150 մարդ»:

5. Դուք ստացաք, ուրիշ տեղական թերթերի հետ միասին, հեռագիր Շուշուց (անս Возр. № 22), որ Դուք կրճատեցիք, իսպառ անճանաչելի դարձնելով, (сократили до неузнаваемости). Դուք նրանից դուրս ձգեցիք այս ֆրազը, թէ «հայերը արձակեցին բռնւած թուրքերին», հանցիք և այն կտորը, որ վերաբերում է Դաշնակցութեան ձգտումներին: Եւ, սակայն, Դուք ստում էիք, թէ ձեր թերթը մտամբ այդ կուսակցութեան օրգանն է...

6. Դուք ստացաք մի թղթակցութիւն Զուգդիզի դատոյց, ուր գրւած էր գաւառապետ Գ և դ ա մ օ վ ի ք ը տ մ ն է ի արարքն ր ի մ ս ի ն, և Դուք հարկ համարեցիք այդ անունը յիշատակելիս, աւելացնել փակագծի մէջ՝ «ծ ա դ ու լ մ ո վ հ ա յ»:

7. Դուք հնարաւոր դտաք տպագրել առանց որեէ տոարկութեան պ. Զրելայելի յօդւածը, որ ձգնում է վերականգնել Տակաշվիլու վարկը,—մի մարդու՝ որի անարժան ընթացքի մասին այնքան անգամ յիշատակւած էր ձեր լրագրում:

8. Վերջապէս, Ձեր օրգանի կերպարանքը կատարելապէս որուէ կերպիւն սրբեում, իբր Դուք, փոխանակ «անաչառ ու հանգիստ կերպով քննելու» թուրք-հայկական ընդհարումները պատճառները—ինչպէս որ խոստացել էիք դեռ լրագրի առաջին համարում—Դուք զանազան ակնարկներով, կիտաակնարկներով, նոյն իսկ բացարձէ յայտարարութիւններով, հատկացրիք՝ որ թ շ ն ա մ ա ր ա ր էք արամադրւած դէպի հայերը...

Ահա այդ ուշագրաւ զօկումննտը, որ իր կարճութեամբ իսկ այնքան լոյս է սփռում վրաց ինտելիգենցիայի տրամադրութեան վրայ: Եւ այդ տգեղ արարքների հեղինակները, որոնք չեն քաշւում ծաւալելու աշխարհի առաջ իրանց անգուսպ հակակրանքը, դէպի մի ժողովուրդ—դրանք դեռ սօցիալիստներ են, դրանք դեռ այդ ինտելիգենցիայի լաւագոյն տարրերն են...

Ո՛րպիսի թշւառութիւն...

Այդ պարոնները, որ այնքան կատաղի ու անողորմ են հայ բուրժուազիայի, հայ ժողովրդի ու Դաշնակցութեան վերաբերմամբ, որ պատրաստ են բոլոր յանցանքը ծանրաբեռնել այդ տարրի վրայ,—նրանք սիրով կը կուրանան իրանց հարազատ ազնւականութեան զգւելի պրօվօկատօրական արարքների հանդէպ,—ազնւականութեան՝ որ հայ ժողովրդի արիւն-օրերում այնպէս դէմօնատրատիւ եղբայրանում էր թուրք բէկութեան հետ և ներբողալի ճառեր արտասանում նրա հասցէին...

Պրօվօկատօրական ընթացք է բռնել հայ ժողովրդի և Դաշնակցութեան նկատմամբ... հէնց ինքը վրացական սօցիալ-դէմօկրատիան: Այդ կուսակցութիւնը, որ, ինչպէս տեսանք, սկզբից ար-

դէն տրամադիր էր Դաշնակցութիւնը մեղսակից ճանաչելու թուրք-հայկական ընդհարումների մէջ, վերջերս բացարձակ զրբ-գոռումների ճանապարհն է բռնել. գիտակցարար է թէ անգիտակցարար—չը գիտենք, բայց նա ոչ մի միջոց չի խնայում բորբոքելու առանց այն էլ վառ անտապօնիզմը, նոր անուսդ տալու արդէն հանգստացող կրքերին և թւում է թէ ոչնչով չի զանազանւում Աղայեաներից ու «Իրշադականներից»:

Յիշենք միայն մի փաստ, շատերից մէկը. մի դօկումենտ՝ ոչ պակաս ուշագրաւ, քան նախընթացը. մի պրօկլամացիա, մի անօրինակ ու անորակելի թոռլցիկ, որ կովկասեան ս.-դէմօկրատիւան հրատարակեց ներկայ յունւարին, ընտրողական պայքարի ասամենասուր վայրկեանում, երբ նա իր դէմ տեսնում էր միայն մէկ հատիկ ուժեղ կուսակցութիւն—Դաշնակցութիւնը: Այդտեղ, այդ աննման դօկումենտի մէջ հարազատութեամբ ցոլում է մեր երկրի ս.-դ.-ների բարոյական ամբողջ պատկերը, որ իր բարեմասնութիւններով, անշուշտ, եզակի է սօցիալիստական աշխարհում: Թոռլցիկը ամբողջապէս ուղղւած է, ի հարկէ, Դաշնակցութեան դէմ, որին նա ձուլում է միեւնոյն բանակի մէջ ուս խուլիզան «պատրիօտների» հետ: Այդտեղ բառացի ասւած է հետեւեալը.

„Дашнакцаканы натравливали армянскій пролетаріать и армянское крестьянство, все армянское общество на остальные націи и прежде всего на татарь. Своей дѣятельностью въ этомъ направленіи они вызвали армяно-татарскую рѣзню, а дальше убивали беззащитныхъ татарь, грабили и жгли татарскія селенія, уничтожали имущество татарь, растаскивали ихъ добро“...

«Դաշնակցականները զրգոռւմ ու լարում էին հայ պրօլետարիատին, հայ գիւղացիութիւնը, հայ ամբողջ հասարակութիւնը՝ մնացած ազգերի վրայ և ամենից առաջ թուրքերի վրայ: Այդ ուղղութեամբ ունեցած իրանց գործունէութեամբ նրանք առաջ բերին հայ-թուրքական կոտորածը և այնուհետև ըստպանում էին անպաշտպան թուրքերին, թալանում ու այրում էին թուրքական գիւղերը, սնչացնում էին թուրքերի գոյքը»...

Մեկնութիւններն աւելորդ են: Զրպարտութեան ու ցինիզմի դազաթնակէան է դա, որից հետոն անցնել չի կարող ամենաւնկաժ կուսակցութիւնն անգամ: Դաշնակցութիւնը պարզապէս ներկայացւում է, իրրև խթան-պատճառ թուրք-հայկական ընդհարումների: Իսկ թուրք տարրը—իրրև զոհ... Եւ այդ թոռլցիկի

մէջ դուք կը տեսնէք խիստ գունավառ նկարագրութիւն թուրք
գիւղերի ակերածութեան ու կոտորածի: Իսկ հայ ժողովրդի կրած
ջարդերն ու սոսկումները... Իա հաշիւ չէ: Այդ հարցի վրայ առ-
հասարակ չեն սիրում ծանրանալ ս.-դ.-ական թուլցիկները: Հայ
ժողովրդի ցաւերի մասին շատ քիչ կը խօսուի, կամ կը խօսուի թուլ-
ցիկ ու կցկտուր կերպով և այն էլ սովորաբար՝ միայն պրօլետարիա-
տի մասին, որ մի չնչին բեկորն է տառապող բազմութեան: Թո՛ղ
որ նա ինքը, հայ ժողովուրդը, նոյնիսկ յանձին իր «յետադէմ
տարրերի» երբէք չի ցանկացել և չի նպաստել եղբայրնասպան
կոիւնեւերին, թո՛ղ որ մեր զբացիների սիստեմատիկ նախաարձակները
յայտնի են ամբողջ լուսաւոր աշխարհին... Այդ միևնոյն է. կով-
կասեան ս.-դ.-ները մի բուժ ու նողկալի անգիտակցութեամբ
պլիտի ներկայացնեն միշտ թուրք մասսաններին իբրև գոհ և Դաշ-
նակցութիւնը՝ իբրև դահիճ...

Եւ ի՞նչ գարմանք, որ միշտ էլ կը ծաղկեն պրօլօկացիայի
ոճիւրները մեր հողի վրայ, միշտ էլ կը ցնծան բոլոր հայակեր ճի-
ւադները այդ հրապարակական quasi-խոստովանութիւններից,
միշտ էլ անբախտ հայ ժողովուրդը կը տառապի ու կարիւնտաւի,
քանի դեռ իր շուրջը վիտացող «գաղափարական» ս.-դ.-ներն ան-
զամ գիտակցաբար թէ անգիտակցաբար պրօլօկատորների պաշտօն
կը վարեն Անդրկովկասում, քանի դեռ նրանք անպատկառութեամբ
կը շփորեն ամեն տեղ, թէ Դաշնակցութիւնը, հայ ժողովրդի մի
սոււար մասը, նրա ամենահեղինակաւոր մարմինը травля-ներ է
կազմակերպում ազգերի միջև...

Երևակայում է՞ք, ընթերցող, թէ ինչ տպաւորութիւն կարող
են անել վերոյիշեալ սողերը թուրքական սև-հարիւրակեանների
և նոյնիսկ թուրք բարեմիտ հասարակութեան վրայ: Երևակայո՞ւմ
էք, թէ ինչպէս կարող են անդրադառնալ տասնեակ հազարներով
տարածւող այդ պրօլօկատորական թուլցիկները կովկասեան միւս
հասարակութիւնների մտածողութեան վրայ, թէ ինչպիսի վայրե-
նի հասկացողութիւն կարող են նրանք կազմել հայ ժողովրդի և
նրա կուսակցութեան մասին... Նրանք չէ՞ որ գիտեն, որ այդ
պրօլկամացիաները խմբագրող կազմակերպութիւնը բացառապէս
վրացիներ չեն, որ նրա մէջ կան նաև հայ անուն կրող ասպետ-
ներ, որոնք իբր թէ ձեռնհաս և լաւատեղեակ են իրողութիւն-
ներին, բայց որոնք մի ստոր, դաւաճանական խաղ են խաղում

իրանց ժողովրդի հետ: Վրացի շովինիստ ս.-դ.-ները պարզապէս գրգռում են հայ ժողովրդի դէմ թուրքերին ու վրացիներին, իսկ նրանց հայազգի ընկերները, իբրև խակ քաղաքական մանուկներ՝ կոյր գործիք են դառնում առաջինների ձեռքում: Այդպէս է վկայում հրատարակած բազմաթիւ «պրօկլամացիաների» ոգին... Կովկասեան սօցիալ-դէմօկրատիան սկզբից ի վեր ցոյց է տւել խոր, արհամարհոտ անտարբերութիւն դէպի հայ ժողովրդի ճակատագիրը, անգամ ամենասև, կրիտիկական վայրկեաններում, երբ այդ ժողովրդի զոյւթեան խնդիրն էր դրւած հրապարակի վրայ: Նա արհամարհում է և այն սարսափելի ճակատամարտները, որ հայ ժողովուրդը Դաշնակցութեան առաջնորդութեամբ մղեց վերջին ադէտներէ ընթացքում խուժանային բարբարոսութեան և հակայեղափոխութեան դէմ: Նա արհամարհում է և Տաճկաստանում մղւած կռիւների արիւնոտ էպօպէան, որ նրա բոցավառ թռուցիկների մէջ ներկայացնում է, իբրև մի խղճուկ «աւանտիւրա», իբրև մի արկած և «բէակցիայի մի բէգբը» ուսահայերի և Դաշնակցութեան համար: Մի խօսքով՝ Դաշնակցականների վարած բոլոր կռիւները — հակայեղափոխութիւն են, բէակցիա են...

Եւ այդպէս, հակահայկական պրօվօկացիան սլանում է на всѣхъ парахъ սօցիալ-դէմօկրատիայի թևերի վրայ և Կովկասեան ուսատառ մամուլն էլ սիրով արձագանք էր տալիս նրան. դանազան մարդիկ, կասկածելի բարոյականի տէր, սօցիալիստական ծիրանի հագած, «յանուն միջազգային պրօլետարական համերաշխութեան» և ուրիշ սովորական Schlagwort-ների, ամեն առթիւ ծանուցանում էին այդ ուսատառ մամուլի մէջ հարևան օտար հասարակութիւններին, որ Դաշնակութիւնը իր օրդանով և մարմիններով շարունակ գրադում է պրօվօկացիայով, որ նա գրգռում է թուրքերին, վրացիներին, որ «հայ նացիօնալիստները (դաշնակցականները) ուզում են ստեղծել արհեստական անջրպետներ Անգրեկովկասի ազգերի միջև, ուզում են այդ ճանապարհով մթնացնել աշխատաւորի դասակարգային ինքնագիտակցութիւնը և այդպիսով ամբապնդել այն անօրմալ, թշնամական յարաբերութիւնները, որոնք ստեղծւած են վերևից, իշխող դասակարգերի կողմից»):...

Աղաւաղել իրականութիւնը, աղաւաղել ու այլանդանկել մի

*) Տես «Тифлисскій Листокъ» 1906 թ. № 85.

քաղաքական կազմակերութեան ամբողջ գաւանանքը, ամբողջ տակտիկան, ջնջել ու դուրս մղել այդ կազմակերպութիւնը Կովկասեան հօրիզօններէից—ահա մի ակներև, յամառ ու անդրդուելի ձգտում, որ արտայայտուում է մեր բոլոր բազմապիսի հակառակորդների մէջ:

Դաշնակցութիւնը—նացիօնալիստ, ազգամուլ. Դաշնակցութիւնը—բուրժուազիայի շահերի պաշտպան, բուրժուական մի կուսակցութիւն. Դաշնակցութիւնը—մի սև, յետադէմ ոյժ, բոլոր խաւար ուժերի մարմնացումը, որ ձգտում է միայն կուեցնել ազգերին... Soit! Բայց փաստերը հրապարակի վրայ են և միայն յօժարակամ կոյր ու խուլեր կարող են անտես առնել նրանց:

Ահա թէ ինչպիսի թոռացիկներով էին դիմում ժողովրդներին՝ Դաշնակցութեան մարմինները թուրք-հայկական բռնկումների միջոցին, սկսած Բագրի արիւնոտ օրերից.

1.

Բ Ա Գ Ի Ի Թ Ո Ի Ր Ք Ե Ր Ի Ն

Մեր քաղաքը արիւնալի, ամօթաբեր դարձողութիւնների սուպարէզ էր դարձել:

Չորս օր ականատես և ակամայ մեղսակից էինք անմիտ, զզուելի եղբայրասպանութեան:

Թափուեց շատ անմեղ արիւն, ընկան բազմաթիւ մարդկային դոճեր:

Հարեանը զինուեց հարեանի դէմ և սկսեց կոտորած՝ վայրենի, անփութառունակ, ամօթաբեր:

Թէ ո՞ւմ վրայ է ընկնում այդ սարսափելի օրերի պտտասխանատուութիւնը—մենք դեռ յետոյ կը վերադառնանք դրան:

Այժմ անկեղծ սրտով ողջունում ենք վերականգնւած խաղաղութիւնը և ցանկանում ենք, որ դա լինի ամուր և ընդամիշտ, որովհետև զխոնք և լաւ յիշում ենք, որ ոչինչ բաժանելիք չունենք թուրքերի հետ: Մենք չունենք միմեանց հակառող շահեր և թէ գէնքի դիմեցինք, այդ միմիայն նրա համար՝ որ ստիպւած էինք պաշտպանել մեր պատիւը, մեր կեանքն ու մեր գոյքը:

Բայց հէնց որ հնչեց խաղաղութեան հրաւերի առաջին կոչը, մենք թեթեացած սրտով ցած գրեցինք հ ա Ր և ա ն ն ե Ր ի ա Ր Լ և ն ո վ ն ե Ր Կ ւ ա ծ մ ե Ր գ է ն ք ե Ր Ը:

Այդ արիւնին մենք ծարաւի չէինք և չենք էլ ծարաւել երբէք: Մեծ զրգւանքով ենք յիշում դեռ նոր անցած օրերը և գործ կը դնենք մեր բոլոր ուժերը, որ նրանք այլևս չըկրկնեն:

Հէնց նոյն այդ հաշտութեանն ենք հրաւիրում ձեզ, մահմեդականներ, մի

փնտրէք թշնամուն այնտեղ, ուր նա չըկայ և մի գործածէք ձեր զէնքերը այնպիսի մի գործում, որը կը ծածկէ ձեզ ոչ թէ փառքով, այլ ամօթով:

10 փետր. 1905

2.

Այս դառն ու արիւնալից օրերում Հ. Յ. Դաշնակցութիւնը նորից կոչ է անում հայ ու թուրք ժողովրդին: Նա դիմում է ձեզ, աշխատաւոր, ժողովուրդ, ձեզ, որ կրճբի վրայ տանում էք տանջանքի ու ցաւի բեռը, ձեզ, որ քամում էք դաւաճանների ու սճրագործների եղբայրասպան յանցանքի դառնութիւնը: Նւ տան ամիս է, որ սկսել է եղբայրասպան կոխը, երկուտեք ոչնչացումը, տան ամիս է, որ մեր հայրենիքի ամեն մի անկիւնում, ինչպէս փոթորիկ, անցնում է աւերածութիւն, հրդեհ, թալան ու կողոպուտ:

Նոյն փոթորիկն է, որ այսօր կախած է նաև Թիֆլիսի հայ ու թուրք ազգաբնակչութեան զլխին, սպառնալով այնքան անմեղներին: Հերիք է այսքան անմեղ զոհեր ու արիւն, որի դէմ բողոքում են մարդկային զգացմունքն ու խիղճը:

Երեկւայ և այսօրւայ զէպքերի ու զոհերի անթիւ մենք յայնտում ենք մեր ցաւն ու վիշտը: Միաժամանակ կոչ ենք անում երկու ժողովուրդներին էլ՝ չը կորցնել սառնարիւնութիւնը և զոհ չը գնալ սճրագործ պրօպոլագիայի:

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կօմիտէ:

23 նոյեմբեր 1905

3.

Հայ յեղափոխական Դաշնակցութեան Թիֆլիսի Ինքնապաշտպանութեան Կենտրոնական Մարմինը խտաւ պատերազմ է, որ ոչ որ չը համարձակի անցորդներին խուզարկել, զէնքերը խլել կաթ բռնել և բանտարկել, եթէ նրանք հարբած՝ անկարգութիւն չեն անում կամ զէնքը հանած՝ խռովութեան և յուզմունքի տեղիք չեն տալիս:

Զինուորական դատի կենթարկւեն մեր զինուորները նրանք, որոնք հրագէն կը պարպեն անմեղ և խաղաղ բաղաբայիներին վրայ:

Հ. Յ. Դ. Ինքնապաշտպանութեան Կ. Մարմին:

4.

Թիֆլիսի ազգաբնակչութեանը.

Երեկ, 23 նոյեմբերի, ամբողջ օրւայ ընթացքում Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի կազմակերպութիւնը իր բոլոր ուժերով աշխատեց զոպէլ ժողովրդական գայլոյթը և բոպէ առաջ վերջ տալ վրդովեցուցիչ սպանութիւններին: Նւ շնորհիւ դրան յաջողեց ամբողջ դիշերը խաղաղ անցնել: Առաւօտ վաղ կազմակերպութեան կամաւորները յորդորում էին ազգաբնակչութեան խանութները բանալ և ոսկորական զբաղմունքներով պարագիւր: Ժամը 8 և կէսին մի խումբ հայեր մտան թուրքաց թաղը, հաւաքելով թուրքերին սկսեցին համոզել նրանց, որ վերջ տան կռիւն, որի վերաբերմամբ կայացաւ համաձայնութիւն: Այդ խօ-

սակցութիւնից յետոյ՝ թուրքերը կամաց-կամաց հետացան հայերից և երբ հայերը մնացին առանձին, շրջակայ թուրքերի տներէց յանկարծակի հրացանաձգութեան բռնեցին փողոցում դռնուղ հայերին և սպանեցին մէկին ու վիրաւորեցին 3-ին:

Այսպէս ուրեմն մի անգամ ևս մեր զրացի թուրք ամբողջ դաւաճանեց իր խօսքին: Սրանով պարզ է, թէ ում վրայ է ծանրանալու զալիք աղէտները պատասխանատուութիւնը:

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կօմիտէ

24 նոյեմբ. 1905 թ.

5.

Ի նկատի ունենալով երեկ քաղաքում պատահած մի շարք սպանութեան ու կողոպուտի քառմեկի դէպքերը, հարկ ենք համարում լիշեցնել հասարակութեան, որ ինքնապաշտպանութեան նպատակն է միմիայն պաշտպանել, երբ տեղի կունենայ յարձակում խաղաղ ու անմեղ քաղաքացիներին անձի և դոյքի վրայ: Վնասել խաղաղ քաղաքացիներին, բարբարոսներին վայել միջնեցների դիմել թալանել, կողոպտել ու հրդեհել ամենախիստ կերպով արգելուում է:

Իսկ մեր զինուորներին հրամայում ենք հետեւել ու ձեռքակալել յանցաւորներին և յանձնել Կ. Կօմիտէի:

Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի Կ. Կօմիտէ:

24 նոյեմ. 1905 թ.

6.

Հ. Յ. Դաշնակցութիւնը յայտնում է ի դիտութիւն ընդհանրութեան, որ նա ստացել է ուսաց սօցիալ-դէմօկրատիական բռնաբարեկան կուսակցութեան Թիֆլիսի կօմիտէից հետեւեալ ծանուցումը.

«Ի նկատի ունենալով, որ թուրքերը բացին պատերազմական գործողութիւններ, որ արտայայտուեց նրանց հրաձգութեամբ, մեր պահակները վրայ առանց որևէ առիթի մեր կողմից, որի ժամանակ սպանեց մէկը և վիրաւորեցին երկուսը մեր ընկերներից, մենք վերցրինք մեր պահակները և զբանով վերացնում ենք մեզանից որևէ պատասխանատուութիւն ապագայ դէպքերի համար:

Եւ այսպէս Սօցիալ-Դէմօկրատիական կուսակցութեան ջանքերը վերականգնել խաղաղ յարաբերութիւններ թուրքերի և հայերի մէջ՝ ապարդիւն անցան դժբախտաբար: Եւ այդ փաստը մի անգամ ևս ապացուցեց, թէ թուրքերը ամեն տեղ և միշտ հանդիսացել են յարձակող կողմ և նրանց յանձն առած բարոյական պարտաւորութիւնները երբէք չլին չեն ունեցել: Եւ այս անգամ ևս ազգերի եղբայրութեան և խաղաղութեան գաղափարը համար կուող Սօց.-Դէմ. կուսակցութիւնը միւս յեղափոխական կազմակերպութիւնների հետ միասին հանդիպեց խոչընդոտի ազդէսախ տրամադրւած թուրք խուժանի կողմից:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը բոլոր ջանքերը գործ կը դնի հարկուոր զինազրութիւնն անելու թուրքերի ազդէսախ գործողութիւններին: Միևնոյն ժամանակ նա յայտնում է, որ մեր կուսակցութեան կողմից ձեռք առնուող

բոլոր ակտիւ միջոցների միակ նպատակն է խաղաղութիւնը շուտափոյթ վերականգնել և դադարեցնել այն բռնութիւնները, որ թուրքերի պատերազմիկ մասը գործում է խաղաղ ազգաբնակութեան դէմ:

Այդ պատճառով Դաշնակցութիւնը յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի.

1. Ամեն մի բռնութիւն խաղաղ և անզէն թուրքերի վրայ՝ կը հալածուի, իսկ նրանց դոյքը թէ՛ խանութներում և թէ՛ տներում կը պահեն:

2. Ընդհարումների շրջանից դուրս գինաւորւած թուրքերը մինչև խաղաղութեան վերականգնումը գինաթափ կանեն մեր կուսակցութեան կօմիտէից լիազօրութիւն ունեցող անձանց ձեռքով:

3. Մինչև թուրքերի կողմից յարձակումները դադարեցնելը, նրանց անցնելը, չէզօք շրջանից պատերազմական շրջանը, չէ թոյլատրում:

28 նոյեմ. 1905 թ.

7.

Բազւի ազգաբնակութեան.

Վերջին օրերս քաղաքում նորից տարածել են անհեթեթ լուրեր, թէ փեարւարի 6-ին, փեարւարեան կոտորածի տխուր տարելիցին, հայերը, Ն. Յ. Դաշնակցութիւն» կուսակցութեան ղեկավարութեամբ, պատրաստում են յարձակում գործելու թուրքերի վրայ:

Պարզ է, որ զգելի վրօվօկացիան նոր փորձեր է անում մեր քաղաքը վերստին արիւնահեղ սպանդի և ամարդի անդթութիւնների վայր դարձնելու: Նրան չեն յաղեցրել երեք կոտորածի ժամանակ թափւած անմեղ արեան հեղեղները, նրան չի դոհացրել այն արցունքի ծովը, որի մէջ նա դեռ ևս չի կարուկանում խեղդել: Նա դեռ ևս ծարաւի է անմեղ գոհերի արեան, թշւառ և տընանկ այրիների, մայրերի ու որբերի չըցամաքած արցունքի:

Բայց մեզ համար հերիք է այդ արիւնը, այդ արցունքը, քաղաքացիներ. Հերիք է, որքան մենք արիւն ու արցունք թափեցինք երեք կոտորածի ժամանակ: Միթէ մենք դարձեալ պիտի զոհ գնանք պրօվօկացիային: Միթէ պիտի հաւատանք այդ սոտր ու զրպարտիչ լուրերին և նորից ձեռք պիտի բարձրացնենք իրար վրայ և պիտի ձգենք իրար նոր թշւառութիւնների, նոր աղէտների մէջ: Ո՛չ, հերիք է:

«Ն. Յ. Դաշնակցութիւնը», որի վրայ ներկայումս մասնանիչ են լինում պրօվօկացիայի բոլոր յայտնի ու դադանի ազնւոները իրրե մի կազմակերպութեան վրայ, որը պատրաստում է յարձակելու թուրքերի վրայ, սըրանով յայտարարում է Բազւի բոլոր քաղաքացիներին, որ այդ բոլոր լուրերը սուտ են, իսկ զբանց տարածողները զրպարտիչներ են: Կուսակցութիւնս յայտարարում է, որ ինքն անխնայօրէն պատժում է միայն այն ժամանակ, երբ իւր առաջն է տեսնում հայատեաց կրքերի կատաղի, անզուրթ և վայրենի անձարձակութիւն: Յարուցանել, վառել այդ կրքերը երբէք չի եղել և չէր կարող լինել կազմակերպութեանս նպատակն ըստ իւր ծրագրի էութեան, իսկ խօսել Դաշնակցութեան թուրքերի դէմ ուղղւած ազրեսիւ գործողութիւնների մասին կարող են միայն ստախօսները և պրօվօկատորները, որոնց ձեռնտու են արիւնալի բարբարոսութիւնները:

«Դաշնակցութիւնը» յայտարարում է, որ նա սրտանց ողջունում է քաղաքում հաստատուած խաղաղութիւնը և ցանկանում է, սր այդ խաղաղութիւնը հիմնաւոր դառնայ ի բարօրութիւն և յուրախութիւն դրացի ժողովուրդներին և հայրենի Կովկասի բարգաւաճման համար:

1906. 4 փետրւարի.

Այս պատմական թռուցիկների մէջ ամփոփուած է Հ. Յ. Դաշնակցութեան ոգին, որ բղխում է նրա ծրագրային էութիւնից: Որքան էլ անպատիւ հակառակորդները աղմկեն հրապարակը—ինսինուացիաներով ու այլանդակ առասպելներով—այդ կազմակերպութեան quasi-շօվիխստ, թուրքատեաց ու պրօվօկատորական հակումների մասին՝ փաստը մնում է փաստ. Դաշնակցութիւնը թէ Տաճկահայաստանում, թէ Անդրկովկասում, երբէք մահմեդական, ինչպէս և՛ ուրիշ ժողովուրդների դէմ չի գրգռել մտքերը, երբէք նրանց դէմ զէնք չի բարձրացրել: Ընդհակառակը. 15 տարւայ պատմութիւնը վկայում է, որ նա միշտ ջանացել է քարոզներով, յորդորներով՝ զիտակցութեան բերել և իր կողմն գրաւել հակայեղափոխական տարրերին:

Այդ առիթով միանգամայն պատեհ ենք համարում առաջ բերել այստեղ ամբողջութեամբ մեր մի ուրիշ թռուցիկը, որ հըրատարակել ենք 10 տարի սրանից առաջ, մօտաւորապէս նման պայմաններում, թէև աշխարհագրական տարբեր միջավայրերում... Կ. Պօլսում, Բանկ Օտտօմանի գրաւման ժամանակ: Յիշեցէք, ընթերցող, այն կարմիր ու սև օրերը, այն դարհուրելի օրերը, երբ Բանկը անմիջապէս գրաւելուց յետոյ, տաճիկ ամբօխը, Ելբըզի տւած ազդանշանի վրայ, մի արիւնոուշտ խենթութեան մէջ, գրոհ տւեց անմեղ անպաշտպան հայ ազգաբնակչութեան դէմ, և կարճ միջոցում 6,000 հայ դիակներ փոեց Ստամբուլի փողոցներում...

Հ. Յ. Դ. Ա. Շ. Ն. Ա. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ե. Ա. Ն.

Կ. Պօլսի Կեն. Կօմիտէի

Շ. Բ. Զ. Ա. Բ. Ե. Բ. Ա. Կ. Ա. Ն.

(Տարածած, կուրից առաջ տաճիկերէն լեզուով)

Քեզ ենք զիմում սրանով, տաճիկ ժողովուրդ, և ոչ այն պատճառով որ երկիւղ ենք կրում քեզանից, կամ այլ և այլ միտումներ ունենք—ո՛չ, մենք արհամարհանքով ենք նայում մահւան երեսին,—քո կառավարութիւնն է մեզ այդ սովորեցրել: Մենք զիմում ենք քեզ միայն մի նպատակով՝ յայտնելու քեզ, որ քո դէմ մենք ոչինչ չունենք: Դարերից ի վեր մեր հայրերը ու պա-

պերն ապրում էին քեզ հետ հաշտ ու խաղաղ, ունենալով մի հայրենիք ու ընդհանուր նպատակներ: Մակայն այս վերջին ժամանակները, ոճիրներով ստեղծւած քո կառավարութիւնը սկսեց խռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէս զի աւելի մեծ դիւրութեամբ խեղդի և քեզ, և մեզ: Դու չը հասկացար, ժողովուրդ, այս դիւական քաղաքականութիւնը և մեր եղբայրների արեան մէջ թաթախւած՝ դու մեղսակից գտնուեցար այդ զազրելի ոճրագործեան: Բայց թող քեզ քաջ յայտնի լինի, որ մեր նուրբ ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան. դրա դէմ են կուում և քո լաւագոյն զաւակները, որոնք կառավարչական ներկայ ձեւերում իրենց հանգստութիւնը միմիայն Բօսփօրի սրբնթաց ալիքների մէջ են գտնում:

Մտածիր ժողովուրդ, ո՞վ է քո թշնամին և ո՞վ քո բարեկամ:
1896 թ. օգոստ. 16

III

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԳՐՈՂԸ ԵՒ ՀԱՅ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Տնտեսակա՞ն թէ կուլտուրական

Մամուլի առաջին յայտարարութիւնները եւրօպայտում.—Տնտեսական պատճառաբանութիւնը կովկասեան ա.-գ. մամուլի մէջ.—Մուլիզանութիւնը մասսային.—Կուի տարածումը.—Նոր-Նախիջևան, Երեան, Ղարաբաղ, Գանձակ, Թիֆլիս.—Ամեն սեղ թուրքերը նախայարձակ.—«Տնտեսական անտոգօնիզմը» դաւառում.—Ո վ է հողատէրը.—Հայ առևտրականների «կեդեքոմները».—Հայկական ինդուստրիան դաւառում.—Բաղուն.—Կուլտուրական անտոգօնիզմը.—Կովկասեան առևտուրը հայերի ձեռքում.—Փաստական վկայութիւններ.—Թուրք-հայկ. ընդհարումը կարող էր պայթել և 30 տարի առաջ:

Առաջ գնանք չարատանջ պատճառների քննութեան մէջ: Հայ նացիօնալիզմը, մանաւանդ դաշնակցական նացիօնալիզմը, այդպիսով, գործ չունի հայ-թուրքական ընդհարումների հետ և մենք սրտանց կը փափագէինք, որ մեր բոլոր զրացիները վարակւած լինեն նոյն տեսակի նացիօնալիզմով, ինչպէս մենք:

Գուցէ՞ մեղաւոր է հայկական կապիտալիզմը... Գուցէ՞, յիբաւի, հայը հանդիսանում է իբրև ճնշող տարր, — և՛ հողատէր և՛ փողատէր, իսկ թուրքը ճնշւած և իրաւագուրդի,—և գուցէ հէնց այդ է թուրք մասսաներին ու բուրժուազիային գրգռող հանգամանքը:

Այդ հարցերը տալով մենք յայտնում ենք անտեսական ֆակտորի հանդէպ, որը շատերի կարծիքով հանդիսանում է գլխաւոր դրդապատճառ թուրք-հայկական ընդհարումների:

Տնտեսական կատեգորիայի վրայ ծանրանում էին դէպքերի սկզբում, նոյն իսկ Եւրօպայի դիտողները, որոնք տակաւին հընարաւորութիւն չունէին ստուգելու իրողութիւնները: Երբ արեւմտեան խոշոր մամուլը արձանագրում էր Բագում տեղի ունեցած սարսափները, նա շեշտում էր ցեղական և մասնաւորապէս անտեսական անտազօնիզմի վրայ. հայերը առհասարակ հանդիսանում էին գայլերի դերում, թուրքերը՝ ըմբոստացող գառների դերում:

Պարիզեան մեծ օրգանի, Le Temps լրագրի կովկասեան թղթակիցը գրում էր 1905-ի յուլիսին.

«Հայերը խելացի են և գործունեայ. հետևարար նրանց մեղադրում են արագ հարստանալու մէջ, ի վնաս այն զիւղացի, ինչպէս որևորիական կամ վաճառական ազգաբնակչութիւնների, որոնց մէջ նրանք ապրում են: Թիֆլիսում, օրինակ, հարստութիւնը հին կալաճատէր, շնայլ, անկարգ վրացիների ձեռքից անցել է նորեկ հայերին, անյագուրդ և խնայող: Ահա այդտեղից է առաջ գալիս աղքատացած վրացիների ատելութիւնն ու ոխը հարստացած հայերի դէմ: Եւ այդ տեղից մի քայլ էր մնում, որ հայերին ամբաստանէին, իբրև երկրում գործւող ամեն չարիքի պատասխանատու: Այդ քայլն ևս արին:

«Հայերը գտնւում են բոլոր տեղերում, ուր առևտրական գործ կայ: Հրէաների պէս, նրանք գերազանց են դրամի առևտրի մէջ: Եւ դժբախտութիւն ունեն յաճախ աջողութիւն գտնելու»...

Սօցիալիստական օրգաններն անգամ, ոռւս կառավարութեան դժոխային դաւերը նշաւակելով հանդերձ՝ յիշատակում էին անտեսական գործօնի ոյժը: Այդպէս Պարիզի Humanité-ն տպագրելով «Դրօշակի» խմբագրութեան կոչը ուղղած լուսաւոր աշխարհի քաղաքացիներին, Բագւի գաղանութիւնների առթիւ, և դրւատելով նրա հիմնական պատճառաբանութիւնը՝ հարկ էր համարում յիշատակել իր երկրորդական աշխատակիցներից մէկի բերանով, որ «թուրքերը հողի առաջին զբաղողներն են (խօսքը Բագւի մասին է), որ հայերը նրանց գրկել են»...

Եւրօպայի սօցիալիստները, որոնք ի հարկէ ընաւ տեղեակ էին մեր պայմաններին, գտնում էին à priori, լոկ անալօգիալով, նմանութեան օրէնքով: Ի նկատի ունենալով, որ մարտը նոյն

մարտն է երկրագնդի ընդ որ ծայրերում, նոյն էական բնագրում-
ներով ու ախորժակներով, նրանք շտապով եզրակացութիւն
էին հանում, առանց լրջօրէն հաշի առնելու մեր իրականութեան
ընդ որ սարսափեցնող տրագիզմը, առանց իմանալու մեր միջա-
վայրի առանձնայատուկ, բացառիկ պայմանները, առանց լիովին
գնահատելու և՛ մեր ըէժիմը և՛ մեղ շրջապատող խուժանների
դժոխային պատկերը, ուր մտաւոր ամայութեան հետ ցոլում է
զգացմունքների մի անօրինակ դժնդակութիւն... Թ՛ող գտնեն մի
ուրիշ անկիւն երկրագնդի վրայ, ուր գոյութեան կռիւը ստանար
այնքան այլանդակօրէն բիրտ, զուտ բիօլօգիական բնաւորութիւն,
ուր կենդանաբանական մնացորդները այնքան ուժով զգալ տային
իրենց գոյութեան մասին, ուր կուլտուրան ու վայրենութիւնը,
այնպէս իրարու խճողէին, այնքան անհաւասար, անեղ, անիծ-
ւած մի մենամարտում... Այդպէս—Տաճկահայաստանում, այդպէս
—և Անդրկովկասում...

Տնտեսական են հայ-թուրքական ընդհարման պատճառները,
—այսպէս էին պնդում և կովկասեան մի կարգ ուսն հրապարա-
կախօսներ, զխաւորապէս սօցիալ-դէմօկրատիայի բանակից: Յի-
շենք նախ և առաջ պ. Օրեստ Մեմինին, որ Баку լրագրի խմբագի-
րըն էր և ըստ երևոյթին, ամենալուրջ սօցիալ-դէմօկրատ հրա-
պարակախօսներից մէկը: Բազւի առաջին կոտորածից մի քանի
ամիս անց՝ նա զետեղում է վերոյիշեալ լրագրի № 58-ի (1905
թւի) մէջ մի տեսութիւն, ուր փորձում է, իբրև մարքսիստ-թէօ-
րետիկոս, լուսարանել կատարւած աղէտները, նրանց պատճառ-
ները: Պէտք է խոստովանել, որ դա ամենալուրջ փորձն է, սօ-
ցիալ-դէմօկրատների յախուռն բացատրութիւնների, «թէօ-
րէական» մարզանքների երկարածիզ շարքում: Եւ ի՞նչ է նա
մեղ տալիս: Մահմեդական տգիտութեանը—և այն էլ միայն տը-
գիտութեանը—երկրորդական տեղ է տրւում պ. Մեմինի տեսու-
թեան մէջ և աղէտների էական պատճառը յայտնւում է թուրքե-
րի տնտեսական թշուառութիւնն ու նրանց կրած ապօրինութիւն-
ները, զրկանքները:

«Շարժումը մուսուլմանների մէջ—ասում է յօղւածագիրը—
ձագիւ է այն դժգոհութեան հողի վրայ, որը պայմանաւորւում է
նրանց տնտեսական անապահովութեան աճումով, ապա նաև ի-

ըստազրկութեան հողի վրայ. նա առաջ է եկել նոյնպէս մահմե-
դական մասսայի մոսայլ տգիտութիւնից, որը արգելում է նրան
տեսնելու իր ստորացած վիճակի իսկական պատճառները և ստեղ-
ծում նրանից պատշաճաւոր նիւթ՝ ամեն տեսակ փորձերի համար,
Կրուշևանի, Գրինգոմուտի նման դէմագոյնների ոգով.—ուրիշ խօս-
քով, ներկայ շարժումը մուսուլմանների մէջ փոխ-նատուցումն է այն իրա-
ւազրկութեան (бесправие), չքաւորութեան ու խաւարի համար, որոնց մէջ
մենք դարերով պահել ենք մահմեդական մասսային, զրկելով նրան կուլտու-
րական մարդկային զոյումեան ամենատարրական պայմաններից *):

Այդպէս էր տրամաբանում պ. Սեմին, այդ մտքով էլ նա
զեկուցում էր ներկայացնել կովկասեան բարձր իշխանութեանը:
Եւ ճիշտ միևնոյն ժամանակները՝ տիրահոչակ Աղայե իր ար-
բանեակներին հետ միևնոյն «ճշմարտութիւններն» էր ազդարարում
հասարակութեան: Տարբերութիւնն այն էր երկու արգումնատա-
ցիաների մէջ՝ որ համխոյսմական թէօրետիկոսը հայ տարրին էր
վերագրում իր ցեղակիցների կուլտուրական թշւառութիւնը,
մինչդեռ ոռուս զրոյը վերագրում էր այն՝ տիրող քաղաքական ու-
ժիմին:

Ապա շարունակում է պ. Սեմին.

«Գիւղացիութեան հողազրկութիւնն ու քայքայումը և քաղա-
քային ազգաբնակչութեան լայն խաւերի պրօլետարիացումը (про-
летаризация),—ահա գլխաւոր աղբիւրները, որոնցից ծնւում է
homo sapiens-ի այն ստանձին, ակամայօրէն զազանակերպ տիպը,
որի ներկայացուցիչների սխրագործութիւնները այսօր ստակում են
ազդում ամբողջ աշխարհին... Ոչ մի ոստիկանական միջոցով չէ
կարելի կանգնեցնել խուլիգանական տարրերի աճումը և աշխար-
հիս ոչ մի աղմիխտտրացիա չէ կարող միմիայն ոստիկանական
միջոցներով յաղթահարել այդ հասարակական չարիքը»:

Բայց ահա պայթեց ուրազանը Երևանեան նահանգում, որ
կամաց-կամաց տարածեց և ուրիշ նահանգների վրայ—ամբողջ
երկիրը, բռնակալ ուժիմի սաղբանքներով դարձաւ թուրքական
ասպատակութիւնների թատերաբեմ: Յայտնագործեց բոլոր
մտածող քաղաքացիների համար, որ սև-հարիւրակեան մարգա-
սպանները թուրք տարրի մէջ, տարաբախտաբար, կղզիացած ան-
հասներ և խմբեր չեն, որ համատարած եղեռնի մէջ մասնակից
են թէ չքաւոր և թէ ունետր, որ հէնց բէզական դասակարգը ա-
ռաջնակարգ դեր է խաղում թալանի ու սպանութեան այդ ար-

*) Ստորագծողը մենք ենք:

շաւանքի մէջ, որ մահամեղական ազգաբնակութեան լայն զանգւածները պատրաստ են ամեն վայրկեան, պատե՛հ առիթով, գրո՛հ տալ անպաշտպան հայ ժողովրդի դէմ և բարդուղիմէոսեան գիշերներ սարքել, á la Մինքենդ... Մասսային, հրէշաւոր եղեռնագործութիւններ, որոնց առջև սոսկում էին անգամ բիւրօկրատիայի ներկայացուցիչները... Յիշեցէք, թէ ինչպէս դիմաւորեց գեներալ Նապօլէօնը Մինքենդի թուրքերին, ինչպէս նա զգւանքով յետ մղեց նրանց աղսախկաշների մատուցած ազ ու հացը...

Ահեղի էր Կովկասեան Վանդեան իր բնաջնջող արշաւանքի մէջ: Գալոց պատմագիրը ան ու սարսուռով պիտի նկարագրէ այդ հսկայական որսախուճապը, որ կազմակերպել էր՝ խաղաղ դրացուն ջնջելու հաստատ որոշումով, այդ արիւնահեղ ճակատամարտները, այդ մասսային խողխողումները, այդ համատարած լացն ու հեծեծանքը...

Հին Նախիջևանը իր շրջակայքով քար ու քանդ եղաւ, 50-ի չափ գիւղեր փլատակ դարձան, բնակիչները մասամբ կոտորեցին, մասամբ բռնի կրօնափոխ եղան, մասամբ էլ փախան զանազան կողմեր. հայերի գոյքը յափշտակեց և տանեակ հայեր կենդանի վառեցին իրենց խանութներում: Հրդեհը ճարակեց և հարևան գաւառները:

Երևանն անգամ չը խուսափեց ընդհարումից. Թուրքերը լարձակեցին, բայց չարաչար պատժեցին. նրանք չարաչար տուժեցին և Երևանին մօտիկ վայրերում, ուր «Դաշնակցութեան» խմբերը զգալի ջարդ տւին ահաբեկելով ու փախուստի մատնելով իրենցից անհամեմատ աւելի բազմաթիւ հրոսակներին: Նոյն պարտութիւնը կրեց խուժանը և Ղազախի շրջանում, ուր չը նայած հայ տարրի յարաբերական սակաւութեան, հակառակորդը սարսափահար յետ էր նահանջում մեր փոքրաթիւ խմբերի յարձակումների առաջ...

Աւերածի հողմը անցաւ և Ղարաբաղ, ուր գիշատիչ բէգերն ու աղալարները, արդէն Բագելի ազգանշանից յետոյ, պատրաստել էին իրենց անհամար ասպատակող վոհմակները...

Կոխը բորբոքեց նաև Ղարաբաղի մայրաքաղաք-Շուշում և այն միջոցին, երբ հազարաւոր ձիաւոր խաժամուժը, աղալարների առաջնորդութեամբ Աղդամի դաշտավայրերից արշաւում էր դէպի բերդը, օգնութեան էր գալիս իր ցեղակիցներին, երբ նա գալիս էր թալանելու Շուշու հայոց հարստութիւնները, ջնջելու

հայ բնակչութիւնը և ապա գրոհ տալու Վարանդայի և Խաչէնի վրայ՝ այդ միջոցին մի խրոխտ, անառիկ բերդ ցցւեց յանկարծ նրա առջև, մի բուռն հայ կտրիճներ, մեր լաւագոյն ռազմիկներից, պատմական Ասկերանի պարիսպներում ամրացած՝ գրոհ տւին հազարաւոր խուժանի դէմ և մասնեցին մի անպատիւ փախուստի։ Ասկերանը յաւերժացաւ հայ դժբախտ ազատագրական տարեգրութեան մէջ և ժողովրդական նոր հերոսների՝ Համազասպների անունները եկան միանալու Դումանների, Վարզանների, Սագօների ու Մուրադների հետ՝ ժողովրդական մեղամաղձոտ երգերում... Մի դժբախտ, մի սգաւոր էպիգոդ... Ո՞վ կարող էր գուշակել, որ մի օր հայ աշուղները պիտի երգեն հայ կտրիճների կռիւներն ու յաղթանակները՝ հարևան Թուրքերի դէմ...

Պատմութիւնը իր կապրիզներն ունի.—անցնենք, կուրը շարունակեց կատաղի, արիւնահեղ։ Գանձակն էլ ենթարկեց Նախիջևանի ու Շուշու վիճակին, չընայած թուրքական այնքան խոստումներին, համերաշխութեան յայտարարումներին... Իրսից ու ներսից արշաւող խուժանը յանկարծակի բերելով հայերին, ջարդ տւեց նրանց և քաղաքի առևտրական մասը, հայոց անազին հարստութիւններով, թալանի ու կրակի մատնեց օր ցերեկով, գեներալ Տակայաշվիլիի, նոր ժամանակների այդ զարշիլի Ներօնի՝ աչքերի առաջ։ Ամբողջ հայկական քաղաքամասը անխնայ պիտի քանդէր և սրի անցկացնէր, եթէ «Իաշնակցութեան» փոքրաթիւ խմբերը ամրացած չը լինէին այնտեղ ու յետ չը մղէին կրկնակի յարձակումները...

Կովկասեան փարթամ մայրաքաղաքն անգամ ազատ չը մընաց հակայեղափոխական կարմիր խենթութեան համաճարակից։ Թիֆլիսն էլ պաշարեց մի գեղեցիկ օր, երբ բնաւ ոչ ոքի մտքովն անգամ չէր կարող անցնել այդպիսի մի յանդուգն, խիզախ ծրագիր թուրք շէֆերի կողմից... Թիֆլիսը, ուր ընդամենը մի տասնեակ հազար թուրք են հաշոււմ, մօտ 150 հազար հայ, վրացի, ռուս ազգաբնակչութեան դէմ՝ մի վայրկեան յայտնեց ամենաճանր տագնապի, կեանքի ու մահան պայքարի մէջ... Տասնեակ հազար արիւնարբու բօրջալւեցիներ նախօրօք կազմած ծրրագրով՝ եկել էին հիմնական «պօզրօմի» ենթարկելու հայկական թաղերը, մանաւանդ գեղեցիկ Սօլօլակը իր հրապուրիչ հարստութիւններով... Ամեն ինչ ժպտում էր հրոսակներին, քաղաքի դու-

ները բաց էին նրանց առջև. իշխանութիւնները անգործ ու անհոգ, միանգամայն տրամադրւած յօգուտ թուրքերի... Պատմական mauvais quart d'heure անցկացրեց թիֆլիսը, և նա խապտ ձեռքից գնացել էր, եթէ դարձեալ հրապարակ չը նետուէր Դաշնակցութիւնը իր մի քանի հարիւր կտրիճներով, որոնք եօթ օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ դուրս քշեցին աւարատենչ խուլիգանական մասսաներին, որոնք այնուհետև մորեխի նման սփռուցին Բօրչալի ամրոցը տարածութեան վրայ, ոչնչացնելով ամեն բան, ինչ որ հայկական էր, ինչ հայի սեփականութիւն էր: Անմտանալի կռիւներ, որ խուժանային տմարդութեան հետ աչքի էր ընկնում մեր ինքնապաշտպան ռազմիկի վեհանձնութիւնն ու անվեհերութիւնը և Հ. Յ. Դաշնակցութեան ամրոցը հմայքը, որ գերել էր բոլոր սրտերը—բարեկամ ու հակառակորդ—այդ սարսափելի օրերում...

Եւ այդպէս, ամեն տեղ՝ թուրքերը նախայարձակ, ամեն տեղ՝ մասսային կոտորածի, թալանի ու հրդեհուհիների նախաձեռնող և կատարող: Տասնեակ հազարաւոր մի բանակ... Համատարած, տարերային մի շարժում... Եկէք ու խօսեցէք ինչ որ «Թափթըփուկի», ինչ որ «հասարակական տականքի» մասին: Ոչ, դա թուրք ազգաբնակչութեան լայն խաւերն էին, որ մղում էին այդ հոյակապ Վանդէան, հակայեղափոխական այդ պատերազմը:

Բացառութիւններ մնացին անշուշտ, թուրք Թուրքի մէջ և նրանք այնքան աւելի յարգելի են մեզ, որքան մոռյլ ու յուսահատական է թուրք ընդհանրութեան մտալիճակը.—սակայն այդ բացառութիւններն էլ իրենց բացարձակ անզօրութեամբ շատ չընչին մխիթարութիւն էին մեզ համար, աղէտի օրերում: Մենք ողբում ենք այդ իրողութիւնը, բայց ստիպւած ենք արձանագրել,—այնքան ծանր դժբախտութիւնների հանդէպ էօֆէմիզմներն ու փափկանկատութիւնները սազ չեն գալիս և մենք պարտաւոր ենք լիակատար հարկ տալ ծշմարտութեան, թէկուզ և դաժան, անողորմ ճշմարտութեան:

Թուրք համայնքի մի սոււար մասն էր, երբեմն ասես ամբողջ համայնքն էր, իր բէգերով ու մօլլաներով, իր կրթւած ու անկիրթ ներկայացուցիչներով որ հրաժեշտ էր տալիս երեկւայ խաղաղ, հաշտ դրացիութեան և նետուում էր հայ համայնքի վրայ, կեանքի ու մահւան խնդիր դնելով նրա առջև...

Այդքան անօրինակ, եղակի, խոշոր հասարակագիտական մի

երևոյթ ճիշտ որ չէր կարելի մեկնաբանել սոսկ քաղաքական, պետական գործօնով, սոսկ իշխանութիւններէ հայատեսաց զրգումներով, պէտք էր փնտրել այլ շարժառիթներ: Եւ երբ ուշադիր ու իրազեկ միտքը ուզում է փնտրել այլ կարգի պատճառներ ժողովրդական այդպիսի մի շարժման, նա բնականաբար կանգ է առնում մարդկային ամենապարզ, ամենաընդհանուր ախորժակներէ վրայ, նիւթական կամ տնտեսական պահանջներէ վրայ: Այդպէս է վարւում մարքսիստական կամ տնտեսական մատերիալիզմի շկոլան, երբ նրա առջև պարզւում են մարդկային պատմութիւնն աւելի ծող ժողովրդական այլազան շարժումները և տիրաբար լուծում են պահանջում:

Այդպէս կամեցան վարւել և մեր կովկասեան մարքսիստները, որոնք թուրք-հայկական պրօբլեմի քննութիւնը ձեռք առնելով, տնտեսական մեթոդը վայր ի վերոյ կիրառելով, սկսեցին աջ ու ձախ հոլովել ծանօթ տերմինները՝ «տնտեսական կոիւ», «դասակարգային կոիւ», «կապիտալիզացիա», «պրօլետարիզացիա»... Սակայն, ինչպէս յաճախ պատահում է Մարքսի էպիղոնների և նորրնձայ-աշակերտների հետ, կովկասեան մարքսիստները հասան անհեթեթ ծայրայեղութիւնների՝ թէ թէօրիական բացատրութեան և թէ գործնական եզրակացութիւնների մէջ, որոնց շարքում մի դառն, ցաւազին դաւեշտականութեամբ փայլում է Թիֆլիսեան օրգանի թղթակցի այն կլասսիկ յայտարարութիւնը, որ կովկասահայ մամուլը իր ժամանակին նշաւակեց միանգամայն արդար ցատումով, իբրև տմարգի, անպատիւ, անորակ մի երևոյթ... Յիշեցէք, ընթերցող, «Վօզրօժդէնիէ»-ի Մօսկւայի թղթակցին, որը կովկասեան փոխարքային ուղղած մի ղեկուցման մէջ խորհուրդ էր տալիս չը դիմել խիստ, ճնշող միջոցների թուրք ազգաբնակչութեան դէմ պատճառաբանելով, որ այդ վերջինը գտնւում է ամենազօրախտ պայմանների մէջ և չէ կարող դիմանալ տնտեսական մրցակցութեան: «Մի իրօնաւոր ժողովուրդը, ասում էր դա, խրաւած կատարեալ տգիտութեան մէջ, չունենալով մի կտոր անշարժ սեփականութիւն, բոլորովին անկարող է տնտեսական կոիւ մղել անչափ աւելի կուլտուրական և տնտեսապէս աւելի ուժեղ ժողովրդի (հասկացէք՝ հայերի) հետ»...

Այդպէս, ահա, հանճարեղ ուսուցչի անշնորհք աշակերտները թեթևամտութեամբ խրախուսում էին անպատժութիւնը թուրք

հրոսակները մէջ և զիտական զաւանանքի անունով նւիրագործում հայ ժողովրդի արտասելի նահատակութիւնը...

*

«Տնտեսական» բառի իմաստը ճկուն է, առաձգական, նա ունի ընդհանուր և մասնաւոր նշանակութիւն: Ընդհանուր մտքով, եթէ կուզէք, անտեսական ֆորմուլան կիրառելի է մեր քննելի խնդրում: Մենք կարող ենք ասել, օրինակ, որ թուրք ժողովրդի լայն զանգաւանները իրանց ընդհանուր մօրելիկացիայի մէջ հայերի վրայ՝ հնազանդել են այն շատ տարրական ախորժակներին, որ մենք քիչ առաջ յիշատակեցինք: Լինելով մեծ մասամբ խեղճ ու չքաւոր, նրանք կամեցել են պատեհ առիթով փոքր ինչ հարստանալ, թէկուզ և ի հաշիւ իրանց պէս թշւառ ազգաբնակչութեան: Եւ առաջացել են ջարդեր ու արիւնհանգութիւններ, որոնք, դէհ, անխուսափելի են թալանի միջոցին...

Տնտեսական բացատրութեան այդ ձևը, ինչպէս տեսնում էք, á la rigueur ընդունելի է, թէև դա բանալ ու տարտամ մի բացատրութիւն է, որ չի թափանցում հարցի խորքերը, չի պարզաբանում կատաստրօֆի հրէշաւոր ծաւալը, այն սպեցիֆիկ, դժոխային արտայայտութիւնները, որ ունեցաւ թուրք ամբողջի մօրելիկացիան:

Կովկասեան սօցիալ-դեմօկրատները մասնաւորեցին, որոշեցին «տնտեսական» ատրիբուտը և մի կողմից հրահանգաւոր մարքսիզմի ֆորմուլաներից, միւս կողմից ակահայ ներշնչաւոր հրապարակի վրայ շրջող նախապաշարումներից, սկսեցին ձառել մէկ ժողովրդի անտեսական ճնշման ու ստրկացման մասին՝ միւսի միջոցով, մէկ դասակարգի (հայ բուրժուազիայի) տնտեսական գերիշխանութեան ու ոտնձգութիւնների մասին և այլն:

Թուրք ժողովրդի quasi—ստրկացումը հայ ազգութեան կամ նրա ունէ հատուածի ձեռքով՝ պէտք է դիտել իբրև մի անկայուն պարադօքս և յետ մղել, առանց երկար ու բարակ բացատրութիւնների: Թուրք մասսայի հակահայկական զգացումներն ու գործողութիւնները չեն կարող բղխել հայի անտեսական ճնշումներից, այն պարզ պատճառով՝ որ նա, թուրք մասսան, չէ կարող տեսնել իրականութեան մէջ այդ ճնշումները: Իր ծայրայեղ տգիտութեան ու կուրուլթեան մէջ անգամ նա տեսնում է, որ զաւանանքում լայնատարած ու լաւագոյն հողերը պատկանում են իր կրօ-

նակից ազաններին, որոնք իշխում են ֆէօդալական իշխանութեամբ, ճնշելով և հայ և թուրք հողագործին. այո, անտարակոյս, թուրք ամենայնեօրին գեղջուկն անգամ պարզ տեսնում է, որ հայ աշխատաւորը նոյնքան «սեփականատէր» է, նոյնքան «հողատէր», որքան և ինքք: Իրողութիւնը հանրաժանօթ է և կարիք իսկ չը կայ զիմեւու ձեռնհաս հեղինակութիւնների: «Իսկական հայ ժողովուրդը, ասում է կովկասագէտ պրօֆէսօր Մարր, աւելի մեծ չափով պրօլետարիատի (գիւղական պրօլետարիատի) յատկութիւններ ունի, քան թէ Գուրիայի ժողովուրդը»: Նոյն գիտնականը հետեւեալն է ասում թուրքերի մասին. «Մուսուլման աշխատաւոր ժողովորդը մինչև օրս հեծալով հեծում է համակրօն ֆէօդալների ծայրայեղ ճնշման տակ» *):

Ամենքը գիտեն, ամբողջ Կովկասին յայտնի իրողութիւն է, որ Երևանի ու Գանձակի նահանգներում—երկու մեծ վայրեր, ուր հայ և թուրք ապրում են կողք կողքի—թուրք աղաւարներին ու բէգերին են պատկանում ամենալնտիր, ամենաարգաւանդ և ամենաընդարձակ հողարածիները, որոնք նախանձի առարկայ են լեռնային չոր ու անպտուղ մասերը գրաւող հայ ազգաբաղկութեան համար: Այլ բան է, որ նրանք չեն մշակում: Բայց ո՞վ է մեղաւոր... Ահա հսկայական տարածութիւններ՝ հարուստ ու բերրի Գոի աւազանով, Ղարս-Թիֆլիզեան ճանապարհի Սանահին կայարանից մինչև Բագու, ուր աշխատանքը հրաշքներ կը գործէր, ուր նա ամենաբազմատեսակ բերքերի լեռներ կը կազմէր,—բայց նրանք մնում են խոպան ու ամուլ, դառնում են միայն աւազակութիւնների լայնարձակ ասպարէզ: Այդպէս և շատ ուրիշ տեղեր: Մեղաւորը մեր գրացին ինքն է, իր անընդունակութիւնը տոկուն, յարատև ու արգիւնարար աշխատանքի: Որպէս զի այդ աշխատանքը դառնայ ներոյժ, ինտենսիւ՝ անհրաժեշտ է, տարաբախտաբար, շատ երկար ժամանակաշրջան... «Եթէ մի ազգ—իրաւամբ նըկատում է պրօֆէսօր Չուպրով—եթէ մի ազգ երկար ժամանակ ապրել է այնպիսի պատճառների ազդեցութեան տակ, որոնք չեն նպաստաւորել ուժեղ, կորովի աշխատանքը—ծուլութիւնն ու մեղկութիւնը աշխատանքի մէջ կը յարատևեն գեռ երկար ժամանակ, նոյն իսկ այդ մեղկութիւնն առաջացնող պատճառները վերանալուց յետոյ»:

*) Տես Петербургскія Вѣдомости, 1905 թ. № 272.

Կրկնում ենք, հողատէրը թուրք տարրն է և հէնց ընդհա-
րունքներէ վայրերում խոշոր կալածատիրութիւնը գոյութիւն ունի
թուրքերի և ոչ հայերի մէջ: Խաչէնի շրջանում—ասում է Ս. Զա-
ւարեան իր մի զեկուցման մէջ (Սովը Ղարաբաղում ու Զանգե-
զուրում)—35 հայկական գիւղերից պետական են միայն 3-ը, վա-
նական—չորսը և բէգական—28-ը: Վերջիններից 9-ի տէրերը հայ
մէլիքներն են, 19-ի տէրերը թուրք բէգեր: Ղափանի 32 հայ
գիւղերից 15-ը պետական են, 12-ը բէգական (4 հայ, 8 թուրք). և
նոյն պայմաններն են՝ Վարանդայի, Զիւանշիւրի, Զէրբայէլի,
Գանձակի և այլ գաւառներում:

Ղարաբաղի խաների ժառանգն ունի 30 գիւղ սեփական և
23 գիւղերի եկամուտները՝ մինչև իր մահը: Զաւատ աղա Զիւան-
շիւրը տէր է մի քանի տասնեակ գիւղերի, մեծ մասամբ հայ: Հայ
մէլիքների հողերը ըստ ամենայնի ողորմելի են, համեմատած
այն տարածութիւնների հետ, որոնց վրայ իշխում են թուրք խո-
շոր կալածատէրերը: Նոյն յարաբերութիւններն են տիրում Ե-
րևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-Պարալագեաղի և բազմա-
թիւ ուրիշ գաւառներում: Դեռ չենք խօսում Բագուի, Թիֆլիսի
նահանգների մասին: Հայ և թուրք հողագործները—հաւասարա-
պէս գերի են թուրք ֆէօդալ բէգերի ձեռքում...

Այդպիսով, եթէ ձնշում կայ ագրարային աշխարհում ժողո-
վրդական մասսաների վրայ—այդ ձնշումը գալիս է իրօք ոչ նայ,
այլ թուրք տարրի կողմից:

Ոմանք ենթադրում են, թէ թուրք հողատէրերը, աղղւած
Ռուսաստանի ագրարային մեծ շարժումներից և երկիւղ կրելով
մի գուցէ նման շարժումներ առաջ գան իրանց հպատակ իլօտներ-
ի մէջ՝ մտածեցին «գիվերսիա» անել, կուսցնել թուրք ու հայ
աշխատաւորներին, շեղել նրանց ուշադրութիւնը տնտեսական հա-
մերաշխ կուլի մտահոգութիւններից և այդ նպատակով նրանք յղա-
ցան թուրք-հայկական պատերազմը... Այս էլ մի բացատրութիւն
է, շատերից մէկը, որ սակայն լուրջ քննադատութեան չի դիմա-
նում: Դժւար թէ թուրք հողագործ մասսան ընդհարումներից ա-
ռաջ արտայայտած լինի ինքնագիտակցութեան և ըմբոստութեան
այնպիսի նշաններ և դժւար թէ հայ և թուրք հողագործ մասսա-
ների համերաշխութիւնը ագրարային շարժման հողի վրայ այն-
քան զգալի դարձած լինէր, որ երկիւղ ներշնչէր ազալարներին:

Դժուար թէ, վերջապէս, այդ վերջինները նման դիպածում լինէին ինքնարերարար յղանալ այդպիսի «դիվերսիաներ», ուշադարձութիւններ... Աւելի ճշմարտանման ենթադրութիւնն այն է, որ աղալարները շարժել են այն ուժեղ զարկի ազդեցութեան տակ, որ տեղ Բագուն:

Ի՞նչ ուրիշ ծնման մասին խօսք կարող է լինել հայի ու թուրքի յարաբերութիւնների մէջ: Լրջութիւն չի լինի, եթէ ծանրաննք հայ մանր բուրժուազիայի, մանր առևտրականների ու վաշխառուների «կեղեքումների» վրայ: Վաշխառութիւնը մեր գաւառներում մի ընդհանուր-կօսմօպօլիտական պատուհաս է, որի մէջ հայ և թուրք կարող են հաւասար աշողութեամբ մրցել իրար հետ: Թուրք «կուլակները» նոյնքան բազմաթիւ են և նոյնքան անողորմ՝ վաստակի մէջ:

Մանր առևտրականների կեղեքումները ևս չեն կարող մտնել «պատճառների» շարքը: Հէնց նաւթային մայրաքաղաքում, ուր կատարեց հայ-թուրքական ողբերգութեան առաջին արարածը, մանր առևտուրը կենտրոնացած է գլխաւորապէս թուրք տարրի ձեռքում...

Ողորմելի *натяжка*-ներ կը լինին նմանապէս, եթէ մենք ճշնշող ֆակտօր համարենք մեր գաւառների մի քանի անկիւններում ցիր ու ցան կանգնած մետաքսի և ուրիշ փոքրաթիւ գործարանները: Այդպէս անում են մեր նորընծաները սօցիալ-դէմօկրատների շարքերից, որոնք ձգնում են հաւատացնել, որ հայ բուրժուազիան իր ձեռնարկներով զբոսում է ֆէօդալ աղալարներին, արժարժում է նրանց մէջ յարձակողական ախորժակներ, որ, ուրիշ խօսքով, հայ-թուրքական ներկայ տագնապը իր քաղաքական պատճառներից դուրս՝ մի անխուսափելի ընդհարումն է երկու մեծ պատմական ուժերի—թուրք կազմալուծող ֆէօդալիզմի և հայ նորածագ բուրժուազիայի... Դա միայն գեղեցիկ հիպերբօլա է (աւելորդարանութիւն), մի շատ ու յախուռն ընդհանրացում և ուրիշ ոչինչ:

Բայց գուցէ՞ ճշում կայ հայերի կողմից խոշոր կապիտալի կամ ինդուստրիալի աշխարհում...

Թուում է թէ այդտեղ է հարցի կենտրոնը, նրա ամենափափուկ ու շահագրգռող կէտը: Այնտեղ, կովկասեան ինդուստրիայի

և մահմեդական աշխարհի սրտումն է, որ նիւթւել է հրէշային դաւադրութիւնը, այնտեղ է, որ նա առաջին անգամը իրագործւեցողներգական ու համաշխարհային շառաշուծով. այնտեղ 'ց է, որ դաւադրութիւնը ճիւղաւորուեց ամբողջ Անդրկովկասում, տարածելով իր հետ և արեան ալիքը... Որովհետև այնտեղ է, որ իր «աղ-գայնական» գործունէութեան խարխիս է հաստատել թուրք կապիտալիստ դասակարգը, նրա սպասաւոր մամուլը և նրա խնկարկու իդէօլոգիաների կուռ բանակը, ամբողջ մահմեդական e'tat-major-ը: Բագուն սկսել է, Բագուն թերևս կարող է և վերջ տալ արիւնոտ կոշմարին, եթէ կամենայ: Բնական է, ուրեմն, որ մարդիկ հարց տան, արդեօք այդտեղ, այդ վիթխարի հնոցում չէ՞ որ խաղացւում է, իբրև մի ահաւոր կրկէտի մէջ, թուրք-հայկական անտագօնիզմի մեծագոյն դրաման, արդեօք Բագւի պայմանների վրայ չէ՞, որ պէտք է կառուցանել կովկասեան արիւնահեղ ընդհարումների պատճառարանութեան ամբողջ շէնքը...

Եւ դարձեալ— ոչ:

Միամտութեամբ կամ չարամտութեամբ մտորւում են նըրանք, որոնք պնդում են, թէ նաւթաշրջանի ամբողջ արդիւնաբերութիւնը հայերի ձեռքումն է, թէ «ամբողջ բուրժուազիան— հայեր են»: Նոյն իսկ Պետերբուրգից և արտասահմանից յատուկ միասիայով զրկւած թղթակ ցնեքը իրանց անաչառ ուսումնասիրութիւններով հերքեցին այդ ըմբոստեցուցիչ թիւրիմացութիւնը, հաստատելով՝ որ հայ արդիւնաբերող պատրոնի կողքին կանգնած են թուրք, ռուս ու եւրոպացի պատրոններ, որ ընդամենը երկու խոշոր հայ ընկերութիւնների հետ— Մանթաշեան, Կասպեան— գոյութիւն ունեն երկու նոյնքան խոշոր թուրք ընկերութիւններ և երկու անհամեմատ աւելի խոշոր օտար Ֆիրմաներ— Նօրէյ, Ռօտշիլդ,— որ հայկական արդիւնաբերութիւնը նաւթային աշխարհում կազմում է ընդհանուր արդիւնաբերութեան հազիւ մի նրբորդը, որ թուրք կրեստները ամբարած են ու սնշարժացրած իրանց ամբախուռ սնդուկների մէջ դրամական ահռելի հարստութիւններ, որոնց համեմատութեամբ չնչին է հայերի դրամադուլիսը, որ թուրքական այդ հարստութիւնները, ստեղծւած են հայոց աշխատանքով, որ մանր առևտուրը, վաճառականութիւնը նոյն շրջանի մէջ կենսորոնացած է գրեթէ բացառապէս թուրք սարրի ձեռքում, որ թուրքի ձեռքումն են և քաղաքի տները և

լայնատարած նաւթահողերը, —հարստութեան այդ անսպառ աղբիւրը և այլն և այլն:

Ո՞ւր է ծնշումը: Ի՞նչն է այնպիսի յուսահատական ճիչեր թոցնում թուրք կրեսոտների և նրանց իդէօլօգիների նախանձոտ սրաից: Ի՞նչն է, որ բոլոր հայատեացիներին բոցավառում է վայրենի կրքով ու հրապարակ նետում անմիտ, տմարդի նշանախօսքը՝ «հայ կապիտալը—ահա՛ թշնամին»: Հայ կապիտալի ու կապիտալիստների փաստարանութիւնը չենք ուզում անել մենք. կանգնած լինելով աշխատաւոր ընդհանրութեան՝ շահերի տեսակէտի վրայ, մենք այդ շահերին թշնամի ենք դիտում կապիտալիզմը ընդհանրապէս, անկախ կրօնից ու ազգութիւնից: Բայց կայ մի այլ տեսակէտ—ճամբարութեան տեսակէտը՝ որ շիտակ ուսումնասիրողը երբէք չի կարող խեղդել որ և է ազանդական մտահոգութեան մէջ... Ո՞ւր է ծնշումը...

Իսկ այն չէ, ընթերցող, որ իբր «ամբողջ բուրժուազիան Բագում հայերն են»—անարժան մի սուտ, որ դարձեալ գալիս է սօցիալ-դէմօկրատներից—դա այն չէ, որ իբր թէ թուրքը զգում է իր կաշւի վրայ, իր հոգու խորքում հայ տնտեսական լուծն ու ճնշումը, այլ դա այն է, որ հայ «եկեոր» *) տարրը, կարողացել է 30—40 տարւայ ընթացքում, իր նախաձեռնութեան, ընդունակութիւնների շնորհիւ, պատկառելի դիրք զբաւել նաւթային աշխարհում, որ հայը ընդհանրապէս դժբախտութիւնն ունի հանդիսանալ, իբրև խոշոր կուլտուրական ուժ արդիւնարեբարկան կեանքի բոլոր ասպարէզներում, որ նա թափանցում է միշտ աւելի և աւելի սոււար թւով ինդուստրիական, առևտրական, բանկային ու այլ հաստատութիւնների մէջ, որ այնպիսի խոշոր հիմնարկութիւններ, ինչպէս են նաւթարդիւնարեբողների Սորհուրդը, Բօրսային մարմինը, Տեխնիկական ընկերութիւնը՝ գլխաւորապէս հայերի ձեռքումն են, (ոչ ոք, ի հարկէ, չէ արգելում նաև թուրք տարրին՝ բազմացնել իր ձեռնարկութիւնները և իր սոււար ներկայացուցչութիւնն ունենալ այդ հիմնարկութիւնների մէջ), որ հայ կապիտալը, ակտիւ, շարժուն ու նախաձեռնող, նետում է նորանոր

*) «Եկեոր» բառը, ինքնին միամիտ արտայայտութիւն է, որով թուրք շօվինիստ «հրապարակախօսը» սիրում է արհամարհոտ շեշտով յատկանշել հային, նրա քաղաքացիական իրաւասութիւնը ժխտելու համար: Այդ բառը սուալին անգամ սկսեց գործածուել Ազգայէլների զբաղանդութեան մէջ:

ձեռնարկները մէջ, մինչդեռ թուրքական ահագին դրամադուխները կամ անշարժ մրափում են, կամ թէ բռնեած են սոսկ վաշխառուական գործողութիւններով, հանդիսանալով էապէս սպեկուլատիւ մի ուժ, որ թուրքական վաղեմի տիրապետութեան այդ կենտրոնում «եկտր» հայր շինում է դպրոցներ, բարեգործական ու այլ հասարակական հիմնարկութիւններ, հիմնում է մամուլ, ստեղծում է ամբողջ մտաւոր մթնոլորտ, գրաւում է ազատ պրօֆէսիօնների ընդարձակ ասպարէզը, տալիս է բժիշկներ, ինժիններ, փաստաբաններ, որ հայ տարրը, մի խօսքով, հանդիսանում է պրօգրէսի մի խթան, անդուլ, բեղմնաւոր առաջադիմութեան ներկայացուցիչ, մինչդեռ իր դրացին արևելեան անշարժութեան կնիքն է կրում և այլն և այլն:

Այդտեղ է ահա հայկական անիծեալ «ճնշման» գաղտնիքը, այդտեղ է թուրք տարրի, թուրք «ինտելիգենցիայի» ու «հասարակութեան» դժգոհութեան պատճառը: Բայց այդ պատճառը բացառապէս, նոյն իսկ գլխաւորապէս տնտեսական չէ,—ինչո՞ւ խեղաթիւրել բառերի իմաստը—և այդ «ճնշումը» տեղական չէ ու դասակարգային չէ, այլ զուտ կուլտուրական: Նա գոյութիւն ունի ոչ միայն նաւթային մայրաքաղաքում, այլ բովանդակ Անդրկովկասում,—բոլոր վայրերում, ուր խառը ապրում են հայ և թուրք տարրերը: Ո՛չ, այդ չարարաստիկ «ճնշումը»—որքան էլ խորթ հնչէ ճնշում բառը խեղճ, հարածական մի ժողովրդի դիմաց—յատուկ չէ սահմանափակ մի շրջանի: Նա, ըստ երևոյթին, հայի բնութեան մի յատկանիշն է, նրա էութիւնից անբաժան մի բան: Չէ, թիւրքահայաստանում ևս հայը, ասում են, ծնող տարր է, նա «ճնշում է» քրդին, տաճկին, եղիդին... Չէ, սուլթանական բէժիմի տակ անգամ թշառ ժողովուրդը հանգստութիւն չունի տգէտ ու հայատեսաց «թէօրէտիկոսները» ձեռքից... Նա պիտի ջնջւի կամ իսպառ բթանայ, պիտի կորչի նրա մէջ գործունէութեան, նախաձեռնութեան ամեն յատկութիւն, կեանքի ամեն սաղմ, նրա բոլոր օրգանները պիտի անգամալուծւեն, ատրօֆիայի ենթարկւեն, ընդմիջտ պիտի մարի առաջադիմութեան հոյակապ ջահը, որ այդ վիրաւոր ժողովուրդը դարերից ի վեր անվկանդ տոկունութեամբ կրում է ասիական խաւարի միջից, նա պիտի նմանի, պիտի հաւասարի իր շրջապատին, այն ժամանակ միայն խաւարամոլ մարդա-

տեսցաները կը հանգստանան, կը դադարեն ատել բազմատանջ նահատակին, կը սիրեն նրան...

Հայ ժողովրդի համար մի իրական պատուհաս է դառնում այն հանգամանքը՝ որ հայ կապիտալիստը առհասարակ տարբեր է թուրք կապիտալիստից իր կրթութեամբ ու քաղաքացիութեամբ, որ տարբեր է և հայ աշխատաւոր դասակարգը՝ հայ միջին արհեստաւորն ու բանւորը, գործակատարը, ինտելիգենտը՝ իրանց վարժութեամբ ու յարաբերական գրագիտութեամբ, իրանց հետաքրքրութեամբ հասարակական հոսանքներով, և այդ դժբախտ տարբերութիւնն է — կուլտուրական, ոչ տնտեսական — որ անդրադառնալով թուրք զեկավարող դասակարգերի մտածողութեան վրայ, աղբիւր է դառնում այնքան թունոտ ատելութեան և թշնամութեան. այդ դժբախտ տարբերութիւնն է գուցէ, որ ներշնչում է պանխալմիստ ու խուլիգան e'tat-major-ին յանցաւոր միտքը, խիզախ, ուտօպիական ծրագիրը — դուրս մղել բռնութեամբ ատելի ոսոխին, ջնջել կամ գաղթեցնել նրան հեռո՛ւ «մուսուլմանական նահանգներից» — հեռու «թուրքական հայրենիքից»...

Ո՞րտեղ կը գտնէք նման կացութիւն: Եւ սիկ է մեղաւոր, որ հայ տարրը քաղաքակրթութեան տեսակէտից իր որոշ առաւելութիւններն ունի, սիր լօգիկայով կը բարեհաճէք արդարացնել այն հաւաքական և զիտակից Ոճրագործին, որը շէյթան-դահիճների հետ միաբանելով, դաւ է նիւթում դրացի ժողովրդի դէմ, այն պատճառով՝ որ չի հանդուրժում նրա մտաւոր, կուլտուրական առաւելութիւնները: Ո՞ր օրինադիրք, որ իրաւական կամ բարոյական կողքսն է հրահանգում՝ հաւաքական որս կազմակերպել մի ազգի վրայ, եթէ անգամ նա, այդ ազգը, ամբողջապէս բաղկացած լինէր գձուձ արծաթասէր չարչիւններից, անգամ եթէ նա նիւթական հարստութեան անյազ տենչով, բայց և խաղաղ, օրինաւոր մրցութեամբ, լոկ իր ներքին կարողութիւնների վրայ յենւած՝ իրօք գրաւէր ամբողջ երկիրը, հասնէր տնտեսական միահեծան տիրապետութեան, դուրս մղէր բոլոր հակառակորդ ուժերը...

Ի՞նչ կը լինէր, եթէ մի գեղեցիկ օր Անդրկովկասի որոշ կէտերում հայ գիւղական ազգաբնակութիւնը թրերով ու հրացաններով արշաւէր իր ծոցում բնակութիւն հաստատած գերմանական գաղութների դէմ, որոնք իրանց աւելի բարձր կուլտուրայով,

տնտեսական աւելի նուրբ մեթօղներով՝ ճնշող մրցակից են հանդիսանում և հետզհետէ ծաւալում են ու բարգաւաճում, ի հաշիւ տեղացիների...

Նրանց, որոնք տրամադիր են ներկայացնելու հայ ժողովուրդը, որպէս չարչի, վաճառական մի ժողովուրդ և որոնք պոռում են աջ ու ձախ, թէ հայը գաւթել է ամբողջ Կովկասի առևտուրն ու արդիւնաբերութիւնը—այդպիսիներին կուզէինք յանձնարարել ընթերցանութեան համար թէկուզ ոռու գրող պ. Սաղօսովի մի փաստացի յօդածը «Вся торговля находится-ли въ раках армянъ»? վերնագրով (Ամբողջ առևտուրը գտնուում է՞ արդեօք հայերի ձեռքում), որ զետեղած է հանգուցեալ Չանշեանի «Եղբայրական Օգնութեան» մէջ և, թէև դրած 9 տարի սրանից առաջ, հազիւ թէ ընդհանուր գծերով սխալ լինի ներկայ դրութեան վերաբերմամբ:

Կովկասեան արտահանութեան նիւթերի մէջ, ասում է Սաղօսով, առաջին տեղը ընդում է նաւթը և թւերով ցոյց է տալիս, որ նաւթի արդիւնաբերութեան, առևտրի ու արտահանութեան մէջ հայերի դերը չնչին է, որ գտնուում է օտարների ձեռքում:

Նաւթից յետոյ առաջին տեղը ընդում է մարգանց և սիմինդր: Այդ բերքերի թէ արտադրութիւնը և թէ արտահանումը գտնուում է դարձեալ օտարների կամ իմերետին կալւածատէրերի ձեռքում. այնտեղ՝ ոչ մի հայ:

Հանքերն ու հանքագործարանները ևս գտնուում են մեծագոյն մասամբ օտարների կամ ուղանների իշխանութեան տակ: Աղահանքերի ու ձկների առևտրի մէջ միայն՝ պատահում են մի երկու հայ ազգանուններ: Հայերի տեղը համեմատաբար աննշան է նաև գինու և օղիի արդիւնաբերութեան մէջ: Արտադրած սպիրտի հազիւ միայն $\frac{1}{6}$ մասն է դուրս գալիս հայերի գործարաններից: Կովկասում գտնուող 11 օղիի գործարաններից (1894 թւի հաշւով) միմիայն երկուսն են պատկանում հայերի և նրանք արտադրում են հազիւ միայն $\frac{1}{9}$ մասը ամբողջ կովկասեան օղիի քանակութեան:

Գարեջրի գործարաններ—18 հատ. ոչ մէկը՝ հայի:

Օխախտի գործարաններ—19 հատ. միայն 3-ը՝ հայերի: (Այժմ՝ այդ թիւը մեծացել է և մեծագոյն գործարանները հայերի ձեռքում են: Մ. Յ.)

Մեծաքսի գործարաններ—53. նրանցից 33-ը՝ հայերի: Բըղի՝ միայն մէկ գործարան—Ադելյանսօվի, Թիֆլիսում: Նա էլ գլխաւորապէս ընդունում է տէրունական պատւէրներ:

Լաւազոյն գորգերը պատրաստում են Շուշու գաւառում, թուրքերի մօտ. լաւազոյն մահուղները՝ Գաղստանում և Օսետիայում:

Չուգունի գործարանները կենտրոնացած են Թիֆլիսում, Բագում և Բաթումում և գրեթէ բոլորը պատկանում են օտարերկրացիներին:

Կաշի գործարաններ—200 հատ Կովկասում: Նրանց մէջ ամենամեծը հայ Ադելյանսօվինն է, Թիֆլիսում:

Քուժայիսի նահանգում գործատէրերի շարքում հայ չը կայ:

Լուցիկի գործարան—մէկը միայն, ոչ հայի:

Մնացած ճիւղերի վրայ Սազօնօվը կանգ չի առնում, համարելով նրանց միանգամայն աննշան:

Եզրակացութիւն: Գործարանական ու հանքային արդիւնաբերութիւնը Կովկասում (բացի նաւթից) շատ թոյլ է զարգացած, չը նայած արտադրող հում նիւթերի ահագին քանակութեան: Այժմ Կովկասի արտաքին առևտուրը, ոչ էլ գործարանային ու հանքային արդիւնաբերութիւնը չի գտնում հայերի ձեռքում. աւելի և՛ արդիւնաբերութեան ոչ մի ձեռքի մէջ հայերը չեն բռնում տիրապետող դիրք:

Դրա հետ միասին պ. Սազօնօվ հաստատում է, վիճակագրական տեղեկութիւնների վրայ յենած, որ Կովկասում հայ վաճառական տարրը կազմում է ամբողջ հայ ազգաբնակչութեան 6⁰/₀-ը միայն. մնացած 94⁰/₀-ը կազմում են հողի աշխատաւորներ ու արհեստաւորներ:

Ահաւասիկ պերճախօս թւեր այն բոլոր հայատեացիների համար, որոնց հաճելի է նոյնացնել հայ ժողովրդին իր փոքրաթիւ վաճառական դասակարգի հետ և սրա բարոյական մակարդակով չափել ամբողջ ժողովրդի ֆիզիօնօմիան:

Նոյն ցաւալի երևոյթն ենք դիտում, տարաբախտաբար, թէ այստեղ մեր շուրջը, թէ Տաճկաստանում և թէ Եւրոպայում: Ամեն տեղ հայատեաց ու շահախնդիր մոլեղնութիւնը գրոհ է տալիս հայ «սարբաֆներին» (գրամափոխ) ու վաշխատուների դէմ, որոնց իրաւ է, յաճախ են հանդիպում Կ. Պօլսում, Տրապիզօնում

ու թիֆլիսում...և տգէտ ու յաւակնոտ թեթեամտութեամբ սևացնում են 95⁰/0 հայ երկրագործ, աշխատաւոր ժողովրդին...

Եւ, երևակայեցէք, այդ զգւելի նախապաշարումից քիչ չի տուժում հայ նահատակ ժողովրդի դատը Արևմուտքում: Այդ տրգեղ յայտարարութիւնները յաճախ ու յամառութեամբ կրկնելով որոշ մամուլի էջերում, մի յայտնի չափով անդրադասնում են եւրոպական մասսաների և նոյն իսկ կրթեաժ քաղաքացիների տրամադրութեան վրայ և երբեմն կը լսէք նրանց բերաններից վիրաւորական բացականչութիւնը. «Ce peuple n'est pas bien inte'essant, cette cause n'est pas bien cypathique!» (Այդ ժողովուրդը այնքան էլ հետաքրքիր չէ, այդ դատը շատ էլ համակրելի չէ)...

Հայկական դատ—«սարբաֆների» դատ... մըմնջում են մարդիկ—քչերը, բարերախտարար—և ուսերը թոթում...

Այդ ֆրասակար նախապաշարումների դէմ է, որ տարիներից ի վեր Արևմուտքում մաքառում են հայ դատի բարեկամ օրգաններն ու քաղաքացիները, նկարագրելով, ի տես դնելով բուն թըշւառ, հարստահարեաժ հայ ժողովրդին—«Հայաստանի ազնիւ ու աշխատասէր զիւղացուն»,—ինչպէս Ձ տարի առաջ ասում էր անգլիական այժմեան միւնիստը Ջէյմս Բրայս:

Վերջապէս, միթէ՞ «վաճառականութիւն» կոչեաժ կատեղօրիան իր ներքին բնութեամբ մօտաւորապէս նոյնը չէ բոլոր երկրներում:

Ո՞րտեղ է նա սիրեաժ, գուրգուրեաժ... Հայ առևտրական տարրը, որ մի շնչին բեկորն է ամբողջ հայութեան, յայտնի է իր աւանդական արատներով, զրամի ստորացնող պաշտամունքով, դասակարգային բիրտ էգօյիզմով, որ տասնեակ տարիներից ի վեր հայ քննադատող միտքը մտրակել է ծայրայեղ խստութեամբ. բայց ռը երկրում, Արևելքի և Արևմուտքի ռը աղզի մէջ կը գտնէք բուն, ազնիւ, էտիկայի սկզբունքներին համապատասխանող առևտրական դասակարգ:

Եւ ռի՛ չը զիտէ, որ այդ արատները չեն սպառում վաճառականութեան սկզբունքի ամբողջ էութիւնը, որ այդ վերջինը իր բացասական գծերի հետ՝ ունի ամեն տեղ, պատմութեան բոլոր շրջաններում, իր դրական, քաղաքակրթող, աշխարհաշէն զերը, որ մասնաւորապէս հայ աշխարհում, Փոքր Ասիայի, Անդրկովկասի, Պարսկաստանի հօրիզօններում՝ հայ առևտրական տարրը հան-

դիսացել է դարերից ի վեր իբրև ճշմարիտ կուլտուրարէզեր, քաղաքակրթութեան շահակիր, իբրև միջնորդ Արևելքի և Արևմուտքի միջև: Դա մի ոյժ է, վաստակած գոյութեան անհաւասար ու փոթորկալի պայքարի մէջ, մի ոյժ, որ այսօր արևմտեան աշխարհում անգամ համարուած է զրուական ազգերի կենսունակութեան ու առաջադիմութեան: Այսօր Գերմանիան, Կոմմիւնիստները Կայգէրի պետութիւնը, ձգտումն ունի կարծես վերածելու առևտրական գործակալների մի հսկայական բանակի՝ արտահանելու, ծաւալելու, աշխարհը տնտեսապէս նւաճելու, բրիտանացուն՝ «Արևմուտքի այդ Հրէային» դուրս մղելու յամառ ձգտումով,— և ոչ ոք, ոչ մի իրական բարոյապիտական կողէքսով հարկ չի համարում բարկութեան ու ցասման շանթեր թափել գերմանական այդ անյազուրդ շահախնդրութեան, ծաւալման առթիւ:

Կենսունակութեան առաջադիմութեան զրուական... Այնտեղ, ուր չը կայ այդ ոյժը, ուր բացակայում է տնտեսական, առևտրական թռիչքը, ինիցիատիւնը,— այնտեղ սովորաբար կեանքը թմրում է, ճահճանում, միտքը բորբոսնում է և թունաւորում իր շրջապատը: Այդպէս է, օրինակ մեր մահմեդական զրացիների աշխարհում, ուր տնտեսական-առևտրական զարգացման անընդունակութիւնը տարաբխտաբար, չափազանց աղաղակող է... Զուր են, գո՛ւր պանիսլամիստ շէֆերը պարծենում հասարակական կարծիքի առաջ, իրանց ժողովրդի կուսական «բարոյականութեամբ», իրանց նահապետական «առաքինութիւններով», որոնք իսկապէս պատուհաս են միայն երկրի ընդհանուր առաջադիմութեան համար: Դառնանք հարցին:

Անտաղծնիզմը, այդպիսով, ընդհանուր է, համատարած. ոչ գուտ տնտեսական, այլ կուլտուրական. ոչ դասակարգային, այլ ցեղական-ժողովրդական: «Մեղաւորը» հայ կապիտալիզմը չէ, բուրժուազիան չէ, «մեղաւորը» Բագուն չէ, այլ ամբողջ հայ աշխարհը, ամբողջ հայ տարրի կուլտուրական առաջադիմութիւնը: Սրանից մի քանի տասնեակ տարի առաջ նախաշրջանը գոյութիւն չուներ, իբրև ինդուստրիական վայր և առհասարակ հայ կապիտալիզմը չը կար, բայց մենք վաստահանում ենք ամենպծական կերպով պնդել, ու Թուրքիի հաւաքական արշաւները և Թուրք-հայկական ընդհարումները Անդրկովկասում կարող էին առաջ գալ նաև սրանից 20—30 տարի առաջ, եթէ կառավարութիւնը նպաստաւորէր:

Ով որ ժխտէ այդ՝ կամ նա չի ճանաչում թուրք խուժանա-
յին տարրերին կամ թէ գիտակցաբար, սխալ հասկացրեա՞ծ «ին-
տերնացիօնալիզմի» ու «համերաշխութեան» միտումներով վարա-
դուրել է ուղում այդ տարրերի նկարագիրը: Իսկ մենք այդ հա-
մարում ենք ո՞ճրի դիմաց կրկնակի ո՞ճիր և, լինելով հանդերձ սօ-
ցիալիզմի ու համաշխարհային համերաշխութեան համոզեա՞ծ
պաշտպան, մենք անհրաժեշտ ենք սեպում և յանճնարարամ ենք
սխտամատիկաբար մերկացնել մեր անբախտ միջավայրում թա-
ղաւորող այն sui géne'ris հողերանութիւնը, որ քսաներորդ դա-
րում դժոխք է ստեղծում մի ամբողջ ժողովրդի համար, բռնանա-
լով նրա ոչ միայն առաջագիմութեան, այլ և գոյութեան վրայ:

Ի՞նչ կայ աւելի քստմնելի, քան վարագորելու այդ մեթօղը...
à la Ադայէվ, որը Բագւի առաջին կոտորածից յետոյ այնպէս կա-
տաղութեամբ պահանջում էր, որ մամուլը լռէր, որ «յանուն խա-
ղաղութեան» նա չը մերկացնէր թուրք խուժանի սխարագործու-
թիւնները: Ի՞նչ կայ աւելի թեթեամիտ ու աւելի յանցաւոր, քան
հայ Ֆիլիստէր-ինտելիգենտի ու դեռարուսիկ սօցիալ-դէմօկրատի
սիրած տակտիկան՝ աչքերը փակել կատարւող անլուր շահատա-
կութիւնների վրայ և քաւութեան նօխազի դերին արժանացնել
բարբարոսութեան ողջակէզ բերեա՞ծ հայ ժողովրդին...

IV

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԴՐՄԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Յառտ ճշմարտութիւններ

Թուրքական նախայարձակները և Ռուսաստանի մամուլը.—Պատճառները տնտե-
սական չեն.—Եւրոպական մամուլի գնահատութիւնները.—Times-ի ծայրայեղ
կարծիքը.—Temps լրագիրը և օրիեկախ ճշմարտութիւնը.—Հայերը երբէք նա-
խայարձակ չեն եղել.—Արեւելեան ատաւիղմը.—Կուլտուրական հակադրութիւնը
երկու ժողովուրդների մէջ.—Լուիջի Վիլլարի.—Քաղաքականութեան կռիւր բար-
բարոսութեան դէմ.—

Պէտք է խոստովանել, որ Ռուսաստանի և Եւրոպայի խոշոր
մամուլը—չենք խօսում «Նօվօյէ Վրեմիայի» ու նրա գոյնի օր-
գանների մասին—այդ տեսակէտից աւելի ծառայութիւն մատու-

ցին ճշմարտութեան և հայ ժողովրդին: Շատ աւելի օրինակաբար կերպով ուսու եւրոպացի հրապարակախօսները ի ցոյց դրին բուն, թափանցիկ իրողութիւնը և հասարակական ուշադրութեանը մատնեցին իսկական պատասխանատուներին: Եւ այդ օրդանները իրանց հեղինակաւոր թղթակիրացների բերանով չը բաւականացան աջ ու ձախ կրկնելով շարժո՞ւ-Փրազը բիւրօկրատիայի մասնակցութեան մասին, մի բան, որ աւա՞ղ, արեւի պէս պարզ է. նրանք աւելի խորը գնացին արիւնոտ պրօբլեմի վերլուծման մէջ և քաղաքական պատճառներից դուրս՝ տեսան ուրիշ կարգի պատճառներ ևս—մտաւոր, հոգեբանական, ցեղական-կուլտուրական և այլն:

Անհնարին է նոյն իսկ համառօտիւ ամփոփել այստեղ այն միութարական և անաչառ տեսութիւնները, որ «Русь», «Новости», «Право», «Биржевыя Вѣдомости» և այլն—չենք էլ յիշատակում զուտ սօցիալիստական օրդանները, «Сынъ Отечество» և ուրիշները—նւիրեցին կովկասեան անլուր աղէտներին, ծանօթացնելով հանգամանօրէն ահռելի իրականութեան ֆակտօրների հետ, լուսարանելով թուրքական գրոհի ճշմարիտ իմաստը:

Կուզէինք միայն մի երկու յատկանշող անել, որոնք, իրաւ է, ծանօթ ճշմարտութիւններ պիտի պարունակեն, բայց ի՞նչ արած... Պէտք է յար և միշտ կրկնել, արծարծել այդ հանրածանօթ ճշմարտութիւններն անգամ, մինչև որ նրանք խոր թափանցեն անգիտակիցների ու ֆօրմուլաներով հմայածների ուղեղները, որոնք ինչոր մետաֆիզիկական «անաչառութեան» ցաւով բռնւած՝ ուզում են անպատճառ միեւնոյն սև տախտակի վրայ դնել ամեն բան, ուզում են անպատճառ մեղաւոր ճանաչել յմէկին և միւսին, նոյն իսկ յաճախ փորձում են փաթաթել դահիճների մեղքը՝ զօհերի շնքին...

Ո՞վ սկսեց այս արիւնալի վակիսանալիան և ինչո՞ւ... Ո՞վ էր, որ առաջին անակնկալ նախայարձակից ու ջարդից յետոյ առաջ միեւն կանոնաւոր պատերազմը, նոր մասսային նախայարձակներով ու սարսափներով... Ո՞ւմ գործն է այդ նգովեալ, այդ հսկայական արագեղիան, որ գուցէ դեռ չի արտասանել իր վերջին խօսքը, որ գուցէ դեռ հէնց մօտ ապագայում պիտի ցնցէ մեզ նոր աղէտալի անակնկալներով... Ո՞ւմ յղացումն է նա,—հայ ժողովրդի՞, հայ բուրժուազիայի՞, հայ խուժանի՞...

Թող խօսեն օտար հրապարակախօսները: Մեղաւորը մենք չենք, եթէ նրանց գրաւոր վկայութիւնների մէջ գտնեն աննւապաստ, անախորժ շեշտեր այս կամ այն կողմի վերաբերմամբ:

Եւ մեր «ազգային հպարտութեանը» գոհացում տալու նպատակով չէ, որ առաջ կը բերենք օտար գրողների ներբողները հայ ժողովրդի հասցէին: Մեզ միայն մի բան է հետաքրքրում—արդարացնել հայ նահատակ ժողովուրդը այն զաղրելի, այն պատմական դատաւճոխ առջև, որ արձակել է մի գծում ու շահախնդիր արէօպագ. մաքուր ու անբիծ դուրս բերել այդ ժողովուրդը եղբայրասպանութեան ու հակայեղափոխութեան ամբաստանութիւններից:

«Новости»-ի մէջ *) գրում էր Ստարցև, կովկասեան նախկին ոռու հրապարակագիրը, որ ոչ թուրքերի թշնամի է եղել, ոչ էլ քայլել է առհասարակ, իբրև լուրջ, անաչառ ու դէմօկրատ գրող:

«Անցեալի խորհրդաւոր ծոցից—ստում է Ստարցև—բարձրացաւ մի հրէշ, որ սպառնում է ոչնչացնել այն բոլորը, ինչ որ ստացել է բազմաթիւ սերունդների աշխատանքով, ինչ որ քաղաքակրթութիւնը արտադրել է Կովկասում:

«Ինչ տեսլ, երբ մի ամբողջ ժողովուրդ, սկսած իր առաջնորդներից մինչև զելագրները, բարձրանում է մի ուրիշ, բոլորովին անմեղ ժողովրդի դէմ և անխնայ կոտորում նրան: Հայ նաճողները պահել են արդեօք մահմեդականներին գերութեան, ստրկութեան մէջ: Կամ արդեօք կեղեքել են նրանց, քամել են վերջին հիւթերը: Ամենակին»:

Ապա պատմելով, թէ ինչպէս սկզբներում ոռու կառավարութիւնը խտրութիւն չը դնելով ազգութիւնների մէջ և թոյլ չը տալով մահմեդականներին, առաջւան պէս, հալածել հայերին, զգալի թեթևութիւն էր առաջացրել վերջինների կեանքում՝ Ստարցևը շարունակում է.

«Այդ փոքրիկ թեթևութիւններն իսկ բաւական եղան գործօն ու օժտած հայերի համար, որպէս զի նրանք թօթափէին իրանց միջնադարեան ասիական կեղերը: Այդ նրանք արին, առանց որևէ աջակցութեան ոռու իշխանութիւնների կողմից: Հագիւ անցաւ մէկ-երկու սերունդ—և հայերը դարձան Կովկասի ամենաքաղաքակրթ ժողովուրդը:

«Փախչելով կղզիացումից, նրանք սիրով յաճախում էին ոռուտեան զբոսները (ինչ կասեն հայ ազգային «առանձնացման» առթիւ կուրճ ծծողները. Մ. Յ.), սովորում էին և աշխատում: Նրանք ստեղծեցին մտաւորականնե-

*) Թերթի համարը, զժրտխտարար, մոռացած է յիշատակել: Այս և յետագայ քաղաածները տպւած են «Մշակի» 1906 № 22-ի մէջ:

րի ամբողջ դասակարգ և գրականութիւն: Նրանք գրաւեցին առաջին տեղերը մտաւոր աշխատանքի բոլոր ասպարէզներում:

«Զարմանալի չէ, որ նրանք գերակշռող դեր վաստակեցին և հասարակական կեանքում: Թուրքերը մնացին վաղեմի թուրքերը. և ես բոլորովին հասկանում եմ այն տտեղութիւնը, որ պիտի զգային նրանք, տեսնելով երեկւայ սորուկ, ճնշւած ու հալածական հայերին՝ կեանքի մէջ առաջին տեղերն ստացած, տատիւ ու աղբեցութիւն վայելելիս»...

*

«Հայերը, ասում էր չափաւոր ազատամիտ «Русь» լրագիրը իր ոռւս թղթակից Նանդի բերանով, հայերը ցոյց տւին իրանց Կովկասի մէջ ուժեղ մի ժողովուրդ, աշխատաւոր ու արթուն գիտակցութեամբ... միշտ անհանգիստ, յաւերժօրէն շարժուն ու երազուն և միշտ ձգտող դէպի անյայտ իդէալներ...»

«Մահմեդական ազգաբնակութեան մաստան ընազդօրէն հասկանում է հայերի այդ դերը, ուստի ոչ միայն նրա աւանդական թշնամութիւնը չէր նւագում, այլ միշտ աւելի և աւելի աճում էր նա, քանի աւելի էին հայերը իւրացնում Եւրօպական կեանքի ձևերը...»

«Ի՞նչ որ էլ լինի,—նրանք, որոնք պնդում են, թէ Թուրք-հայկական ընդհարումը բացատրում է տնտեսական պատճառներով՝ նրանք կամ քրննում են խնդիրը կատարեսլ տգիտութեամբ, կամ թէ աշխատում են դիտմամբ Թող փչել աշխարհի աչքին... Բազուն մահմեդական մեծ կենտրոն է ոչ միայն Անդրկովկասի, այլ և Պարսկաստանի համար: Բազւի մահմեդականների հարստութիւնները ստեղծւել են գրեթէ բացառապէս հայերի ձեռքով, դրա պատճառը այն է, որ թուրքերը ընդհանրապէս փախչում են աշխատանքից ու Փինանսական դորժողութիւններից և գրեթէ բացառապէս դրամ են փոխ տալիս ու գրաւ են դնում հողերը... Կայ և այլ հանգամանք. թուրքի պահանջները չեն աւելանում. նա շարունակում է հագնել իր խալաթը և ստանալ իր 20 կոպէկանոց ճաշը բազարից: Իսկ թուրք մանուկները չեն յաճախում նոյն իսկ երկրորդական դպրոցները... Թուրքերը ունին իրանց ձեռքում ամենահարուստ հողերը. ինչ վերաբերում է Բազւի միլիօնատէրներին՝ Մանթաշիանի պէս հարուստներ թուրքերի մէջ կան տասից աւելի: Այդպիսով, այն առասպելը թէ անտագոնիզմը բացատրւում է տնտեսական պատճառներով,—գուրկ է որևէ հիմքից»:

*

Անցնենք Եւրօպա:

Times-ի, Temps-ի, Frankfurter Zeitung-ի պէս համաշխարհային օրգանները ծանրանում են թուրք ամբոխի առանձնայատկութիւնների վրայ և փաստացի յօդաձևների մէջ ներկայացնում են նրան իբրև մի տեսակ անխրոնիզմ (ժամանակավրէպ) իր միջավայրում: Նրանք միաժամանակ նկարագրում են հայ և թուրք տարրերի քաղաքակրթական խոր հակադրութիւնը, ձգտումների ու իդէալների հիմնական տարբերութիւնը և այլն: Երբեմն այդ օրգանները իրանց արտայայտութիւնների մէջ հասնում են ծայրայեղութեան: Այդպէս, օրինակ, Լօնդօնի Times-ը իր մի յօդաձևի մէջ *) խօսում է «թուրքերի թալանողական բնազդերի» մասին (the predatory instincts of the tartares): Յօդաձագրի կարծիքով՝ այդ «թալանողական բնազդները» միացած բիւրօկրատիայի քաղաքակա-նութեան հետ՝ եղել են աղէտների զլխաւոր պատճառներ:

Պարիզի Temps-ը, որի ղեկավարները երբէք անկեղծ համակրութիւն չեն ցոյց տւել դէպի հայերը, հետևեալն էր գրում իր մի խոշոր յօդաձևի մէջ, «Կովկասեան խռովութիւնների» առթիւ **).

...«Օրինելիւ ճշմարտութիւնը այլ է. այնպիսի ազգաբնակչութիւնների մէջ, որոնք սարսափում են աշխատանքից, հայերը հրաշալիօրէն դորձունեայ են. այնպիսի անձերի մէջ, որոնք դորձ չեն հասկանում, հայերը սիրում են դորձել և աջողում են. շուայլների մէջ նրանք խնայող են: Ահա նրանց աջողութեան իսկական պատճառները: Ահա իսկական պատճառները և նրանց դէմ զըր-դուող ստելութեան»:

Այս յօդաձագիրը մի քանի տեղեկութիւններ հաղորդելով հայերի ունեցած դժգոհութիւնների մասին՝ շարունակում է.

«Բայց և այնպէս, ամենքին յայտնի է, որ հայերը նախայար-ձակ չեն եղել երբէք, այլ միշտ միայն պաշտպանւել են: Այն յայտ-նի ասացածքը, որ թէ «միշտ անդէն մարդիկն են, որ կոտորում են», ոչ մի տեղ այքան ճիշտ չէ, ինչպէս Կովկասում»:

Մի այլ համարում Temps-ի թղթակիցը վառ դոյներով պատ-կերացնում է կռւտուրական խոր հակադրութիւնը կովկասեան երկու կռուող տարրերի մէջ ***): Մինչդեռ հայերը, նրա ասելով, «ա-

*) Տես 1905 թ. սեպտ. 25-ի համարը, յօդաձ Times-ի կովկասեան թղթակցի:

**) Այդ յօդաձը ամբողջապէս թարգմանւած է «Մշակի» 1905 թ. յու-լիս 14-ի համարում (№ 136):

***) Տես Temps-ի մէջ 1905 թ. սեպտ. 15-ի նամակը Կովկասից, յատուկ միասխայով զրկւած իր թղթակցից:

ւելի կրթւած և աւելի աշխատաւոր, քան կովկասեան միւս ժողովուրդները, ներկայացնում են խելքն ու ինտելիգենցիան», թուրք ժողովուրդը «ունի պահպանողական մի կուսակցութեան մտավիճակը, նախանձախնդիր ականդութիւնների և յարգող ցարի վեհապետական իշխանութեան»:

«Արեւելեան ատաւիզմը—չարունակում է պարիզեան խոշոր ու չափաւոր օրգանը—և նոյն իսկ մահմեդական կրօնի հրահանգները ազատ են պահում նրանց, թուրքերին՝ արեւմտեան ազատաշունչ գաղափարների վարակումից, որոնցով տողորում են հայերը»...:

«Matin» լրագրի ուշիմ թղթակից Քաստօն Լեռօու, նոյնպէս զրկւած յատուկ միասխայով, մի մարդ, որին նոյնպէս չի կարելի մեղադրել հայասիրութեան ու թրքատեսացութեան մէջ, որը միանգամայն անաչառ արձանագրողի դեր էր ստանձնել, հետեւեալն էր գրում նաւթային աշխարհից *).

«Երկու ցեղերին անդունդ է բաժանում... Հակադիր յարակցութիւններ (affinités), ներհակ բնազդներ և քաղաքակրթութեան մի իդէալ, որ մինը հետապնդում է, միւսը յետ է մղում... Թուրքերը կուրօքէն յանձնառու են լինում (հայատեսաց կառավարութեան առջև) պատժել մի ազատամիտ, հակապետական ժողովուրդ, որը ղէնց իր իդէալով ահարկու մի ոյժ է բռնապետական կառավարութեան համար... **):

Հետեւեալ թղթակցութեան մէջ, սեպտ. 21-ին Լեռօուն ևս ջրում է տարածւած կարծիքը՝ հայերի իբր զրկող ու հարստահարող դերի մասին և ընդգծում է այն իրողութիւնը, որ «թուրքն է հողատէրը» և որ փողային հարստութիւնը ևս նաւթաշրջանում անհամեմատ աւելի մեծ է թուրքերի ձեռքում:

Ինչպէս պարզ տեսնում է ընթերցողը վերը բերած քաղւածներից, եւրոպացի ուսումնասիրողները ևս, ծանօթանալով մեր պայմանների և ընդհարումների բնոյթին, եկել են այն եզրակացութեան, որ թուրք ազգաբնակչութիւնը միանգամայն հակալեզգիտական Վանդէայի դեր է կատարել Անդրկովկասում...:

Այդ նոյն կարծիքն է պաշտպանում և հրապարակախօս Լուիջի Վելլարի իր մի բովանդակալի յօդւածի մէջ, որ տպւած է Լօն-

*) Տես Matin-ի մէջ Gaston Leroux-ի 1905 թ. սեպտ. 20-ի թղթակցութիւնը:

**) Ստորագծողը մենք ենք:

դօնի նշանաւոր հանդէսի, «Fortnightly Review»-ի 1906-ի փետրուարի համարում:

Յօդւածի թեման է՝ «Կովկասեան անիշխանութիւնը և հայոց հարցի նոր շրջանը»: Պ. Վիլլարի, անտարակոյս, Կովկասեան անցքերի ամենալուրջ ուսումնասիրողներից մէկն է, ուստի փոքր ինչ կանգ կառնենք նրա այդ յօդւածի վրայ: Հեղինակը ուսումնասիրել է իրողութիւնները տեղն ու տեղը, մեծ առատութեամբ փաստեր է հաւաքել, ունեցել շփումներ բոլոր տարրերի, նոյն իսկ վարչական բարձր շրջանների հետ, եղել է փոխարքայ Դաշկովի մօտ—և ահա նա փորձում է անաչառ, անկողմնապահ լուսարանութիւն տալ մեր երկրում խաղացող ահռելի ողբերգութեան:

«Սոսովութիւնները ծագում են բնակիչների ցեղական ու կլորօնական բաժանումներից, բայց նրանք առանձին գոյն ու զարկ են ստանում շնորհիւ այն ընդհանուր անիշխանական զրուութեան, որ տիրում է ուսաց կայսերութեան մէջ».—այսպէս է սկսում յօդւածի հեղինակը և այնուհետև ուրևազծում է մի քանի խօսքով հայ ժողովրդի դժբախտ պատմութիւնը, նրա դարաւոր հալածանքները, որոնք ի վերջոյ յանգեցին տաճկական կոտորածներին և թուրքական արիւնահեղ բռնկումներին... Պատմում է, թէ ինչպէս Ալէքսանդր 11-ի օրով թեաւորում էին հայկական տնայանքները, զարկ էր տրւում տաճկահայոց ազատագրական շարժման, անարդի զարգանում էր հայկական կուլտուրան Անդրկովկասում, բայց յետոյ եկաւ սև շրջանը, հակահայկական քաղաքականութեան էրան:

Ռուս-տաճկական պատերազմից և Ալէքսանդր 11-ի սպանութիւնից յետոյ—ասում է Վիլլարի—ոուսաց քաղաքականութիւնը բոլորովին փոխեց: Սպանւած կայսրի չափաւոր ազատամտութիւնը տեղի տւեց մի սոսկալի բէակցիայի՝ նրա որդու գահակալութեամբ: Անցան պանսլաւօնական հին իդէալները, չքացաւ նրա հետ և հին թէօրիան՝ Ռուսաստանի պատմական առաքելութեան մասին, Ռուսաստանի՝ իբրև արևելեան քրիստոնեաների, հովանաւորի: Նրանց տեղը բռնեց նեղ ոուսական նացիօնալիզմը, որի ձրգտումն էր՝ ոուսացնել կայսրութեան բոլոր օտար հպատակներին:

Միւս կողմից Ռուսաստանը անհրաժեշտ գտաւ համաձայնութեան գալ Տաճկաստանի հետ՝ թէ Մեծ Բրիտանիային դուրս մղելու համար Մերձաւոր Արևելքից և թէ ինքնապաշտպանութեան

նպատակով: Այդպիսի համաձայնութեան առաջին պայմաններէց մինը եղաւ այն՝ որ Ռուսաստանը պէտք զգաց երես դարձնել հայերից և զէ՛մ գնալ նրանց հակաթուրքական դաւադրութիւններին: Նոյն այդ քաղաքականութիւնը անդրադարձաւ և Ռուսաստանի ներքին քաղաքականութեան վրայ:

Եւ սկսեցին հալածանքները... Յօղածագիրը նկարագրում է Գօլիցինեան ըէժիմի վայրենութիւնները, որոնք յանգեցին եկեղեցական կալւածների յափշտակութեան: Այստեղ նա ծանրանում է համատարած ու զօրեղ խմորման վրայ, որ առաջ եկաւ հայ ժողովրդի մէջ այդ աւազակային յափշտակութիւնից և որ արտայայտեց շատ տեղերում զինւած մասսային ապստամբութեամբ: Նկարագրում է պ. Վիլլարի, թէ ինչպէս հայ մարտական կազմակերպութիւնը հանդէս եկաւ այդ բռնութիւնների միջոցին և սկսեց իր բռնն, խենթային գործունէութիւնը, նախ ինքնապաշտպանութեան հողի վրայ, ապա և ձուլեց ընդհանուր Ռուսաստանի ազատագրական շարժումների հետ: Կառավարութիւնը, գլուխը կորցրած այդ փոթորկոտ ազիտացիայից՝ զիմեց աւելի բարբարոս միջոցները—նա դիմեց Թամարների օգնութեան...

Հայ-թուրքական հակամարտութիւնը—շարունակում է պ. Վիլլարի—ունի բազմազան պատճառներ: Կայ նախ և առաջ կրօնական տարբերութիւնը: Կայ և այն հանգամանքը՝ որ հայերը, թուրք խաների այդ վաղեմի ստրուկները, զեր են խաղացել այդ խաների իշխանութեան կործանման մէջ և ձգտել են միշտ զէպի Ռուսաստանը: Թուրք ազալարները չեն մոռանում այդ հանգամանքը: Այդ էլ մի զուտ քաղաքական պատճառ: Ձր պէտք է, սակայն, կարծել—աւելացնում է յօղածագիրը—թէ այդ ազալարները ոռուսաց տիրապետութեան տակ իսպառ զրկւել են իրանց արտօնութիւններից: Ընդհակառակը, նրանք դեռ ունեն մեծ իշխանութիւն, նրանք գործադրում են մեծ ազդեցութիւն թուրք մասսաների վրայ, որոնք զարբերից ի վեր սովորել են հլու հպատակութեան, բաւական չէ այդ. ոռու կառավարութիւնն ընդունում է այդ ազալարներից շատերին իր ծառայութեան ու ազմինխտրացիայի մէջ: Բազմաթիւ գաւառներում պօլիցիականներն ու դատաւորները թուրքեր են: Թուրքական հարստութիւնները ևս պատկանելի են և ընդհանուր առմամբ թուրքերն աւելի հարուստ են, քան հայերը, որովհետև հողը մեծ մասամբ պատկանում է թուրքերին:

«Բազում նրանք ունեն իրանց ձեռքում տների մեծագոյն մասը և նախահողերը, ստանում են լայն չափերով ր է ն ս ա: Նոյն քաղաքում նրանց ձեռքն է գտնուում նաև առետրի մեծ մասը: Աւելին կայ. նրանք վարում են չափազանց պարզ կեանք, ծախսելով միայն իրանց եկամտի մի չնչին մասը, մինչդեռ հայերը հակումն ունեն ասպրելու եւրոպացու պէս, հոյաշէն ու շքեղ սնելում, ճանապարհորդելու արտասահմանում և զրկելու իրանց զաւակներին արտասահմանեան համարարանները:

«Մի ուրիշ էական տարբերութիւնն այն է՝ որ թուրքերը բնականից պատերազմատէր են, ինդուստրիական կեանքի անընդունակ և անյիշատակ ժամանակից ի վեր, հակած դէպի թաւան ու յափշտակութիւն, մինչդեռ հայերը խաղաղատէր են և դժւար, չարքաշ աշխատաւոր:

«Թուրքերից շատերը նոսաղ են, թափառական. ամառը նրանք անցնում են լեռները և ձմեռն դէմ իջնում են դաշտերը իրանց նախիրներով ու հօտերով: Այդ քոչերի միջոցին նրանք յաճախ զինւած ընդհարումներ են ունենում նստակեաց հայերի հետ: Կան ամբողջ թուրքական դիւղեր, որոնք ուրիշ պարագանք չունեն, բացի թալանից, և նոյն իսկ իրանք խաները խիստ նմանում են միջնադարեան աւազակ բարձներին»...

Այս էլ զուտ էսոնոլոգիական պատճառ: Պ. Վիլլարի ուզում է կատարելապէս անաչառ լինել և խօսում է նաև հայ տարրի «զըր-զըրիչ» յատկութիւնների մասին:

«Պէտք է ընդունել միւս կողմից, որ հայերը յաճախ զրգոիչ ու ամբարտաւան են մասնաւորապէս թուրքերի դիմաց, որոնց նրանք համարում են մի ստոր ցեղ... (?)»

«Հայերի ազդեցութիւնը, ասում է նա, տարածւում է տարէց տարի. այնպիսի գաւառներ, ուր տաջները մի հայ անգամ չը կար, այժմ լցւած են հայերով, և ամեն մի վայր, ուր նրանք հաստատուում են՝ դիտւում են նրանց կողմից՝ իբրև «հայկական ազդեցութեան շրջան»: Այդպէս Թիֆլիսում, Վրաստանի հին մայրաքաղաքում, թէև հայերի թիւը ամբողջ բնակչութեան 40 տոկոսից ցած է (?) բայց նրանք ճնշող մեծամասնութիւն են կազմում քաղաքային դրամայի մէջ և իրապէս կառավարում են քաղաքը: Գանձակում, ուր թուրքերը վճռական մեծամասնութիւն են կազմում, հայերը մինչև վերջին ժամանակ կօնտրօլ ունէին գումայի վրայ: Բազում հայ արդիւնաբերողները ունեն իրանց ձեռքում արդիւնաբերական ձեռնարկների 35 տոկոսը, և չը նայած, որ հայերը ազգաբնակչութեան 1/5 մասն են՝ այնուամենայնիւ նրանք կազմում են մեծամասնութիւն քաղաքային խորհրդի մէջ»:

Ընթերցողը ինքը կը նկատէ եւրոպացի թղթակցի վրիպումները:

«Այդ բոլոր հանգամանքների պատճառով—շարունակում է նա—հայերը չունեն ժողովրդականութիւն. «նրանք նոյնքան չեն սիրւած վրացիներից, որուներից և օտարներից, որքան և թուրքերից, Թէպէտ և ատելութիւնը առաջ է

գալիս նոյնքան հայերի լաւ յատկութիւնների, որքան և նրանց պակասութիւնների շնորհիւ» *) :

Շատ ճիշտ նկատում է յօղևածագիրը, որ կովկասաբնակ եւրոպացիք առհասարակ հայերի նկատմամբ «այնքան էլ անաչառ չեն ինչպէս այդ թուում է»: Նա նկարագրում է հայ արհեստաւորի, հայ գիւղացու աշխատասիրութեան ու այլ առաքինութիւնների մասին, ցոյց է տալիս այն խոր տարբերութիւնը, որ կայ հայ և թուրք աշխատաւորի մէջ:

Ապա նա անցնում է վերջին տարւայ արիւնոտ անցքերի նկարագրութեան, պատմում է Նակաշիձէների ու Ալիխանօֆների սիրագործութիւնները, բացատրում է ռուս բիւրօկրատիայի և թուրք խաւար մասսաների յարաբերութեան զաղտնիքը, բացատրում է և հայ մարտական կազմակերպութեան պաշտպանողական դերը: Խօսում է և պանխլամիզի մասին, համարում է օսմանեան վրտանգը երևակայական. «թուրքերը չափազանց անհասկացող ու տգէտ են՝ որ և է ընդհանուր քաղաքական գաղափար ըմբռնելու չամար»: Ոչ մի կասկած չը կայ, որ նրանք (թուրքերը) նիւթել էին կանոնաւոր մի դաւադրութիւն և որոշել էին օգտուել կառավարութեան հակահայ քաղաքականութիւնից ու նրա ժամանակաւոր թուլութիւնից՝ իրանց սոսխներին դուրս քշելու, կոտորելու և կողոպտելու նպատակով»...

Հայերը, ասում է Վիլլարի, նւիրւած են կրթութեան գործին և ջանք ու դրամ չեն խնայում՝ ուղարկելու համար իրանց որդոց լաւ դպրոցներ: Կան Ասիայի հեռաւոր խորքերում հայ անգլրագէտ գիւղացիներ, որոնց զաւակները ուսանում են Պետերբուրգում, Բէրլինում կամ Պարիզում: Կովկասի մէջ նրանք միակ տարրն են իսկական քաղաքակրթութեան և ես համոզւած եմ, որ նրանք ի վերջոյ պիտի դառնան գերիշխող ցեղ, պիտի խաղան միլենոյն դերը, ինչ որ բուլղարները խաղում են Բալկաններում: Նրանց մեղադրում են երկչոտութեան մէջ, որովհետեւ, երբ նրանք անգէն են, զինւած թուրքեր ու տաճիկներ առանց դժարութեան կոտորում են նրանց: Բայց նրանք յաճախ ցոյց են տւել, որ հաւասար պայմաններում նրանք գիտեն շատ լաւ պաշտպանել իրանց:

«Հայերը ունեն լուրջ պակասութիւններ, ինչպէս ես շեշտեցի, բայց այն պակասութիւնները մեծ մասամբ հեռանք են նրանց տրագիկական պատմու-

*) Նօտրադիրը ամեն տեղ մերն է:

թեան, մինչդեռ նրանց առաքինութիւնները այնպիսիներէց են, որոնց արժէքը պիտի աճի քաղաքակրթութեան առաջադիմութեան հետ: Եթէ Ռուսաստանը իմաստութիւն սովորէ, նրանք կը հանդիտանան շատ օգտակար մի տարր՝ թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ: Որովհետև առանց հայերի բարեկամութեան, ոչ մի ազգ չէ կարող տիրել Միջին Արևելքում:

Եթէ միայն Ռուսաստանը իմաստութիւն սովորէր... Յօլ-լաժապիրը վկայում է, որ Վօրօնցով-Գալիցիայի հետ Գօլիցինեան շրջանի մասին խօսելիս՝ Փոխարքան ասաց իրան. *Cette de'sastreuse politique de Galitzine* (Գալիցինեան աղէտալի քաղաքականութիւնը)...

Որքան կծու հեգնութիւն են պարունակում այդ խօսքերը... Ի՞նչ կասէին արդեօք կովկասեան բերօկբատները իրանց սեփականութիւնը հայցող եւրոպացի թղթակիցներին այժմ՝ երբ հայկական գաւառները հազարաւոր կողոպտւած, բռնաբարւած գոհերը մինչև երկինք են աղաղակում, երբ վայրենի, կաննիրալական օրդանների դիմաց՝ խաւարում, մոռացւում են Գօլիցինեան շրջանի արհաւիրքները:

Աւելի ընդարձակօրէն Լուիջի Վիլլարի պարզեց իր հայեացքները անգլիերէն լեզուով հրատարակած իր աշխատութեան մէջ, «*Fire and Sword in the Caucasus*» վերնագրով (Հուր և սուր Կովկասում): Այստեղ նա ուղղակի յայտարարում է, որ Կովկասեան կոտորածները «մի մասն են այն կուրի, որ մղում է ժամանակակից քաղաքակրթութիւնը ասիական բարբարոսութեան դէմ, ոչ միայն Կովկասում այլ և Ռուսաստանում...»):

*) Տես գրքի համառօտ ընկերակիւն Тиф. Л. 1906 թ. № 15.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՆԴԷԱՅԻ *) ՆԵՐՔԻՆ ԲՆՈՅԹԸ

Ոճրականութիւնը Անդրկովկասում

Նօրմալ ժամանակ.—Թուրք տարրի բռնած տեղը ոճիրներէ տարեգրութեան մէջ.—Փաստեր.—Մարքսիստ դրողի վկայութիւնները.—Հօրգայական ընազդներ և արհամարհանք դէպի մարդկային կեանքն ու դոյքը.—Ոճրականութիւնը և ցեղադրական պայմանները.—Էնրիկօ Ֆեւրի.—Մարքսիստի.—Ծանօթ իրողութիւններ.—Հայադաւ քաղաքականութիւնը.—Զուլած ընազդները թուիչք են անուամբ.—Թուրք մասսան հակայեղափոխութեան դրօշակակիր.—

«Եւմ Ալի վնյ գեաւուրին»—հնչում է գոռ մարտահրաւէրը, և վայրկենաբար, ասես գետնի տակից, դուրս են կոչուում սպառազինւած բանակներ, զալիս են հեռւից, սահմանի միւս կողմից, զալիս են և մօտիկից, հայ ժողովրդի հէնց քթի տակից, նրա երեկւայ հաշտ ու մտերիմ բարեկամներն անգամ, նրա աղ ու հացը վայելողները, նրա ընտանեկան օջախի աշնաները մի գարհուրելի, հօրգայական վրէժխնդրութեամբ, ատամները կրճտացնելով, ծառանում են նրա դէմ. «Տներ ստացւածքդ, կամ տուր կեանքդ»... Մենք պարզապէս նախապատմութեան մէջ ենք, ընթերցող, որքան էլ աշխատենք վարագուրել դաժան, անողորմ իրականութիւնը, որքան էլ ուզենանք ինտեր-նացիօնալիզմի ու համերաշխութեան մտահոգութեամբ մեղմել զժողային, սիրտ կըտարատող իրողութիւնները, մենք կատարեալ նախապատմութեան մէջ ենք, այն մտայլ շրջանում,—երբ մարդկային ցեղերը, անասնական տեսակների պէս, գիշատիչ ախորժակներով բռնւած, գրոհ

*) «Վանդէա» բառը տիեզերական դարձաւ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան օրերում: Այդ անունը կրող Ֆրանսիայի արևմտեան մի ամբողջ դաւառ, սկսած ազնականներից մինչև հողեւորականներն ու զիւղացիները՝ 1793-ից կռիւ էր հրատարակել մեծ յեղափոխութեան և նրա ոահմանած կարգերի դէմ, յանուն արքայական բռնապետութեան «սրբազնագոյն» իրաւունքների: Մի կըռփու, որ երկար ընդհատումներով շարունակեց մինչև անցեալ դարու 30-ական թւականները, երբ նա վերջնականապէս խորտակեց: Այդ ժամանակներից ի վեր, աշխարհիս բոլոր կողմերում, ամեն մի հակայեղափոխական արշաւանք, ամեն մի մասսային կռիւ, ուղղւած մի ժողովրդի ազատագրական թուիչքների դէմ—որակւում է «Վանդէա» անունով:

էին տալիս իրանց նմանների դէմ, երբ բռնի ուժը, «վայ յաղթ-
լածին» աղաղակելով, խրոխտ ու յաղթական սաւառնում էր իր
արիւնոտ նախճիրների վրայ...

Դա նախամարդու մոլեգնութիւնն է, արբած արիւնով, վա-
նօղի հօտով, ռազմի աղաղակով, դա զարհուրելի ատաւիզմն է, որ
վերադարձնում է մարդուն իր հեռաւոր նախնիքների ախորժակ-
ները, որ հասցնում է նրան մինչև անասնութեան աստիճանը: Դա
այն իրողութիւնն է, որ Times-ը որակում է «predatory instincts»
բառերով, որ Ստարցել անւանում է «անցեալի ծոցից բարձրա-
ցող հրէշ»,—մի իրողութիւն, որ իր ահարկու պարզութեան մէջ
վաղուց ծանօթ է ամեն մի կովկասեցու...

Ո՞վ մեզինց չը գիտէ, որ նոյն իսկ սովորական նօրմալ ժա-
մանակ աւազակութեան ու մարդասպանութեան համաճարակը—
որ հաւասարապէս մատչելի է թուրք բէգերին ու կիսապրօլետար
գեղջուկներին—իսկոյն բռնում է սար ու ձորեր, հէնց որ Ան-
դրրկովկասեան այս կամ այն գաւառի գլուխ է կանգնում մի
թոյլ գաւառապետ, մեղմ միջոցների սիրահար: Եւ ո՞վ չը գիտէ,
որ համաճարակը կտրւում է անմիջապէս, հէնց որ «նաչալնիկը»
փոխւում է, հէնց որ գալիս է «խիստ միջոցների» ներկայացու-
ցիչը...

Հարկաւոր է արդեօք փաստեր ու ապացոյցներ բերել՝ պար-
զելու համար մեր հարեան թուրք ազգաբնակչութեան անհանգիստ
տարրերի բռնած տեղը Կովկասեան աւազակութիւններին, քրէա-
կան ամեն տեսակ ոճիրների արհաւրալի տարեգրութեան մէջ...

Մենք այդ էլ կանենք, սակայն, և այդտեղ, այդ փափուկ
կէտում մենք վկայութեան կը կոչենք մի նորագոյն հակիրճ հե-
տազօտութիւն, հրատարակւած «Տիֆլ. Լիստօկ» լրագրի մէջ և
որի հեղինակը, պ. Ֆիլիպպով, ըստ երևոյթին թունդ մարքսիստ
է, ուղղափառ մարքսիստ, որովհետև նա ամեն քայլափոխում հը-
րապարակ է գալիս մարքսիստական տերմինօլօգիայով, իր ամ-
բողջ նիւթը լուսաբանել է ձգտում տնտեսական մատերիալիզմի
հրահանգներով:

«О преступности закавказскаго населенія» վերնագրով*)
(Անդրկովկասեան ազգաբնակչութեան ոճրականութեան մասին) իր

*) Тифл. Л. 1906 № 121

հետաքրքրական տեսութեան մէջ պ. Ֆիլիպպով ուզում է պարզել այլ և այլ էտնօգրաֆիական (ցեղագրական) տարրերի մասնակցութիւնը յանցանքների մէջ, նրա տւած համեմատական տօկոսը և նա ընաւ չի կարծում—իր բազմաթիւ մտալախ կուսակիցների պէս—թէ ճշմարտութիւնը մերկացնելով, կարող է անպատեղի վիրաւորել այս կամ այն տարրի ցեղական ազգայնական դիւրագոյացութիւնը:

Նախ մի քանի հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս պ. Ֆիլիպպով ոճրի էութեան մասին: Ոճրի հասկացողութիւնը, ասում է նա, մշտական, անփոփոխելի բան չէ,—նա փոխում է իր բովանդակութիւնը՝ հասարակութեան կուլտուրական զարգացման հետ: Մի բան, որ կուլտուրայի որոշ աստիճանի վրայ համարւում է ամենաանմեղ բանը,—նոյնը կարող է հասարակական կեանքի մի այլ կազմի մէջ դառնալ ծանր յանցանք, արժանի ամենաժանր պատժի:

Ուստի և որեւէ ժողովուրդ, որ ժամանակակից համաշխարային մօրալի տեսակէտից հակամէտ կը դիտուի դէպի ոճրագործութիւն,—այդ ժողովուրդը կարող է ինքն իրան ընաւ չը համարել ոճրագործ, և այն ինչ որ ներկայ հասարակական յարաբերութիւնների մէջ համարւում է անպայման ոճիր,—նոյնը յիշեալ ժողովրդի կենսապայմաններում կարող է նոյն իսկ դիտուել իբրև առաքինութիւն: Այդպէս է, օրինակ, հէնց վենդետայի կամ արեան վրէժխնդրութեան սրեոյթը:

«Անդրկովկասի ազգաբնակչութեան նկատմամբ յաճախ ըստուգւած է, որ նա ցոյց է տալիս, այսպէս ասած, փոքր ինչ թեթև վերաբերմունք դէպի քրէական ոճիրները—սպանութիւնները, վիրաւորութեանը և այլն: Դա կատարելապէս իրաւացի է, բայց ոչ Անդրկովկասի ամբողջ ազգաբնակչութեան, այլ միայն նրա մի մասի վերաբերմամբ. և, յիրաւի, կարելի բան չէ որ հասարակական գրուպաները, որոնք գտնուում են սօցիալական-տնտեսական սանդուղքի տարբեր աստիճանների վրայ, ցոյց չը տան խիստ տարբերութիւն՝ *) մարդկային հանրակենցաղի այնպիսի մի հիմնական հարցում, որպիսին է՝ վերաբերմունքը դէպի ուրիշի կեանքն ու անձնատրուածիւնը:

«Այդպէս է և իրօք: Մարդասպանութիւնները անազին տօ-

*) Նօտագիրը ամեն տեղ մերն է:

կոս են կազմում այն յանցանքների ընդհանուր թւի մէջ, որոնք տեղի են ունենում Բագւի, Երևանի և Գանձակի նահանգներում, ուր ամեն տարի նահանգական ատեանի կողմից պատժի դատապարտւած յանցաւորների մօտ կէսը, երբեմն նոյն իսկ կէսից աւելին դատապարտւում են մարդասպանութեան համար: Այս երեոյթը արժանի է ամենաուշագիւր հետազօտութեան: Թէ տեղական և թէ մայրաքաղաքի մամուլը բաւական զբաղել է աւազակութեան հարցով Կովկասում, բայց աւազակութիւնը էպպէս մէկն է միայն հասարակական բարքերի որոշ դրութեան արտայայտութիւնների, ուստի կարելու է պարզել մեզ՝ ինչպէ՞ս է ստեղծուում ժողովրդական մասսայի այս կամ այն բարոյական Ֆիզիօնոմիան: Ճարարախտաբար, տեղական ազգաբնակչութեան յանցաւորութեան խնդրի բազմակողմանի ուսումնասիրութեան համար—չը կան անհրաժեշտ նիւթեր մեր աղբատիկ վիճակագրական հրատարակութիւնների մէջ: Ակամայ ստիպւած էք բաւականանալ այն սակաւաթիւ փաստերով, որ գտնում էք այդ լղար տետրակներում, որոնք անւաւանուում են ամենամեայ տեսութիւններ (обзоры) Անդրկովկասի նահանգների ու շրջանների և որոնք սովորաբար կցւում են ամենահպատակ հաշիւ-զեկուցումներին: Դրանց մէջ, մի քանի տեղերում նահանգական ատեանի կողմից դատապարտւածները բաժանւած են, ըստ կրօնի»:

«Սակայն—շարունակում է պ. Ֆիլիպպով—յանցաւորների դատաւորումը, ըստ իրանց կրօնի՝ ամենևին բաւական չէ ընտրողելու համար ազգաբնակչութեան ոճրական խաւերը:—Կրօնը, ասում է նա, միայն որոշ ազդեցութիւն է ունենում ազգաբնակչութեան ոճրականութեան վրայ, կամ իբրև զսպող, կամ իբրև թոյլատրող սկզբունք. բայց ոճրականութեան իսկական աղբիւրները պէտք է փնտրել ոչ թէ այդտեղ, կրօնի մէջ, այլ արւած հասարակական զրոպպայի սօցիալական-տնտեսական փիճակում:

«Մեր օճօրք-ներում չը կան տեղեկութիւններ յանցաւորութեան պարապմունքի եզանակի և նիւթական կացութեան մասին, ուստի երբ մենք քննում ենք տնտեսական ֆակտօրի ղերը տեղական ազգաբնակչութեան յանցաւորութեան մէջ, ստիպւած ենք լինել, մասամբ այն Թէրիական դրութիւնների վրայ, որոնք բոլորում են ուրիշ ժողովրդների մէջ գտնւած համանման իրողութիւններից, մասամբ էլ այն տնտեսական կեանքի ընդհանուր բնաւորութեան վրայ, որ մենք գտնում ենք

Անդրկովկասի որոշ տեղերում և ազգաբնակչութեան որոշ խմբում-ներին մէջ»:

Մարդկային կեանքի արժողութեան չափը—ասում է Ֆիլիպպով—նրա աշխատանքի արդիւնաւորութիւնն է (производительность его труда) և եթէ այսօր, քաղաքակրթութեան բարձր աստիճանների վրայ կանգնած ժողովուրդների մէջ մարդկային կեանքը աւելի է յարգւում, աւելի բարձր է գնահատւում,—այդ տեղ հումանիստ, մարդասիրական վարդապետութիւնները բնաւ դեր չունեն, այլ դրա իսկ պատճառն այն է, որ տեխնիկական ատաջարիմութեան շնորհիւ, բարձրացել է մարդու աշխատանքի արգասաւորութիւնը...

Չը ծանրանանք այդ ուլտրա-մատերիալիստական և վիճելի հայեացքի վրայ, որը տրամադիր է իսպառ ժխտել կրթութեան ու քաղաքակրթութեան ազդեցութիւնները մարդկային համայնքների վրայ և նետել նրանց տնտեսական Ֆատալիզմի գիրկը.—անցնենք պ. Ֆիլիպպովի միւս հետաքրքրական յայտնութիւններին, ուր նա խօսում է Թերի լեզով: Նա արձանագրում է, որ 20-րդ դարի արշալոյսին Անդրկովկասի ազգաբնակչութիւնը արդիւնաբերական ուժերի զարգացման տեսակէտից շատ ցած է կանգնած, որ նա իր մշակողական գործիքներով վերաբաղւում է երկրագործական կուլտուրայի առաջին քայրերը: Արձանագրում և այն՝ որ թուրք ազգաբնակչութեան մի պատկառելի մասը—Բագււի, Գանձակի և մասամբ Երևանի նահանգներում—կիսա-թափառական կենցաղ ունի և պարապում է խաշնարածութեամբ: 1897 թւում կատարւած перепись-ի համաձայն՝ Անդրկովկասի ամբողջ թուրք տարրի 60/0 ապրում է խաշնարածութեամբ. Բագււի նահանգում այդ տոկոսը բարձրանում է 7-ի, իսկ Գանձակի նահանգում—անցնում է 8,280/0-ից:

Մինչդեռ գլխաւորապէս խաշնապահութեամբ ապրող հայերի թիւն է $1\frac{1}{2}$ 0/0 միայն: Երեք յիշեալ նահանգների մէջ խաշնարածութեամբ ապրում են 80 901 թուրք և 4124 հայ. թուրքերի ընդհանուր թիւն է այդ նահանգներում (համաձայն 1897-ի մարդահամարի)—1,332,408, հայերինը 785,421. «Թափառական, խաշնարած կենցաղը, ասում է Ֆիլիպպով, ինքնատիւրեան մի յայտարար է մարդկային աշխատանքի արդիւնաբերութեան խըղձուկ վիճակի և նա այն հողն է, ուր ճոխ ու առատութեամբ

ծաղկում է կուպիտ անարգանքը, արհամարհոտ վերաբերումը դէպի ուրիշի կեանքը և բացասումը անհատի ամեն իրաւունքների»:

Շարունակենք պարոն Ֆիլիպպովի խօսքերով.

«Անդրկովկասի թուրք ազգաբնակչութիւնը իր ընդհանրութեամբ այսօր դեռ ապրում է տնտեսական զարգացման ստորին շրջանները, ուստի և զարմանալի է նր նա ապշեցնում է ուրիշ հասարակական-տնտեսական միջավայրում մեծացած դիտողին՝ կեանքի ու պատւի դէմ կատարած իր ոճիրների առատութեամբ»:

Ահա և թւերը, քաղած նոյն Օճօրք-ներից. Բազւի նահանգում սպանւած է՝

1900 թւին	—	324	մարդ
1901-ին	—	391	»
1902-ին	—	416	»
1903-ին	—	440	»
1904-ին	—	468	»

Գանձակի նահանգում սպանւած է՝

1900 թւին	—	499	մարդ
1902-ին	—	416	»
1903-ին	—	905	»

Տաս տարւայ ընթացքում, 1893-ից մինչև 1902 թ. միմիայն Բազւի նահանգում, ընկել են մարդասպանների ձեռքից՝ 2889 մարդ. իսկ Գանձակի նահանգում 9 տարւայ մէջ (չը հաշւելով 1901-ը) սպանւել են 4042 մարդ: Միջին թւով, ուրեմն, իւրաքանչիւր տարի սպանւում է՝

Բազւի նահանգում	289	մարդ
Գանձակի	450	»

Քանի որ Գանձակի նահանգի ազգաբնակչութեան ընդհանուր թիւն է (1897-ի մարդահամարի համաձայն)՝ 878,415 մարդ (երկու սեռի), իսկ Բազւի նահանգինը 826,716 մարդ,—ապա ուրեմն իւրաքանչիւր տարի՝

Սոաջինում՝ 1952 հոգուց միջին թւով մէկը ընկնում է մարդասպանի ձեռքից.

Երկրորդում՝ 2860-ից մէկը:

Այդպէս է իրերի վիճակը, այն նահանգներում, ուր զերակշռող տարրը կազմում է թուրք ազգաբնակչութիւնը: Արդարև, թուրքերի թիւն է՝

Գանձակի նահանգում—մօտ 61⁰/₀ ընդհանուր ազգաբնակութեան.
Բագլի » —մօտ 60⁰/₀ » »

Տեանենք ինչ պատկեր է ներկայացնում Երևանեան նահանգը: Այնտեղ թուրքերը կազմում են ազգաբնակութեան մօտ 38⁰/₀: Տաս տարւայ ընթացքում (1893—1902) ամբողջ Երևանեան նահանգում սպանւած է 1304 մարդ, ուրեմն՝ միջին հաշուով իւրաքանչիւր տարի 130 մարդ. կամ ուրիշ խօսքով իւրաքանչիւր 6381 հոգուց ընկնում է տարեկան 1 մարդ:

Թւերը աւելի հրահանգիչ են դառնում, երբ քննում էք սպանութիւնների հարցը ըստ ցեղական միութեան: Երևանեան նահանգի մասին հաւաքած վիճակագրական չոր թւերը պարզում են մեզ թուրք ազգաբնակութեան խաղացած դերը ընդհանուր ոճրականութեան մէջ: Օճօրթ-ների մէջ վերջին 8 տարում (1897—1904) դատապարտւածները դասաւորւած են ըստ կրօնի և դասնութեան:

Եւ դուրս է գալիս, որ այդ 8 տարւայ մէջ զանազան ոճիրների համար դատապարտւած են 2801 մարդ, որից 1739-ը կամ 62⁰/₀-ը մահմեդականներ են: Նկատեցէք, որ դա Երևանեան նահանգումն է, ուր մահմեդականները կազմում են ընդհանուր ազգաբնակութեան 42, 2⁰/₀ միայն:

Օճօրթ-ները վկայում են նաև որ մահմեդականները բոլոր տեղի ունեցող ոճիրների մեծագոյն թւի հեղինակ լինելով հանդերձ՝ առանձնապէս աչքի են ընկնում սպանութիւնների, վիրաւորումների և աւազակութիւնների մէջ:

Եօթ տարւայ մէջ (1897—1904) դատապարտւած են 1165 մարդասպաններ, որոնցից 879 հոգի կամ 75,45⁰/₀-ը մահմեդականներ են: Նոյն ժամանակամիջոցում մարդկանց ծեծելու, վիրաւորելու համար դատապարտւած են 151 հոգի, որից 113-ը, այսինքն 74⁰/₀-ը աւելի քան մահմեդականներ են: Աւազակութեան համար դատապարտւած են 48 մարդ, որից 39-ը կամ 81⁰/₀-ը դարձեալ մահմեդականներ են:

Այդպէս ուրեմն Երևանեան նահանգի ոչ-մահմեդական ազգաբնակութիւնը—որ կազմում է ամբողջ բնակչութեան ³/₅-ը—բաժին է ընկնում հազիւ ¹/₄-ը միայն այն ոճրագործների, որոնք դատապարտւած են մարդասպանութեան համար, և ¹/₅-ը միայն

այն յանցաւորներն՝ որոնք դատաւարուած են աւազակութեան համար:

«Ասպ ուրեմն, եզրակացնում է պ. Ֆիլիպպով, Անդրկովկասեան ազգաբնակչութեան յանցագործ տարրերը արտադրում է կուլտուրապէս չափազանց յետամնաց՝ մասնադական կամ ճիշտ կը լինէր ասել, թուրքական մասսան»: (Слѣдовательно преступные элементы закавказскаго населенія дають крайне отсталая въ культурномъ отношеній мусульманская, точнѣе татарскя масса):

Այդպէս է անա վկայում պ. Ֆիլիպպով, տնտեսական մատերիալիզմի և անշուշտ նաև սօցիալ-դէմօկրատիզմի շերտ փաստաբաններին մինը: Նա թւերի պերճախօս լեզուով մերկացնում է և հրապարակ հանում մէկը մեր Կովկասեան իրականութեան ամենացաւոտ վէրքերին, որը և միայնակ բաւականաչափ լոյս է սփռում ներկայ հակայական տրագեդիայի վրայ... Մի բացառութիւն մեր սօցիալ-դէմօկրատներին մէջ... Չը գիտենք, թէ ինչպէս են դատել պ. Ֆիլիպպովի այդ վարմունքը՝ Կովկասեան «ընկերները», որոնք á tout prix համերաշխութիւն են գոռում, առանց քննելու ցաւոտ, ախտաւոր իրականութեան խորունկ պատճառները, համարելով նման «մերկացումները» մի տեսակ պրօֆանացիա իրանց ամեն բան հարթող ու հաւասարեցնող և միանգամայն սխալ ըմբռնւած դօքտրինի համար:

Այնուամենայնիւ, պ. Ֆիլիպպովը ևս տալիս է առատօրէն իր հարկը սօցիալ-դէմօկրատական ֆրազիօլօգիային: Երևոյթների լուսաբանութեան մէջ նա ևս կիրառում է ապրիօրիստական մեթօդը Սէմինի և այլոց նման ի չարն է գործ դնում տնտեսական մատերիալիզմը և դատում է անալօգիաներով, նմանութիւններով: Նա յենւում է մասամբ—ինչպէս ինքն է ասում—«այն թէօրիական դրութիւնների վրայ, որոնք ըզխում են ուրիշ ժողովուրդների մէջ գանւած համանման իրողութիւններից», և թուրք տարրի արտադրած մեծածաւալ ռճրականութիւնը բացատրում է միայն և միայն նրա տնտեսական-արդիւնարեւակական պայմաններով, բացատրում է նրանով, որ «արևելեան Անդրկովկասում ներկայումս մուտք է գործում քաղաքային տնտեսութիւնը, որը դուրս է մղում հին բնական տնտեսութիւնը (Naturalwirtschaft):

Բացատրութեան այդ եղանակը օրիգինալ է, բայց ոչ բոլորովին համոզեցուցիչ: Արդիւնաբերութեան էւօլիւցիան և պա-

րապմունքների եղանակը, անտարակոյս, մեծ ազդեցութիւն ունեն ժողովուրդների բարքերի վրայ, բայց քիւրդը, օրինակ, իբրև համայնք, իբրև մասսա, չի սպասել փողային անտեսութեան մուտք գործելուն՝ որպէս զի իր անդադրում ու աղաղակող ոճիրներով կատարեալ նահատակութեան մատնէ մի ամբողջ ժողովուրդ— իր դրացի հայ խաղաղ ժողովրդին:

Անվիճելի է, որ սօցիալական տարկանոնութիւնները— անհահաւասարութիւն, չքաւորութիւն, կարօտութիւն և այլն— շատ մեծ ազդեցութիւն ունեն յանցագործութեան վրայ, սակայն նրանք միակ պատճառները չեն: Բացատրեցէք, օրինակ, այն փաստը՝ որ Ունգարիայում տարեկան 7—8 անգամ աւելի է մարդ սպանուում, քան Իրլանդիայում:

Անկարելի է վերագրել այդ՝ երկու երկրների անտեսական պայմանների տարբերութեան, որ այնքան էլ մեծ չը պիտի լինի: Ժամանակակից ոճրագիտական շկօլան, որ ունի փայլուն, աշխարհահռչակ ներկայացուցիչներ՝ անտեսական ու սօցիալական մօմէնտներից զատ՝ տեսնում է նաև ուրիշ մօմէնտներ ոճրի էութեան մէջ. նա մեծ տեղ է տալիս նաև զուտ բնական ֆակտորներին, — ցեղական խառնաձօքին, բնազդականութեան, զրգոտղութեան (Impulsivität) և այլն: Նրա տեսակէտից՝ ոճրագործութիւնը հանդիսանում է որոշ չափով իբրև աստախտական մի երեւոյթ, որ վերարտադրում է նախնի դարերի մարդկային բիրտ հոգեբանութիւնը:

Իսկ այդ հոգեբանութեան տիրապետող զծերն են— ըստ Վիլէլմօ Ֆէրրերօի— զրգոտղութիւնը և տոկուն, յարատև աշխատանքի բացակայութիւնը (այդպիսի աշխատանքի անընդունակ լինելը):

Էնրիկօ Ֆէրրի, Իտալիայի սօցիալիստ կուսակցութեան պարագլուխը և յիշեալ դպրոցի տաղանդաւոր ներկայացուցիչներից մէկը, ցոյց է տալիս՝ կրիմիալ ստատիստիկայի վրայ հիմնաւած՝ որ րասան, ցեղը, այդ զուտ բնական (և ոչ սօցիալական) ֆակտորը ահազին տարբերութիւններ է մտցնում ոճիրների համեմատական սոկոսի մէջ: Առաջ բերենք նրա «L' Omicidio» գրքից մի քանի թւեր, որոնցով հռչակաւոր սօցիալիստը պարզում է տարբեր ժողովուրդների տարբեր հակումը դէպի մարդասպանութիւն:

Իւրաքանչիւր մէկ միլիօն բնակիչներին տարեկան սպանում է

Իտալիայում	—	96,9	մարդ
Սպանիայում	—	76,7	»
Աւստրիայում	—	24,4	»
Շվէյցիայում	—	12,9	»
Դանիայում	—	12,4	»
Գերմանիայում	—	10,7	»
Հօլլանդիայում	—	5,6	»
Անգլիայում	—	5,6	»
Շօթլանդիայում	—	5,0	»

Պարզ է, որ ոճրագործութեան երևոյթը (la criminalite) սերտ կապակցութիւն ունի ցեղական առանձնայատկութիւնների հետ. նրա զարգացման մէջ դեր են խաղում քաղցի տնտեսական և կուլտուրական պատճառներից նաև արիւնը, բնութիւնը, խառնւածքը, որոնք տարբեր են մի շվէյցի և մի իտալացու մէջ, մի անգլիացու և մի ունգարացու մէջ, մի սպանիացու և մի ավստրիացու մէջ: Այստեղ, այս հիմնական ու ծանրակշիռ խնդրում ևս իր ակնբեր անբաւարարութիւնն է ցոյց տալիս մարքսիզմը կամ տնտեսական մատերիալիզմի թէօրիան, որը յաւակնութիւն ունի մարդկային հանրակենցաղի բոլոր երևոյթները վերածելու նիւթական, տնտեսական մօտիւններին: Ինչպէս որ անհատական ոճիրների մէջ առհասարակ մեծ դեր են խաղում անհատների օրգանական առանձնայատկութիւնները (զուտ բնական մի Փակտօր, որ կապ չունի անհատների տնտեսական կենսապայմանների հետ)—այնպէս և հաւաքական ոճրականութեան մէջ դեր են խաղում հասարակական օրգանիզմի զուտ ցեղադրական, անտրօպօլօգիական առանձնայատկութիւնները, որոնք, անշուշտ, քաղաքակրթութեան էւօլյուցիայի հետ փոփոխուում են աստիճանաբար, թէև խիստ դանդաղ:

Դառնանք Վանդէային: Ռուս իրաւաբաններն ու ոճրագէտները ևս յաճախ մատնացոյց են լինում նոյն իրողութեան վրայ, նոյն ցեղադրական տարբերութիւնների վրայ և նրանք ևս արձանագրում են նոյն տխուր փաստը, որ հրապարակ են բերում Կովկասեան Օճօօրք-ները. այսինքն՝ որ մահմեդական տարրերն կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ մի առանձին հակումըն են ցոյց տալիս գէպի ամին կարգի ոճիրները և մասնաւորապէս գէպի մարդասպանութիւն:

Սօսելով Սիբիր արքայազնների մասին՝ պ. Ս. Վ. Մաքսիմով ասում է իր «Сибирь и Катормга» մեծահատոր ուսումնասիրութեան մէջ.

«Այն նահանգների ցանկում, որոնք տեղի են մարդասպանութիւնների ամենամեծ թւերը, առաջին տեղը զբաղեւ են այլացիկ նահանգները և գլխաւորապէս նրանք, որոնք բնակւած են մահմեդական օրէնքը զաւանդ ժողովուրդներով»: (Եր. 196):

Մի այլ տեղ նոյն գրքում ասւած է.

«Թաթարների վրայ (на татарь) ընկնում են ամենածանր սճիրները,—մարդասպանութիւն, թալան ու աւազակութիւն *):

Չերկարացնենք: Թւում է թէ վաղուց հանրածանօթ ու banal դարձած ճշմարտութիւններ ենք յիշում,—վաղուց մեր թշւառ իրականութեան մէջ արմատացած գծեր, որոնց մասին ամենից լաւ տեղեակ են հէնց իրանք, մշտնջենական զբացիութեան մէջ ապրող տարրերը—հայ ժողովուրդը (Անդրկովկասում ու Տաճկաստանում) և մահմեդական ժողովուրդները՝ թուրք, քիւրդն ու տաճիկը...

Այն, պարզ, անզբաղէտ հայ գիւղացին՝ տաճկահայը, թէ կովկասահայը՝ կը վկայէ ձեզ, առանց խորիմաստ Ֆօրմուլների գիմելու, լոկ իր պապերի ու իր ամենօրեայ փորձի վրայ յենւած՝ որ իր անօրինակ դժբախտութիւնների պատճառը մուսուլման ազգաբնակչութեան անտեսական իրաւազուրկ դրութիւնը չէ, որից ինքն էլ տառապում է գէթ հաւասար չափով, «հողազրկութիւնը» չէ, «պրօլետարիզացիան» չէ, —այլ նա գիտէ, որ իր դրացին, մուսուլման ժողովուրդը արտազրեւ է միշտ անսովոր առատութեամբ անհանգիստ տարրեր, անհանգիստ՝ անկախ ազահովութեան ու անապահովութեան պայմաններից և անհանգիստ՝ բացասական, վուլգար իմաստով, տոկոճն աշխատանքից ընդհանրապէս խորշող, թալանի ու սպանութեան միշտ տրամադիր. բայց հայի ռամկական դատողութիւնը կհասէ ձեզ և այն՝ որ մահմեդական տարրերի այդ խուժաղուժ տրամադրութիւնը—որի արմատները պէտք է փնտրել զարերի խոր գիշերի մէջ—խիստ գիւրութեամբ սանձահարում է նոյն իսկ թիւրքիայի ու Պարսկաստանի պէս կիսասանիշխանական երկրների մէջ, երբ կառավարութիւնները կամենում են այն, որ այդ անհանգստութիւնը, թալանի ու աւերի այդ խորարմատ բը-

*) С. В. Максимовъ. «Сибирь и Катормга» ст. 321.

նազդները մինչև օրս զսպել էին նաև Կովկասում, որ յանցանքի ու ոճրի հերոսներին շատ յաճախ կանգնեցրել է Սիրիբրի ու կախազանի հեռանկարը, որ այդ հեռանկարի սարսափներն այժմ վայրկենաբար չքացան, որ անպատժուծան գիտակցութիւնը յանկարծակի բռնեց նրա տեղը և... պայթեց հսկայական աղէտը...

Յանկարծակի... Այդտեղ արդէն միջամտեցէք դուք, ինտելիգենտ ընթերցող, այդտեղ ուսմիկ հայ գիւղացու խելքը չի հասնում. առանց տրամաբանութեան օրէնքներին ծանօթ լինելու՝ նա աւելց ձեզ մերկ, անպաճոյճ ցուցմունքները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ կովկասեան ողբերգութեան բուն ծնող-նիւթող պատճառները, իսկական causes de terminantes-ը...

Իսկ «յանկարծակիին» — ձեզ յայտնի է, որ պատահական ոչինչ չը կայ ոչ բնութեան, ոչ էլ մարդկային հասարակութիւնների մէջ — «յանկարծակիին» ոչ այլ ինչ էր, բայց եթէ երկար տարիներից ի վեր պատրաստող, զարգացող իրողութիւնների ճակատագրական հետեանք, կամ ասեմք աւելի պարզ — այն չարաշուք ու ոճրագործ քաղաքականութիւնը, որ ասիական բռնաւորների աչքում միակ ու գերագոյն միջոցն է՝ թումբ դնելու յեղափոխութեան բարձրացող ալիքի առջև:

Հայը «վտանգաւոր» տարր էր հռչակւած — պէտք էր խեղդել...

Բիւրօկրատիան, ի դէմս Գօլիցիներների, իրագործեց իր երկարամեայ հայադաւ քաղաքականութեամբ որոշ, նպատաւոր պայմաններ, որոնց մէջ շղթայագերծ դուրս ժայթքեցին խուժանի զսպւած ընազդները... Թուրքական մասսան դարձաւ այդ սև պատմական մօմէնտում հակայեղափոխութեան սիրայօժար դրօշակակիր: Եւ ահա հետեանքը. — արեան հեղեղներ, ծխող աւերակներ և ամենուրեք լաց ու հեծեծանք...

Նման պատճառներ, նման հետեանքներ: Մենք ոչ մի էական տարբերութիւն չենք տեսնում տաճկահայոց և ռուսահայոց կոտորածների մէջ, նրանց աղբիւր-պատճառների ու արտայայտութիւնների տեսակէտից (բացի ի հարկէ, նրանից, որ Կովկասում զազանացած խուժանի հարւածներին, հայկական դիմադրութիւնը պատասխանում է ոչ նւազ կատաղի հարւածներով): Նոյն կուլտուրական-ազատագրական հոսանքը հայ տարրի մէջ, նոյն ոճրագործ, խուլիզանական քաղաքականութիւնը, նոյն քստմենլի, անարգ գործիքը՝ ի դէմս վայրագ, արիւնածարաւ, նախապատմա

վան մարդակերները... Սակայն, հաւատացած եղէք, ընթերցող, որ եթէ կովկասեան սօցիալ-դէմօկրատները շնորհ անէին մակերեսային մարզանքներից դուրս՝ փոքր ինչ խորը գնալ տաճկահայկական աշխարհաշուռաչ ողբերգութեան անալիզի մէջ, մի ողբերգութեան, որի առաջին գործողութիւնը խաղացել է դեռ տաս տարի սրանից առաջ,—այդտեղ ևս նրանք պիտի հոլովէին, մըտքի մի ողբալի խակութեամբ ու սարկութեամբ, նոյն ընդհանուր, ծանօթ բառերը՝ ֆէօդալիզմի քայքայում, դասակարգային կռիւ, հայկական նացիօնալիզմ, հայ առևտրական մրցութիւն, դիֆֆիքընցիացիա, կապիտալիզացիա, պրօլետարիզացիա... Ո՞ւր ևս, Մարքս... Երբէք մի նշանաւոր թէօրիա չի ենթարկել այդքան տխուր պրօֆանացիայի...

VI

ԹՈՒՐԳԱԿԱՆ ԳՐՈՂԸ ԵՒ ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԸ

«Ի դէօլօզիան» դէր ջոննի

Ի՞նչ է պանիւլամիզմը.—Նրա պատմական պատճառները.—Արդիւ Համիդ և իսլամական միութեան պրօպագանդը.—Բանդաղուշանք.—Համիւլամութեան երևոյթը Կովկասում.—Նրա արտայայտութիւնները թուրք-հայկ. կռիւների ընթացքում.—Օսմանեան արշաւանքի՝ վտանգը.—Մի նշանաւոր դօկումենտ.—Շիա և սիւննի.—Տրամաբանական հակասութիւն.—

Կայ մի ուրիշ պատճառարանութիւն, մի ուրիշ «իզմ»—պանիւլամիզմը:

Մենք տեսնք, որ ոչ հայ բուրժուազիան ու կապիտալիզմը իրանց «աւերածներով», ոչ հայկական «նացիօնալիզմը» իր quasi-յարձակողական ախորժակներով, ոչ հայ կօմիտէների գործունէութիւնն ու «սեփական թագաւորութիւն» հիմնելու ծրագիրը — ոչ մէկը զրանցից, իրրև զրգապատճառ այժմեան զրամայի, չի կարող դիմանալ լուրջ քննադատութեան: Նրանք բոլորը հնարւած են կամ հայատեսաց սև-հարիւրակեանների կամ թէ միամիտ ու չարամիտ «թէօրեաիկոսների» կողմից:

Հնարւած կամ յամենայն դէպս խիստ ուռցրած, չափազանց-բած է նաև պանիւլամիզմի արգումենտացիան: Թուրք խուժա-

նը իր «բարձր», ոճրագործ դասակարգի ղեկավարութեամբ հայերի դէմ շարժելիս՝ չի հնազանդւել ոչ մի «իդէօլօգիայի», ոչ մի գաղափարական բնոյթ ունեցող թիւադուրութեան: Նա հնազանդւել է իր աւանդական penchant au crime-ին, իր աւարտու բընադդումներին: Նրան հասկացրել են, այդ թշւառ, տգէտ, ողբալի մասսային, թէ նա անվերջ ու անպատիժ կերպով կարող է թաւանել իր հարեանին... Յիշեցէք այն վիթխարի կարաւանը, որ 1905-ի ամառը ֆուրգօններով շարժոււմ էր դէպի Վարանդայի գիւղերը—Նախիջևանիկ, Քեաթուկ, Փիրջամալ, Վարազաբոյն—գընում էր հայ գիւղացու գոյքը յափշտակելու, իր տունը կրելու և վայելելու: Յիշեցէք և այն հազարաւոր բօրջաւեցիներին, որոնք նոյնպիսի հիմնական պատրաստութիւններով արշաւել էին Թիֆլիսի վրայ և ապա—պատմում են—գառն յուսախաբութեան մէջ վերադառնալով, տրտունջ էին յայտնել իրանց շէֆերին. «Գուք մեզ հաւատացրիք թէ ամբողջ Սօլջակը պիտի կրէինք»...

Ի՞նչ դեր կարող էր ունենալ պանխլամիզմը այդ հսկայական մօբիլիզացիայի մէջ... Բայց նախ բացատրենք գաղափարի իմաստը.

Արդիւլ-Համիդի դիւային հանճարի յղացումն է դա—այդ քաղաքական վարդապետութիւնը, որի անունն է պանխլամիզմ, համխլամութիւն: Եւ նա ունէր իր հիմնական պատմական պատճառները: Նա գալիս էր իբրև մի պանայէում, իբրև մի դարման կիսալուսնի խաւարող տիրապետութեան համար: Ի՞նչ սոսկալի հարւածներ էր կրել վերջին դարում՝ երբեմն ահարկու և համատարած այդ ուժը: Ի՞նչ էր նա Սօլիման մեծի օրով և ինչ դարձաւ Արդիւլ-Համիդի օրով: Գեաւուր ուժերը եկան մին միւսի յետևից յօշոտեցին այդ հսկայական օրգանիզմը: Իսլամը խորտակեց Ասիայում, Աֆրիկայում, Եւրօպայում. նրա մի միթխարի զանգւածը Հնդկաստանում անցաւ Անգլիային, նրա բազմաթիւ իշխանութիւնները կենտրօնական Ասիայում անցան Ռուսաստանին. Աֆղանստանը միայն կանգուն մնաց մի երեքուն ու ֆիլիտիւ անկախութեան մէջ, շնորհիւ միայն անգլօ-ռուսական հակամարտութեան: Պարսկաստանն ու Մարօկկօն ևս քարշ են տալիս մի ողբալի գոյութիւն, այն ինչ Ալժիրը, Կովկասը, Յունաստանը, Իուստինիան, Սերբիան խլեցին սուլթանների ձեռքից համեմաբար նոր ժամանակներում: Եւ, վերջապէս, ահա մի շարք վճռա-

կան հարւածներ Արդիւլ-Համիդի թագաւորութեան օրով.— Բուլ-
ղարիա, Արևելեան Ռումելիա, Բօսնիա-Հերցեգովինա, Թեսալիա,
Կիպրոս, Էպիրոս, Կրեաէ, Տունիս, Եգիպտոս, Սուդան—բոլորն
անցան գեաւորների ձեռքը կամ կազմակերպւեցին իբրև ուրոյն,
անկախ պետութիւններ:

Այդ ծանր կորուստները չէին կարող շանդրադառնալ Երլ-
դրդեան կամարիլլայի հոգեբանութեան վրայ և մանաւանդ Սուլ-
թան Համիդի որ ինքզինք համարում է ամբողջ իսլամ աշխարհի
պարագլուխ—և՛ թագաւոր և գերագոյն խալիֆա, Մարգարէի մի-
ակ փոխանորդ: Եւ անա յղացւում է փրկագարմանը. Տաճկաս-
տանը իբրև միակ շատ թէ քիչ ուժեղ ու կազմակերպւած պե-
տութիւն ամբողջ մահմեդական երկրագնդի վրայ՝ հաւաքէ իր շուրջը
բոլոր մանր ու խոշոր իսլամ պետութիւններն ու ժողովուրդները
և վերականգնէ օսմանեան գահի նախկին մեծութիւնն ու հմայքը...

Բանդապուշանք, անշուշտ... Բայց Երլդրդի մենաւորը, ըստ
երևոյթին, շատ պինդ է կպել այդ գաղափարին և նա երկար
տարիների ընթացքում ջանք չը ինայեց իրագործելու համար
անիրագործելին: Արկեց գործակալներ քարոզչական միասիայով
դէպի բոլոր ծայրերը, դէպի Եգիպտոս, Ալժիր, Մարօկկօ, նոյն
խիղ հեռաւոր Հնդկաստան: Առատ վարձատրութիւն ստանալով
պետական թշուառ գանձարանից՝ այդ բազմաթիւ գործակալները
ամեն տեղ Մահմեդի հաւատացեալների մէջ «խալամական միու-
թիւն» են քարոզում և սուլթան-խալիֆայի գովքն են երգում:

Ոչ մի կասկած՝ որ նոյն աշխատանքը առաջ է մղւում և
կովկասով... Կան, եղև են բազմաթիւ փաստեր հէնց թուրք-հայ-
կական ընդհարումների միջոցին, որոնք հաստատում են համախ-
լամական պրօպագանդի գոյութիւնը Անդրկովկասում. եղև են
խորհրդաւոր սօփոսյանման քարոզիչներ, հաւանականօրէն Թիւր-
քիայից եկած որոշ հրահանգներով, եղևին «ղազաւանթի», սրբազան
պատերազմի մարտակոչներ, եղև են կանաչ գրօշակներ, գանա-
զան գայթակղեցուցիչ մակազրութիւններով ու լօզունգներով, եղև
են մասսային խալամացման դէպքեր, եղև է, վերջապէս, տարիներ
ընթացքում համախալամացման քարոզը թուրք մամուլի միջոցով,
Աղայեաների և ուրիշ իդէօլօգների բերանով, որոնք յիշատի, մին-
չև ուղն ու ծուծը վարակւած են պանիսլամիզմով:

Այդ բոլորը չի կարելի հերքել: Սակայն զբանք, կարելի է

տակը, մեկուսացած պատահական փաստեր են միայն, որոնք հող են ունեցել մի մի շէֆերի զիտակցութեան մէջ, բայց որոնք ոչ մի սունչութիւն չեն ունեցել թուրք մասսաների հետ, որոնք, իբրև շիա, չէին կարող բարեկամաբար տրամադրուել զէպի Բօսֆօրից հեղուներշնչումները... Պանխալամիզմի, ինչպէս և բոլոր իդէոլոգիական մօմէնտների դերը, համարեա ոչինչ է թուրք-հայկական կօշմարի ծագման ու զարգացման մէջ:

Մի վայրկեան կար, երբ հայ հասարակութիւնը ամենայն լրջութեամբ անաղանդ էր խփում «օսմանեան արշաւանքի» վրտանդի հանդէպ: Այդ ժամանակն էր, որ ոռու սօցիալիստ-յիզափոխակներին մեծ օրդանը, Պետերբուրգի «Сынъ Отечества»-ն հրատարակեց իր Կ. Պօլսեան թղթակցից ստացած մի նշանաւոր ու սենսացիօնել զօկումենտ, որը վճռականապէս հաստատել էր ուղում, որ Անգրկովկասեան թուրքերի հայաջինջ դաւադրութիւնը նիւթուած, ծրագրուած է Բօսֆօրի ափերում...:

Ահա այդ ուշադրաւ զօկումենտը.

(Կ. Պօլսի թղթակցութիւն «Сынъ Отеч.» լրագրի)

«Երբ ևս գրում էի պանխալամիզմի մասին, ինչպէս մի լուրջ շարժման մասին Կովկասում և տոնասարակ Արեւելքում, մի քանի հեղինակներ «Արեւելքը ճանաչողներ» անունաւածներից հեղնաբար ծիծաղում էին և ասում էին, թէ դա չափազանցած էրկել է: Վերջի վերջոյ, երբ քեզ ամեն տեղ ասում են՝ յայտնի չէ թէ ում կողմից «հեղինակութիւններ» ճանաչածները, թէ դու սխալում ես,—մտում է միայն լուր: Ժամանակները փոխուցին: Պանխալամիզմը ճանաչւած է ամեն տեղ, և Եւրօպայում գիմագրութեան միջոցներ են ձևար տանել: Միայն Ռուսաստանում նրան նշանակութիւն չեն տալիս, չը նայելով ամեն տեսակ աշխարայ փաստերի: Ներքե ընրւած թանկագին զօկումենտը, որ ևս ձևար ընրի մեծ զմարութիւններով, պերճախօս և պարզ կերպով նկարագրում է, թէ ինչպէս էր պանխալամիզմի դարձը Կովկասում:

Նորերումս Անգրկովկասից վերագարձան երբ ազնեաներ, որոնք կղել են գլխաւորապէս Գանձակի, Բաղի և նրանց սահմանակից նահանգներում: Մէկը անգրկովկասեան մի թուրք է Գանձակից, միւս երկուսը—թուրքացած գրիմցիներ: Թիւրքիչայում նրանք ապրում են վաղուց և նոյն իսկ հաշում են մի ինչ որ միջխարութեան ծառայութեան մէջ, թէև դարձեալ էլի ոռուսներ-պատակ են համարում: Անգրկերբին նայելով, նրանք վաճառականներ են, իսկ իրապէս ոչ մի կապ չունեն վաճառականութեան հետ: Ահա այն զօկումենտը, որ յօրինել է այդ երեք ազնեաներից մէկը և ուղարկւած է պանխալամիզմի մի ներկայացուցչի, որը հասարակական դիրքը թոյլ չէ տալիս սխալ միտք ունենալ:

«X—փաշայի հրամանով, ևս անյապաղ Թիֆլիսից ուղևորուցի Շուշի-յետապայ հրահանգները ստացայ արդէն Բագում: Մեր համախոհները ինձ կրրկնում էին, թէ ի փաստ իսլամի սկօսած ձևանարկութեան աջագութիւնն ապա-

հովւած է: Մեր ընկերներէց ազդեցիկ մարդկանց պրօսակցիայով, բայց ի հարկէ, գլխաւորապէս զբամական նշաններով (թարգմանում եմ բառացի) մեզ աջողեց մտցնել ստիկիանութեան մէջ մեր գործի համար անհրաժեշտ մարդկանց: Իշխան Ն. ասում էր և խոտանում, թէ կանէ ինչ որ հնարաւոր է, որպէս զի հեռացնէ մեզ խանդարող հայերին, որոնք ազմիխիտրացիայի մէջ մի քանի պաշտօններ ունեն: Բայց այս բանը այնքան էլ հեշտ չէր: Այդ անիծեալ գեաւուրները, ինչպէս երևում է, իշխան Ն.-ից աւելի ուժեղ պաշտպանութիւն ունէին և մեր ջանքերը այս ուղղութեամբ, կորան ի դուր, զրա հետ և հազար բուրլի, որպիսի գումարի բաժանման ստացադիրը սրա հետ ներկայացնում եմ: (Այս ստացադիրը ինձ չաջողեց տեսնել, բայց կարելի է գլխի ընկնել թէ ով է նրա զրայ ստորագրուել): Դուք գիտէք, որ մեր նպատակը սկզբում ուղղւած էր հայերի դէմ, և շնորհիւ այդ հանգամանքի, մենք մէջտեղից վերացրինք ամեն մի կասկած: Ամբողջովին զրազւած Հեռաւոր Արեւելի պատերազմով, բնակիչները ուշադրութիւն չէին դարձնում թէ ինչ է կատարում շուրջը, իսկ մենք գործում էինք եռանդով: Առիթները քիչ չը կային: Մի հանգամանք քիչ էր մնում, որ փշացնէր գործը: Տեղ հասած շողեմաւը, որ զէնք էր բերում, ձերբակալեց, հարկաւոր էր տալ ում պէտք է կաշառքը, իսկ մենք փող չունէինք: Ծնորձակալութիւն Մ-բէկին, որ անյապաղ դատա հարկաւոր գումարը, և մենք գիշերով ափ իջեցրինք շողեմաւի զէնքերը: Նոյն օրը և եթ այդ զէնքը բաժանուց ձեռքէ ձեռք: Այն մեծ դազափարը, որի համար մենք պատրաստ ենք մեր գլուխները զոհել և վրէժ աննել մեր վազեմի թշնամուց, որ չէր ուզում մեզ մարդու տեղ դնել, ստորացնում էր և վերաւորում էր մեզ շատ տասնեակ տարիներ, — այդ զազափարը ոչկտրել է բոլոր ճշմարիտ ուղղանաւատներին, և մենք խորապէս համոզւած էինք, որ մեր նպատակին կը հասնենք: Այն, ինչ այս բողեւին տեղի ունի Կովկասում, կարելի է համարել մեծ գործի սկիզբ: Ափսոս միայն, որ հաշտութիւնը շուտ եկաւ: Նա մեզ շատ խանդարեց: Բայց մեծ Ալլահը կը տայ մեզ ոչժեղ շարունակելու սկսած գործը, յանուն որի մեր կանայք և քոյրերը արդէն ջերմ արտասուներն են թափում: Ծատ անսպասելի հանգամանքներ թոյլ չը տան մեզ ձեռք ձգել Կովկասի մի մասը»:

Ահա այն ամենը, ինչ ինձ աջողեց կարգալ: Պանիսլամական շարժումը խիստ անաջ գնաց այն ժամանակից, երբ հեռաւոր Մանջուրիայի դաշտերում թափում էր մարդկային արիւնը: Չը բաւականանալով բերանացի պրօպագանդայով, որ տարածում էին ամբողջ Կովկասում հարկաւոր և հազարաւոր անգրագէտ մօլլաներ, պանիսլամիզմի ամեն աները աւելի հեռու դնացին: Բերանացի պրօպագանդան նրանց այլ ևս չէր բաւականացնում, անհրաժեշտ էր տեսնել աւելի իրական հետեանք: Եթէ չը լինէր ուու-եապօնական պատերազմը, մանաւանդ ուուաց զէնքի մշտական անաջողութիւնը, պանիսլամիզմը դուրէ գեռ երկար կը մնար ուուուցման կէտի վրայ և խօսքից զէնք չէր գնայ: Բայց օրինակները վարակիչ են: Անխելքները հրճեցին. «Մենք ևս պօսնացիներից յետ չենք մնայ ոչ քաջութեան, ոչ գէպի հայրենիքն ունեցած սիրոյ կողմը: Ինչո՞ւ չը փորձենք ոչնչացնել անիծեալ գեաւուրներին ի փառս Իսլամի և մեծ Օսմանի: Եթէ բոլոր մահմեդականները միանան, այն

ժամանակ կարելի է աւելի լաւ ապրել և կը ստեղծուի այնպիսի անաղին մի պետութիւն, որը եւրօպայում նոյն իսկ չեն էլ երազում: Նորից կը շողշողայ Օսմանեան սուրը և նորից գեաւուրները կը սողան մեր ոտներէ մօտ: Եթէ մի գեղեցիկ օր ապստամբեն բոլոր մահմեդականները, ոչ մի ուժ չէ կարող կանդնեցնել նրանց հարւածը: Եւ անա յանուն այս անմիտ գաղափարի, որ եռանդով արծարծում են Բօսֆօրի փեհրում և որը պէտք է ի նկատի առնել, պանխլամական միութեան բոլոր անդամները կամաւոր նւէրներ են տալիս կօմիտէաներին: Այդպիսի մի կօմիտէա էլ կայ մեզ մօտ Կ. Պօլսում: Նրա բազմաթիւ անդամներէ մէջ կարելի է հանդիպել այնպիսի անձանց, որոնք սովորական ժամանակ սեղմում են եւրօպացու ձեռքը և իրանց կրթւած մարդ են համարում: Վերջին ժամանակ այդ կօմիտէաները եռանդով զբաղւած են փող հաւաքելով դէնք դնելու համար: Ստամբուլի մի քանի տներում կարելի է գտնել ամեն տեսակ զէնքի ամբողջ պահեստներ: Յայտնի չէ թէ ինչ ճանապարհներով հարիւր հազարաւոր փամփուշտներ, վառօդ և հրացաններ ուղարկում են Կովկաս և զինում են Կովկասի սահմանակից ազգաբնակիչութիւնը: Տենդային մի զործունէութիւն է կատարւում ողոս կառավարութեան քթի տակ, իսկ այդ կառավարութեան այնպիսի պաշտօնեաները, ինչպէս են իշխան Ն.,—անհող ապրում են իրանց համար և փող դիզում:

Մագ. Այշին

Ապագան թերևս փոքր ինչ լոյս կը սփռէ այդ առեղծւածի, այդ դողացնող կասկածների վրայ, որոնք միանգամայն զուրկ չէին հաւանականութիւնից և որոնք ունէին իրագործելու համար որոշ նպաստաւոր պայմաններ,—Մանջուրական կատաստրօֆ, Յոսւսիմա, շառաշալի պարտութիւններ և ի լրումն ամենայնի՛ ներքին համատարած յեղափոխութիւն... A priori անհնարին չի թւում, որ Երլըզլի բռնաւորը—թէկուզ և մակեդոնական ու հայկական կօշմարները սրտի վրայ ծանրացած—մտածէր անել վերջապէս խիզախ ոտիւնը, շանթիլ աւանդական ոտխին, ապստամբեցնել Դաղստանը, ոտքի հանել բոլոր Կովկասեան մահմեդականներին՝ շիա ու սիւննի՛ և յետ նւաճել կորցրած հողերը...

Մակայն... Դաղստանը յուզման ոչ մի նշան չարտայայտեց—սպասողական զրութիւն էր արգեօք—չը յուզեցին և Կովկասեան միւս ծայրերում ապրող սիւննի ազգաբնակիչութիւնները, որոնք, ընդհակառակը, սկզբից մինչև վերջ խուլիզանական քարոզների հանդէպ պահպանեցին կատարեալ անդորրութիւն և նոյն իսկ երբեմն բարեացակամ վերաբերմունք դէպի հայ ժողովուրդը: Պանխլամիզմը, ինչպէս ամեն մի ուրիշ վարդապետութիւն, որ գալիս է ճաճկաստանից, պէտք է բնականաբար ջերմ արձագանք գտնէ սիւննի մահմեդականների մէջ. և արամաբանօրէն, կոխը պէտք է կենտրոնանար նախ այդ վերջինների ու հայերի միջև:

Այն ինչ՝ միանգամայն հակառակն ենք դիտում: Կոտորածը ըսկա-
 ւում է Բագևում և այնտեղից տարածւում է դէպի Նախիջևան,
 Երևան, Շուշի, Գանձակ, Թիֆլիս. այդ բոլոր վայրերում մու-
 սուլման ազգաբնակութիւնը կազմում են բացառապէս շիաները:
 Մինչդեռ կոտորածի մէջ ոչ մի մասնակցութիւն չեն ունենում
 այն քաղաքները, ուր գերելշտող տարըը սիւննիներ են, և ուսկից
 շատ դիւրին էր դուրս մղել հայերին: Այդպէս—Նուխի, Շամախի,
 Գերբենտ և այլն: Անգամ կատաստրոֆի շրջավայրում գտնուող մահ-
 մեղահան սիւննի գիւղերը ոչ մի ակտիւ մասնակցութիւն չեն
 ունեցել հայ-թուրքական ընդհարումների մէջ:

Այդպիսով, պանխալամիզմի պատճառաբանութիւնը ևս փնում
 է անկայուն ու անընդունելի:

VII

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԱՆԴԻԱՆ ԵՒ ԹՈՒՐԿ ՂԵԿԱՎԱՐՈՂ ՏՍՐՐԵՐԸ

Ս ր տ ա ո ու չ ղ ա շ ն ա կ ց ու թ ի ն

Թուրք հրապարակախօսութիւնը և հակայեղափոխական պրօպագանդը.—Անցքե-
 ըի պատճառները խեղաթիւրւած.—Հայերը ամեն բանում մեղաւոր.—Egalita-
 risme.—Հայերը չը պէտք է արող զարգանան.—Վանդէականութեան իդէօլօղը.—
 Պրօփօկատօրական շահատակութիւններ.—Մուսուլման պատգամաւորութիւնը
 փոխարքայի մօտ.—Հրապարակական մասնութիւն.—Վլադիկաւկաղի թուրքերի
 հեռադիրը.—Համալսարանականը խուլիզանի դերում:

Ծանր է, ծանր՝ շնչել մի մթնոլորտում, ուր՝ մեզ բախտակից,
 մեզ հետ քով քովի ապրող ժողովրդի նոյն իսկ այսպէս կոչւած
 ինտելիգենտ, դեկավարող շրջաններում մենք տեսնում ենք ամեն
 օր հին, ցաւազար հանձարի տխուր արտայայտութիւնները, ու-
 բոնք թունաւորում են ամբողջ շրջապատը և յաճախ ուղղակի
 յուսահատութեան են բերում ընդհանուր համակովկասեան բա-
 րօրութիւնը տենչացող ամեն մի անհատի:

Մենք խօսում ենք թուրք ժողովրդի դեկավարող ու տոնաւող
 շրջանների մասին, ոչ այն փոքրաթիւ գաղափարական ինտելիգեն-
 ցիայի մասին, որ տակաւին խանձարուրի մէջ է և որի գործերը
 մենք դեռ չենք տեսել:

Այդ «գեկավարող տարրերն» են մեզ հետաքրքրում, նրանք էին, որ շարժման մէջ գրին մեծ, անմոռնչ, հլու զանգածը, նրանք կատարեցին թուրք-հայկական ընդհարումների մէջ անարդ «շէյթանի» հետ համահաւասար գեր:

Ամօթալի գեր...

Դեռ երկար ժամանակ արիւնոտ կատաստրոֆից առաջ այդ գեկավարող «ինտելիգենցիան» յանձին իր ամենափայլուն, ամենաձեռնհաս ներկայացուցիչներին՝ հնչեցնում էր նաւթային մայրաքաղաքից հակայեղափոխական Վանդէայի շեփորը, փաստաբանում էր պանիսլամիզմի և թուրքական կապիտալիզմի օրգան Каспий-ում, թէ մուսուլման ժողովուրդը հակառակ է սահմանադրութեան ու յեղափոխութեան, թէ յեղափոխութիւնն ու սահմանադրութիւնը միայն մնաս կարող են բերել թուրք ժողովրդին:

Եւ երբ ժայթքեց հակայեղափոխութեան պղտոր լաւան նաւթաքաղաքի գարշահոտ արգանդից, երբ թուրք ղօշինները իրանց հերոսակախմբերի գլուխն անցած, Նակաշիձէան ոստիկանութեան բարձր ու սիրալիր հովանաւորութեան տակ դժոխքի վերածեցին ահագին քաղաքը—այդ նոյն դիպլոմատոր սև-հարիւրակեանները ինչպիսի եռանդով սկսեցին լալ, արդարացնել յարձակող կողմը, հարազատ խուժանին և յանցանքի ամբողջ բեռը գցել հայերի վրայ...

«Հայերը սկսեցին»—այսպէս յայտարարեց Ահմէդ Բէգ Աղա-յե, վանդէականների գիտուն պարագլուխը, «Петер. Вѣд.»-ի մէջ հրատարակած իր մի յօդածառում:

«Հայեր և թուրքեր հաւասարապէս ջարդեցին, թալանեցին, հրդեհեցին»...

Այդպէս էր բարբառում զազիր անմտութիւնը Բագլի առաջին կոտորածի մասին, որ պիտի մնայ միշտ Կովկասեան տարեգրութեան մէջ, երբև մի սև ու ազնխարշ կոթող թուրք ղօշինների աշխարհագրորդ սխրագործութեան...

Իսկ պատճառների լուսարանութիւնը...

Այդտեղ թուրք ինտելիգենտ առաջնորդը տրամաբանութեան ամենաընտիր գոհարներն է թափում, նա ասպարէզ է գալիս e'galitarisme-ի, հաւասարացման վարդապետութեան... նման այն սօցիալ-դէմօկրատ նորընծային, որի մասին յիշատակեցինք մեր տեսութեան նախորդ էջերում. նա պահանջում է, որ հայի-

րը արագ չառաջադիմեն, չը զարգանան, չը թողնեն թուրքերին իրանց ետևում, խաւարի ազիտութեան մէջ:

«Հայերը դպրոցներ հիմնեցին, թերթեր հրատարակեցին և կազմակերպեցին այլ և այլ ընկերութիւններ—կրթական, բարեգործական—հիմնեցին գրադարաններ, ընթերցարաններ և այդ բոլորի շնորհիւ արագ զարգացան մտաւորապէս ու տնտեսապէս և չը նայած իրանց յարաբերական քչութեան, սկսեցին խաղալ երկրի մէջ գերակշռող դեր: Մինչդեռ թուրքերը, չը նայելով իրանց ճնշող մեծամասնութեան, շարունակեցին փթել ազիտութեան, մտաւոր ու տնտեսական թշուառութեան մէջ, շնորհիւ աղմկնխտորացիայի դէպի նրանց տածած անվստահութեան: Ինքն ըստինքեան հասկանալի է, որ դրութիւնների այդպիսի անհամապատասխանութիւնը առաջ էր բերում ազգաբնակչութեան երկու մասերի մէջ անխուսափելի շփումներ (трения)» *)...

Եւ ոչ միայն վանդէական հրապարակախօսը անարգում է ամբողջ Ռուսաստանի առաջ հայ ժողովրդին, դուրս բերելով նըրան, իրրև նախայարձակ, ոչ միայն նա բոլոր յանցանքը նետում է հայ բուրժուազիայի ու հայութեան վրայ, ոչ միայն լռում է թուրք շայկաների նախամտածած, նախածրագրած պօզրօմի մասին, այլ նա պերճախօս լռութիւն է պահպանում նաև «շէյթանի» պրօլօկատօրական, դահճային, քստմնելի դերի մասին...

Ահա, սակայն, երկու տարի անց՝ թուրք դօշխների փաստաբանը յանկարծ սթափւում է, յանկարծ բացւում են նրա աչքերը, նա սկսում է հասկանալ և «շէյթանի» խաղացած դերը, որը իրր թէ մինչև օրս գաղանիք է եղել նրա համար...

Սթափեցնողը իշխան Ալուսօփի առաջին Պետական Դումայում արտասանած հռչակաւոր ճառն է, որ ամբողջ աշխարհի առաջ մերկացրեց պօզրօմների քաղաքականութիւնը, նրանց պատրասեւու գաղանիքները:

Եւ կեղծ ու փրօւն էքստազի մէջ «Իլշաղի» քամելէօն պուրլիցիատը հետեեալ կոչն է ուղղում Կովկասի հայ և թուրք ժողովուրդներին.

«Լսեցէք դուք, մուսուլմաններ և հայեր: Ո՞վ էր պատճառը երկու ազգերի թշնամութեան: Ո՞վ էր, որ փլատակների վերածեց մեր գեղեցիկ երկիրը և

*) «Петер. Вѣд.» 1905, № 98.

արտասուքների մէջ թողեց բազմաթիւ որբեր: Այժմ այդ բոլորը պարզեց մեզ իշխան Ուրուսովի ճառից յետոյ: Իշխան Ուրուսովի, նախկին մինիստրի օգնականի ճառից երևում է, որ Պետերբուրգում դոյութիւն ունեցող «Պատրիօտներ» կուսակցութիւնը ամեն ճիշդ թափել է՝ կուսցնելու համար երկու ոչ-ուղղափառ ազգութիւններին: Բանից դուրս է դալիս, որ կան մինչև իսկ տպարաններ, ուր տպագրւում են շրջաբերական-թուղցիկներ, որոնք տարածւում են ազնանների միջոցով դէպի ամեն կողմ, ազգութիւնները իրար դէմ լարելու նպատակով... Եւ երկու տարի գլուխ էի կոտորում և ոչ մի կերպ չէի կարողանում գտնել աղբիւրը: Բոլոր ժամանակ մտածում էի, թէ ի՞նչն էր, որ ստիպեց երկու ժողովուրդներին, որոնք հազարաւոր տարիներ ապրել են եղբայրութեան ու աշնայութեան մէջ, թշնամի դառնալ... Այժմ ամեն ինչ պարզեց ինձ համար Ուրուսովի ճառը կարգալուց յետոյ և ես սկսեցի կամայ-կամայ մտաբերել կոտորածին նախադրող բոլոր պարագաները... Մուսուլմաններ և հայեր. մի թէ՛ այսուհետև ևս սեփական ձեռքով քանդելով ձեր խրճիթները, դուք պիտի աջակցէք Պօբէդօնօսցեկին ու Տրէպօվին: Հնարաւօր է, որ այսուհետև էլ դուք շարունակէք գործիք լինել այդ չարամիտ շէյթանների ձեռքում... Սթափւեցէք՝ կովկասի դաւակներ, հայեր և թուրքեր»...

Ողբալի՛ր և չարագործ Ֆլիւգեր, որ դիտէ արագութեամբ պտոյտներ գործել այս ու այն կողմը, նայած թէ ո՞ր քամին է աւելի ուժեղ փչում կայսրութեան մէջ՝ ազատագրական թէ բռնապետական...

Այդ «անկեղծ» հրապարակական խոստովանութիւնները չեն արգելում, սակայն, նոյն խմբագիր Ահմէդ Աղայեկին, նոյն «Իրշադի» մէջ հրատարակել № 105-ում (1906) հետևեալ, պրովօկատորական թղթակցութիւնը Աղղամ կոչւած աւազականոցից.

«Հայ և թուրք ժողովուրդը իրար արիւնը թափելուց, իրար տները աւերելուց յետոյ, միաժամանակ ձեռնպահ մնալով, թէև ապրում էին հաշտ և խաղաղ, բայց և այնպէս անցեալում թափած արիւնի անցրած ծառերը ներկայումս տեսակ-տեսակ դառը պտուղներ են տալիս:

«Գոնձակի դաւառի տափարակներում այս տարի շողերն ընկնելուց մոբերիս սկսեց կենդանանալ, այսօր կամ վաղը այստեղ ու այնտեղ կը սկսէ ոչընչացնել հասած արտերը, որի համար և ժողովուրդը նեղ դրութեան մէջ է մընացել:

«Անցեալ տարիները գոնէ հայերը և թուրքերը միասին խմբելով աշխատում էին եկող չարիքի առաջն տոնելու: Սակայն այս տարի հայերը թուրքերին իրանց արշինով չափելով, բարձրացած սարերի լանջերը՝ չեն վստահանում թուրքերի մէջ գնալ. թուրքերն էլ, որոնք բնակւում են նոյնպէս սարահարթերում, չեն վստահանում տուն-տեղ անտէր թողնել, գնալ զուլումի վայրը: Այնպէս որ, այս չարիքին (մորեխին) վերջ տալու հոգըր մնում է միայն տափարակներում բնակուող թուրքերին: Կառավարութեան կողմից այդ մասին դեռ ոչ

քում՝ այդ տխրահոշակ հերոսը, Թաղիկների ու Թուրք բէգերի այդ գարշելի սպասաւորը...

Եւ նա մենակ չէր—այդ դժնդակ վանդէակահնր: Նա միայն արձագանք էր Թուրք «ազդեցիկ» ու ղեկավարող շրջանների: Նրա հետ էին փողի և հողի բոլոր իշխանները, նրա հետ էր Թուրք ազատամիտ ինտելիգենցիան, ամբողջ Թուրք հասարակութիւնը... Այն հասարակութիւնը, որ նոյն Աղայիների ու Թօփչիբաշիների առաջնորդութեամբ 1905 թւի յունիսի 10-ին հանդիսաւորապէս յանձնում էր փոխարքային ամենահպատակ ղեկուցում - յիշատակագիրը: Դիպլոմաւոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները, միացած ազալարների հետ, մոռացած ժողովրդական ծով ցաւերը՝ ինդրում էին լուծում տալ նախ և առաջ «Թուրք խաների ու բէգերի ազնւական իրաւունքների հարցին»... Բայց աւելի բնորոշն ու հետաքրքրականն այն է՝ որ նրանք հրապարակով իրանք իրանց կողմնակից են յայտարարում հակալեղափոխութեան: Ականջ դրէք այդ ամօթալի յիշատակագրին.

«Թէ ինչպէս է գործում տեղական ազմինխարացիան—արդէն յայտնի է Ձերդ Պայճառափայլութեան, բայց մուսուլմանները զիտակցելով վտանգը, որ սպառնում է ամբողջ երկրին այն մարդկանց կազմակերպւած գործողութիւններից, որոնք ոչ մի խտրութիւն չեն գնում միջոցների մէջ և դիմում են նոյն խոկ սուբերի, — մուսուլմանները զբաւած են պաշտպանողների զերբում... Նըբանք (հայերը) ձգտելով ամեն բանում արատաւորել մուսուլմաններին, չեն ուզում խոստովանել, որ Երևանի անցքերը, որոնք ունէին կազմակերպւած բնաւորութիւն, սկսւած ու կատարւած են ոչ մուսուլմանների ձեռքով: Մուսուլմանները չեն, որ կտոր-կտոր են արել ձերերին, կանանց ու երեխաներին, որ բռնաբարել են թրքուհիներին*), այրել են սները... Ձեռք ուզում ծանրանալ մի ամբողջ շարք փաստերի վրայ, որոնք հաստատում են, որ այդ բոլոր անցքերի մէջ մուսուլմանները չեն մեղաւոր... Բազում, Նախիջևանում ու Երևանում մուսուլմանները չեն, որ տւել են կոտորածի առիթը:

*) Նոյն Աղայի և նրա խմբագրութեամբ լոյս տեսնող «Հէյաթ»-ի տարածած անամօթ ինսինուացիաներն էին դրանք, որ պերճախօս կերպով հերքեց Երևանի կողմերից մի շիտակ Թուրք ինտելիգէնտ, Սուլթանօվ անունով: Ընթերցողը երևի չի մոռացել նրա յիշատակելի հեռագիրը, որ ցասման ու զրգւանքի մի արտայայտութիւնն էր վանդէական ասպետի ու նրա բոլոր արբանեակների հասցէին: «Баку» լրագրի խմբագրութիւնը հեռագրով հարցնում է «Ճիշտ է արդեօք, որ բռնաբարել են մուսուլմանուհիներ և սրբապղծւել են

«Այդ դժբախտ դէպքերի միջոցին մուսուլմանները ստիպւած էին պաշտպանել կազմակերպւած յարձակումները դէմ, որոնք կատարուած էին ոչ միայն դաշոյնների հարւածներով ու բերդանների տրաքոցներով, այլ և պայթուցիկ սոււրբերով: պէտք է նկատել զրա հետ միասին, որ, ինչպէս փաստերը ցոյց են տալիս, զէնք և ուրիշ միջոցներ մեծադոյն քանակով ունեն ոչ մուսուլմանները, որոնք վաղուց արդէն զինաթափ են արւած... Վերջապէս մուսուլմանները չեն, որ հետապնդում են որոշ նպատակների»...*):

Վերջին ֆրագը միայնակ բնորոշում է արդէն գեկուցման հեղինակների և նրանց հետ ամբողջ թուրք ղեկավարող շրջանի քաղաքացիական-բարոյական պատկերը:

Անցքերը այդպէս լուսարանելուց յետոյ՝ «թուրքական պատգամաւորութիւնը» առաջադրում է փոխարքային և գործունէութեան յատուկ ծրագիր՝ վերականգնելու համար խաղաղութիւնն ու անդորրութիւնը Անգրկովկասում:

«Ձեռնարկել ամենավճռական միջոցների՝ դժբախտ անցքերի իսկական հեղինակների և նրանց զրդիչները դէմ (իսկ այդ հեղինակներն ու զրդիչները «պատգամաւորութեան» կարծիքով, հայերն էին), ամենավճռական միջոցներ ձեռք առնել ակներև տենդենցիօզ, սուտ ու զրգոխ տեղեկութիւններ տարածողների դէմ, նաև զաղտնի կօմիտեների դէմ, որոնք տերրօրի են մատնում ամբողջ երկիրը»...

Մեկնութիւնները աւելորդ են. բաւական է արձանագրել միայն այդ անօրինակ դօնօսի, այդ գարշելի մատնութեան ու գետնատարած ստրկամտութեան փաստերը, որոնք անարզանքի սև բիծ են դրոշմում այսպէս անւանւած մահմեդական «հասարակութեան» ճակատին:

Բոլորովին նման է հնչում Վլադիկաւկազում բնակող շուշեցի թուրք քաղաքացիների հեռագիրը, որ անցեալ 1906-ի յուլիսին ուղարկեց զարձեակ փոխարքայ Դաշլօվին **):

մզկիթներ»: Եւ հեռոււմ է պատասխան. «Քնդրում ենք հերքել Երևանսան նահանգում իբր թէ կատարւած մուսուլմանուհիների բռնաբարման և մզկիթների սրբապղծման մասին շրջող լուրերը, որոնց աղբիւրը, ըստ երևոյթիւն, «էշէյաթ»-ն է. երդում ենք պատուով—իսկ ես մահմեդականս, երդում եմ Մարդարէի գազաղով—որ այդ բոլորը աններելի սուտ է: Էյնալի Սուլթանօվ. Նրզ. հաւատ. Մնացականեան»...

*) «Каспій» 1905, № 116. Քաղում ենք Ի. Алибеговъ-ի գրքոյկից՝ «Елисаветпольские кровавые дни предъ судомъ общества».

***) Տես պատճէնը «Ալիք» 1906 թ. № 74.

«Կայսեր փոխարքայ մեծ Վորոնցով-Գաշկովին. Շուշուց մուսուլմանների մասին ստացած լուրերը մեզ անպատմելի վիշտ պատճառեցին: Երևում է, որ դեներալ Գոլոշչակովը իր կողակներին հայ խմբերի հետ միացնելով, մեր մայրերին, քույրերին, հայրերին ու եղբայրներին թնդանօթի ու հրացանի է բռնել:

«Փոխարքայ, սրանից քիչ ժամանակ առաջ, երբ Յեղափոխութեան հեղեղը Ռուսաստանին իր մէջն էր առել՝ եթէ մեր մուսուլմանների հաւատարմութիւնն ու շոյող անկեղծութիւնը չը լինէր, Կովկասը հրդեհւած կը լինէր ընդհարումների ու յեղափոխութեան կրակով: Բայց մենք մեր այդ հաւատարմութեան ու անկեղծութեան մէջ հաստատ մնալով, պահպանեցինք Կովկասը:

«Ափսոս, ափսոս, այժմ նոյն զօրքերը, նոյն կառավարութիւնը իրանց այդչափ հաւատարմութիւն ցոյց տաող մուսուլմանները դէմ ուղղեցին իրանց թնդանօթիները: Արդեօք մեզ համար կարող էր լինել աւելի դառն ու արհամարհական մի վարձատրութիւն»:

Մի փաստ էլ յիշենք, մի վերջին, ցնցող ու պերճախօս փաստ՝ ցոյց տալու համար, թէ ինչ ահռելի տրամադրութիւն է իշխում թուրք մտաւորականութեան մէջ, նոյն իսկ նրա ամենակրթւած ներկայացուցիչների մէջ:

Մենք ուզում ենք առաջ բերել այստեղ երգեալ հաւատարմատար Ալապկար քէզ Խաս-Մամեդովի ճառը, ուղղւած ոռւս զօրքի օֆիցերներին Գանձակի կայարանում *): Այդ ճառը, կարելի է ասել, Կովկասեան վանդէականութեան փառապսաղն է և նրա ամենահարազատ ու գեղարեւեստական արտայայտութիւնը.

«Պ. պ. ոռւս օֆիցերներ. այդ լ՞նչ են անում ձեր զինուորները, ինչպէ՞ս են նրանք վարւում մեզ, թուրքերիս հետ: Նրանք ասում են զարկեցէք, կոտորեցէք թուրքերին, ան թուրքերին, որոնք այսօր յանուն ոռուսաց ցարի գահի հաստատութեան՝ զոհում են իրանց կեանքն ու գոյքը, որոնք մեծից մինչև փոքրը, առանց սեռի ու հասակի խորութեան, լցւած են հաւատարիմ հպատակութեան զգացմունքով, տողորւած են ջերմ սիրով դէպի ցարը, կատարում են նրա հրամանները, նրա կամքը, նրա բոլոր ցանկութիւնները, և օր ու գիշեր աղօթում են նրա երկարակեցութեան ու զօրութեան համար...»

«Պարոններ, բացատրեցէք ձեր զինուորներին, որ մենք թուրքերս, բազմաթիւ զոհեր տալով, կռիւ ենք մղում ցարի թըշնամիների՝ հայերի դէմ, կոտորում ենք նրանց, ոչնչացնում ենք նրանց ուժերը, հալածում ենք, իբրև յեղափոխականների և այդպիսով հնարաւորութիւն չենք տալիս նրանց՝ գուրս գալու ցարի իշխանութեան դէմ, կուելու նրանց զօրքերի դէմ: Իսկ այդ զօր-

*) Այդ ճառը տպագրւած է «Մշակ»-ի 1906 թ. № 7-ի մէջ:

քերը երախտադիտութեան տեղ, ուզում են ջարդել մեզ!.. Ներշնչեցէք, պ. պ. օֆիցերներ, ձեր զինուորներին, որ նրանք կատարում են մեծ ոճիր, ձեռք բարձրացնելով թուրքերի վրայ, հալածելով իրանց ցարի անձնազոհ բարեկամներին:

«Բացատրեցէք նրանց, որ եթէ Կովկասի հայաբնակ նահանգներում չը լինէին թուրքեր, հայերը իբրև յեղափոխականներ, իբրև կուռդներ արքայական իշխանութեան դէմ՝ այսօր կը գերազանցէին թէ ոուս յեղափոխականներին և թէ միւս խռովարար, ապստամբ ժողովուրդներին. լեհերը, հրէաները, ֆինլանդացիք, վրացիները նրանցից ետ կը մնային և չէին կարողանայ մրցել նրանց հետ, իբրև յեղափոխականներ... Սա, պարոններ, կարօտ չէ երկար բացատրութիւնների:

«Մենք, մենք թուրքերս էինք, որ դուրս քաշեցինք հայերին ոուս յեղափոխական գործից, յեղափոխական կուռից: Մենք նրանց կապեցինք ոտքով, ձեռքով, և անզօր դարձրինք նրանց:

«Ի՞նչ շատ բան էք պարտական մեզ... Բացատրեցէք այդ ձեր զինուորներին, ներշնչեցէք նրանց, խոթեցէք նրանց զուլաների մէջ, որ հայերը վաղուց պատրաստած ունէին նրանց համար հարիւրաւոր ուսմբեր, ուժանակի պահեստներ, միլիօնաւոր փամփուշտներ:

«Այդ բոլորը պիտի թափւէր նրանց գլխին, պիտի խառնւէր նրանց արեան հետ, եթէ չը լինէինք մենք թուրքերս:

«Մղւած անասման սէրից դէպի ցարը, դէպի նրա ինքնակալութիւնը, որ հայերը ուրիշ յեղափոխականների հետ կործանել են ձգտում, մենք գնացինք և գնում ենք հայերի դէմ, դէմ ենք դնում մեր գլուխներն ու կրծքերը նրանց ուսմբերին ու գնդակներին, տալիս ենք մեզնից հարիւրաւոր թանկագին զոհեր, հաւատացած լինելով, որ կառավարութիւնը կը գնահատէ մեր անձնազոհ ծառայութիւնը և ըստ այնմ հրախտադէտ կը լինի դէպի մեզ:

«Ահա թէ ինչպէս են մեզ վարձատրում ձեր զինուորները. ձեզնից երկու քայլ հեռու նրանք սւինով ծակեցին իմ վերարկուն... Եւ ես հաղիւ ազատեցի մահից»...

Եւ այդ արիւնոուշտ վագրը, որ դեռ բաւական չէր համարում թափւած հայկական արիւնը, համալսարանի ու երդւեալ հաւատարմատարի տիտղոսով՝ զարդարւած այդ հոյակապ խուլիգանը... ընտրւած էր թուրք հասարակութեան կողմից, իբրև անդամ Պաղատարար Յանձնաժողովի...

VIII

Մ Ա Հ Մ Ե Դ Ա Կ Ա Ն Ռ Ո Ի Տ Ի Ն Ա Ն

Ո՞ւր է ԵԼՔԸ

Սօցիոլոգիայի մի ուշադրաւ նիւթ.—Անախրօնիզմ.—Մի տխուր ժառանգութիւն.—Մեռելները հրամայում են կենդանիներին.—Երամականութիւնը մահմեղական ցեղերի մէջ.—Իսլամը և նրա թունաւորող ազդեցութիւնը.—Անհատը կաշկանդւած.—Ո՞ւր է պատմական փոքրամասնութիւնը.—Երկտասարդ թուրքեր և երկտասարդ տաճիկներ.—Անկում և այլասեռում.—Հեռանկարը:

Ճանաչենք, լաւ ուսումնասիրենք մեր միջավայրը: Դա և դրացիութեան տարրական պարտք է և պահանջ առօրեայ դործունէութեան: Դա կեանքի ու բարօրութեան պահանջ է այն բոլոր ժողովուրդների համար, որոնք շփուում են մուսուլմանների հետ, բայց դա մի «կատէգորիկ հրամայական» է մասնաւորապէս հայ ժողովրդի համար: Լոկ մանկամիտ բացազանչութիւններով, թուրք պրօլետարիատին կոչեր ուղղելով, նրա ուժի և իրէպլիզմի վրայ յոյսեր տածելով՝ լուծում չենք տայ արիւնոտ խնդրին:

Ո՞ւր է այն քաղաքական ալքիմիան, որի շնորհիւ կարելի լինէր արճիճի բնազդները միանգամից վերածել ոսկէ բարբերի...

Ո՞ւր էր, թէ հրապարակի վրայ լինէին միայն զուտ տընտեսական կատէգորիաները, առանց քասսային-հոգեբանական բազմակնճիւ պրօբլիմների:

Ո՞ւր էր, թէ իսկապէս «երկու բուրժուա դասակարգերի մրցումը» լինէր ներկայ արհաւիրալի ճգնաժամի սնուցող աղբիւրը... Բայց մենք տեսանք, որ դա մի ազազակող անմտութիւն է, մի խակ ու սիմպլիստ յայտարարութիւն, ծնունդ ամեն բան խեղաթիւրող մետաֆիզիկական բեզօնօրութեան: Եթէ ցեղական-ազգայնական Փակտօրը այսօր մի խոշոր մեծութիւն է քաղաքակրթւած Արեւմուտքում, մի ոյժ, որ սօցիալիստ կուսակցութիւններն անգամ ստիպւած են հաշի առնել իրանց պրօպագանդի, ծրագրի ու տակախիկի մէջ,—սույս այդ Փակտօրի ազդեցութիւնը ուղղակի եղբրական է մեր միջավայրում...

Օպտիմիզմը հասարակական կեանքում լաւ բան է, ի հարկէ, բայց յոռետեսութիւնը որոշ պարագաներում աւելի լաւ է:

Պէտք է իմանալ խոր թափանցել մարդկային բնութեան մանաւանդ յոռի և չարանիւծ մղումների մէջ,—ասել է մի Ֆրանսիացի հրապարակախօս, և լաւ է ասել: Պէտք է սրտոս հայեացքով զինուել, նշմարելու համար մեր նմանների մէջ մանաւանդ ստորը, անազնիւը:

Վարդազոյն հայեացքները, ջինջ հաւատն ու վստահութիւնը դէպի դրացու, թէկուզ և լծակցի, զգացումները ինքն ըստ ինքեան համակրելի ու դրւատելի են, բայց մենք կուզէինք և հազար անգամ երանի կը տայինք, որ սրանից շտարի առաջ, մեծ կատաստրօֆի նախօրեակին, հայ ժողովուրդը նւազ հաւատ տածէր դէպի դրացու «բարեացակամութիւնը» և աւելի հակամէտ լինէր տեսնելու նրա մէջ չար, վտանգաւոր տրամադրութիւններ: Անակնկալը այնքան զարհուրելի և այնքան կորստաբեր չէր լինի նրա համար... Մենք կուզէինք, որ այդ նոյն սկեպտիցիզմը, նոյն թերահաւատութիւնը արտայայտէր գոնէ աղէտի բռնկումից յետոյ—ուշ, քան երբէք—Շուշու, Գանձակի և ուրիշ բազմաթիւ դէպքերից առաջ, ուր հայ ազգաբնակչութիւնը այնքան չարաչար ու անմիտ կերպով գոհ գնաց իր յանցաւոր, անըմբռնելի, գրեթէ չնաշխարհիկ դիւրահաւատութեան... Մի տեղ արիւնարբու Տակայշվիլիին են ներբողներ կարգում բազմաստորագիր յիշատագիրներէ մէջ, մի այլ տեղ Գանձակում, չը նայած ողբերգական պրէցեդենտներին, երկար ժամանակ մեր որոճող հասարակութիւնը չէ կարողանում վճռել ժամ առաջ քաշելու մարմնով ու գոյքով թուրքական թաղերից, և հաւատում մօլլաներին, որոնք առեքես սէր են քարոզում, օրօրում, քնացնում, իսկ տակից պատրաստում շեշտակի հարւածը... Եթէ ոռւս, վրացի ու այլ ազգերի սօցիալ-դէմօկրատները—քչերը, անշուշտ—դեռ պատրանքներ ունեն թուրք ամբոխի նկատմամբ և պատրաստ են այժմից արդէն մկրտել նրան սօցիալիզմի աւազանում,—ապա անհրաժեշտ է, գէթ ի շահ՝ ճշմարտութեան, ուսումնասիրել մեր հարեանին, դուրս բերել նրան իր իսկական կերպարանքով, պատկերացնել նրան ոչ միայն իր այժմեան էպօպէլի մէջ՝ պատերազմի դաշտում, յարդեայ խուրճը ձեռքում խաղացնելիս և գիւղեր ու քաղաքներ հըրդեհելիս, վագրի մռնչիւնով դիակները յօշոտելիս, կանանց ու երեխաներին մորթոտելիս և փորոտիքը շնորին նետելիս,—այլ պատկերացնել նրան և սովորական, նօրմալ ժամանակ, իր սօցի-

ալական ինքնատիպ գծերով, իր ամենօրեայ «Իլլիւիայի» մէջ...

Սօցիօլօգիայի ուշագրաւ մի նիւթ... Նախապատմութեան մի հարուստ բեկոր, որի էական «բարեմասնութիւնները» կը բաւէ յիշատակել ներկայ էջերում:

Յեղա-կրօնական խտրութեան բարեկամ չենք և ոչ էլ ցեղերի բնածին անհաւասարութեան թէօրիայի դաւանող: Ժողովուրդների իրաւական հաւասարութեան մասին խօսելու հարկ անգամ չը կայ,—նա մի անսասան դօգմա է մեծ յեղափոխութեան օրերից ի վեր, ինչպէս որ մարդկային անձնաւորութիւնն էլ անբռնարարելի մի սրբութիւն է բոլոր ժամանակներում և բոլոր աշխարհագրական կէտերի վրայ: Իրաւունքի ժամանակակից փիլիսոփայութեան համեմատ՝ բոլոր մարդկային համախմբումները կոչւած են հաւասարէս վայելելու բնութեան ու քաղաքակրթութեան բարեքները...

Այդ այդպէս լինելով հանդերձ, իրողութիւն է և այն, որ ժողովրդաբան-գիտնականի, էտնօլօգի առաջ մարդկութիւնը ներկայանում է իր անվերջ այլազանութեամբ, ցեղագրական տարբեր միութիւններով, որոնց յաճախ անդունդ է բաժանում, —այնքան նրանք տարբեր են իրանց բնորոշ առանձնայատուկ ֆիզիօնօմիայով... Յամենայն դէպս, եթէ ընդունում ենք, որ երկրագնդի վրայ իրօք չը կան, էութեամբ տարբեր բարձր ու ցած ցեղեր—մինը ընդունակ, շարժուն ու մշտապէս առաջադիմող, միւսը անընդունակ ու մշտապէս անշարժ—այլ որ ամեն մի մարդկային համախմբում ընդունակ է որոշ, նպաստաւոր պայմաններում, վաղ թէ ուշ զարգանալ ու առաջադիմել, ապա պէտք է խոստովանենք, որ զարգանալու ու առաջադիմելու այդ ընդունակութիւնը խիստ տարբեր աստիճաններ է ընդունում տարբեր ցեղերի մէջ:

Կան, իրաւ է, ըզգմաթիւ ցեղեր, մանր ու խոշոր, որոնք ոչ մի հնարաւորութիւ չունեն ցոյց տալու իրանց այդ ընդունակութեան չափը: Ընկած հեռու քաղաքակրթութեան հօրիգօններից, աշխարհագրական անբարեխաջող դիրքերի մէջ, Ա.Ֆրիկայի, Ամերիկայի և Աւստրալիայի անյայտ խորշերում՝ նրանք բուշմէններ ու Կաֆրներ, Պապուաներ, Հօտտենտոտներ, Էսկիմոսներ, ամեն տեսակ կարմամորթներ ու սևամորթներ—առիթ ու դիւրութիւն

չունեն, այսպէս ասած, դրսևորելու իրանց ներքին մտաւոր ու հոգեկան կարողութիւնները և յարմարելու սօցիալական ընդհանուր էւօլիւցիայի օրէնքներին: Նրանց որակում են «բնածողութեամբ» կամ բնութեան ժողովուրդ (Naturvolk) բառով, մի բառ, որ կարծես թարգման է այն ըստը սարսափների, որոնք կատարւում են՝ զուտ բիօլօգիական կեանքով ապրող այդ նախնական համայնքների աշխարհում: Քաղաքակրթութիւնը հետզհետէ մարտում է նրանց խաղաղ նւաճման, կամ բռնի ձանապարհով... Այդ վայրենի համայնակինցադը իր յաւիտենական անշարժութեամբ, իր քարացած նախապաշարումներով ու ֆէտիշներով՝ ոչինչ անօրմալ բան չունի իր մէջ, քանի որ հարիւրաւոր ու հազարաւոր սերունդներին ի վեր այդ բնացեղերը ապրել են հեռու կուլտուրայի շքեղութեան, բարձր, մշակւած հասարակութիւններից, հեռու հաղորդակցութեան զծերից, մեծ գետերից ու ծովերից, մշտապէս փակւած իրանց զուտ բնական, կօսմիքական միջավայրում, ենթակայ բիրտ ու տարրերային ազդակներին... Ոչինչ զարմանալի, ոչինչ տարապայման բան չը կայ այդտեղ:

Բայց ահա մեր առջև մարդկային ընդարձակ ազրեգատներ, համախմբումներ, որոնք նոյն իսկ քաղաքակրթութեան սահմաններում ապրելով, աշխարհագրական և ցեղազրական բարեյաջող պայմանների մէջ, մնում են երկար դարերի ընթացքում ըմբոստ ամեն տեսակ կուլտուրայի ու առաջադիմութեան դէմ... Ինչո՞ւ է այդպէս... Պատասխան չը կայ: Այդ էլ, անշուշտ, բնութեան առեղծւածային խաղերից միին է, որ հասարակական գիտութիւնը դեռ չի թափանցել, չէ լուսաւորել: Բացասական, հակասօցիալական ուժերը—անյիշատակ ու տխուր անցեալի մի ժառանգութիւն—տիրականօրէն բանեցնում են իրանց ազդեցութիւնը և կաշկանդում, ընդ երկար խափանում մարդկային այդ հոծ համախմբումների առաջադիմութեան ընթացքը:

Այդպէս են այն ցեղազրական միութիւնները—թուրք, քիւրդ, տաճիկ և այլն—որոնցով հայութիւնը շրջապատւած է այսօր իր պատմական հայրենիքում:

Չը գիտենք, կա՞յ արդեօք էւօլիւցիայի տիեզերական պրօցէսի մէջ աւելի մոռալ ու վհատեցուցիչ մի դրւագ, աւելի յոռետեսութիւն ներշնչող մի կէտ, քան այդ ահագին մարդկային դանդաղանքի յամառ ձգտումը՝ մնալ աւանդական անշարժութեան մէջ,

փարել անցեալի, միշտ անցեալի խաւար էմբլէմներին: Ծանր ու չարատանջ մի հարց՝ որ այսօր ընդունում է մեր հայերիս համար առանձնապէս սուր ու տխրազին այժմէութիւն... Էւօլյուցիօնիստները, ճիշտ է, խօսում են զարգացման ժամանակաւոր կաշկանդումի մասին (Hemmung der Entwicklung) թէ բիօլոգիական և թէ հասարակական օրգանիզմի մէջ, բայց որ այդ կաշկանդումը այնքան դարեր տեւէ և այն էլ այնպիսի զանգւածներում, որոնք շիման մէջ են աւելի բարձր, կուլտուրական համայնքների հետ—ահա թէ ինչն է սարսափելի և ապշեցուցիչ: Թւում է թէ տարբերութիւն չը կայ այժմեան դրութեան և այն հօրդային-դիւցադներգական ժամանակների մէջ՝ երբ Չինգիզխաններն ու Բատտինները քրշում էին Ասիայի խորքերից իրանց նախրային լէգիօնները՝ դէպի աշխարհադորդ նւաճումներ...

Այսօր, ճիշտ է, որոշ փոփոխութիւններ կատարւում են մահմեդական աշխարհում. ահա ամբօխային յուզումներ Տաճկաստանում, ահա սահմանադրութիւն Պարսկաստանում... Սակայն օրեկտիւ դիտողի համար զբանք կաթիլներ են անշարժութեան համատարած ովկեանի մէջ: Մենք դեռ չը գիտենք, թէ ինչ դուրս կը գայ տաճկական անկերպարան ու տարերային խլրտումներից: Մենք չը գիտենք, թէ ինչ դուրս կը գայ և «սահմանադրութեան» այդ այլանդակ կարիկատուրից, որ առաջ եկաւ Պարսկաստանում համարեա անօրմալ ճանապարհով, առանց արիւնի ու ցնցումների, մի խաւարամիտ ու ֆանատիկոս կղերի ջանքերով և որի գլուխ կանգնած է այսօր նոյն կղերը, տգէտ ու կոյր, օտարամերժ և օտարատեսաց...

Հաւատում ենք, անշո՛ւշտ, էւօլյուցիայի շինարար ոյժին, գիտենք, որ արսօլիւ անշարժութիւն չը կայ աստղերի տակ և վըստահ ենք, որ նոյն իսկ այդ մոռյլ հօրիզօններում արեւտեան գազափարները վաղ թէ ուշ յաղթական ճանապարհ բաց կ'անեն: Սակայն երբ...

Իրանց համայնակեցութեան ու հոգերանութեան շատ գծերով՝ հային շրջապատող մահմեդական ցեղերը վերարտադրում են մեր աչքերի առաջ սօցիօլոգիական առաջին շրջանը՝ վայրենութեան կամ բռնութեան էպօխան՝ երբ, ինչպէս ասում են, մեռելներն էին հրամայում կենդանիներին, երբ տրադիցիօնալիզմը, աւանդապաշտութիւնը, իշխում էր թևատարած, երբ պապինական սովորու-

թիւնների ու հաւատալիքների վիթխարի, քարացած ամբողջութիւնը կաշկանդում էր մտքի ամեն արտայայտութիւն, դատապարտելով հասարակութիւնները զուտ երամական մի գոյութեան: Յայտնի չէ, թէ երբ կը հասնի մեր դրացիների համար հասարակագիտական երկրորդ էպօսան, բռնութեան անտիպօղը, կամ ինչպէս ասում են, «ազատ վիճաբանութեան» շրջանը, ուր—ինչպէս բոլոր ժամանակակից քաղաքակիրթ ու կիսակիրթ ժողովուրդների մէջ—քննադատական, կրիտիքական միտքը՝ խրոխտ ու անընկճելի՝ ապստամբում է բռնաւոր ուտիխայի դէմ:

Ներկան նրանց մէջ ստորադրւում է անցեալին, ամբողջ շրջաւոր, հոմօթին զանգւածը կրօնական խոր երկիւղածութեամբ ծունր է իջնում մեռած ֆէտիշների առաջ և կեանքի, ինքնագործունէութեան տեղ՝ մենք տեսնում ենք մի հոյլ անշարժութիւն, շաղկապած մի անսովոր համերաշխութեան հետ՝ ցեղի, համայնքի անհատների միջև: Մի զարմանալի համերաշխութիւն... Ի՞նչ ասել կուզէ, որ դա այն գիտակից, օրգանական համերաշխութիւնը չէ, որ խարխիսն է բարձր մարդկային հասարակութիւնների, դա զուտ մեքենայական մի ներդաշնակութիւն է, որ մենք տեսնում ենք իբրև օրէնք, նախնական ռազմատէր համայնքների մէջ:

Մեքենայական այդ համերաշխութիւնը իր որոշ դրական դերն է ունեցել բոլոր հօրդային համախմբումների մէջ՝ քաղաքակրթութեան արշալոյսին, երբ գոյութեան դժնդակ կռիւը եղել է տիրապետող իրողութիւն, երբ պէտք է եղել ամեն վայրկեան պատրաստ գտնւել՝ կռու ու կարգապահ բանակով արշաւելութշնամու դէմ. բայց այդ «համերաշխութիւնը» մի անախրօնիզմ է, հասարակագիտական մի անհեթեթութիւն է մեր քաղաքակրթւած միջավայրում. նա երբէք չի լինի ազատութեան սկզբունք, այլ միայն ստրկութեան, նա միշտ կը խրախուսէ երամական ուղին, ի վնաս քննականին, նա միշտ կը բարձրացնէ, միշտ հասարակական գործունէութեան գլուխ կը կոչէ ողբալի միջակութիւններ, մտաւոր ու հոգեկան սնանկներ, որոնցով այնքան փայլում է այսօր մեր դրացի մահմեդական ժողովուրդը:

Մի զարհուրելի ատաղձ: Հապա կրօնը...

Ի՞նչ կը քննենք ըստ էութեան յետադէմ են,—Իսլամը ասես բոլոր կրօններից ամենայետադէմն է: Իբրև տիրական, գիւրիշխող ֆակտօր վերը յիշած ժողովուրդների կեանքում՝ նա հա-

մարեա վճռական դեր ունի այդ ժողովուրդների էւօլիւցիայի մէջ... Քաղաքակրթութեան առաջադիմութեան անհրաժեշտ կրիտիկութիւններից մէկն էլ հէնց այն է, որ կրօնական Ֆէտիշն աստիճանաբար նւագում է, որ աստուածային ու կղերական բռնաւոր տիրապետութիւնը հետզհետէ կորցնում է իր հմայքը մարդկանց գիտակցութեան մէջ և տեղի է տալիս աշխարհիկ ոգու բանաստեղծանութեան հրամայական ձայնին... Այդ երևոյթն ենք դիտում ամբողջ Արևմուտքում և այն բոլոր ժողովուրդների մէջ, որոնք ուղղակի կամ անուղղակի հաղորդակից են եւրօպական քաղաքակրթութեան... Սակայն անհասարակութիւններ, ուր կրօնը իր անխուսափելի սանկցիաներով միջամտում է կեանքի բոլոր արտայայտութիւններին, ուր նա որոշադրում է քաղաքական կազմակերպութիւնների ձևը, աստուածային դրոշմ է հաղորդում ասիական ամենապոպուլի բռնապետութիւններին, ուր նա միահեծան կանոնաւորում է հասարակական յարաբերութիւնները, ուղղութիւն է տալիս հաւատացեալների և՛ բարոյականին և՛ մըտաւորին, ուր նա դեռ մինչև օրս էլ փառաբանում է «սրբազան պատերազի» սկզբունքը և ներշնչում է ելեքտրականացող, ֆանատիկոս մասսաներին—դեռ այսօր ևս, աւանդ—այն չարաշուք համոզմունքը՝ թէ իրօք ամեն մի պատերազմ «անհաւատների», գեաւուրների դէմ աստուածահաճոյ մի գործ է, որի մէջ մեռնողները դառնում են դրախտաբնակ մարտիրոսներ, մինչդեռ պատերազմից յետ կեցողները, դասալիքները մատնւում են դժոխքի արհաւիրքներին... Մի կրօն, որ ցեղի պէս քարացել է, որ ոչ մի էւօլիւցիա, ոչ մի բարենորոգում չի կրել իր ծագման օրից ի վեր, չը նայած ներքին հերձաւածներին ու պայքարներին, որ չի յարմարել մարդկային պատմութեան ոչ մի նշանաւոր անցքի, որ չէ նպաստաւորել դէմօկրատիզմի, ուսմկալարութեան ձգտումները, որ միշտ միայն խրախուսել է բռնի աշխարհակալութիւնները հրով ու սրով, թալանի և սպանութեան քաղաքականութիւնը... Որքան էլ ճշան ու հաւատացնեն «երիտասարդ» թուրքերն ու տաճիկները իրանց կրօնի իբր-ազատամիտ տենդիսցիաների, նրա լայն համբերողութեան մասին՝ անփխտելի է, որ այդ կրօնը իր ծայրայից դօզմատիզմով, անօրինակ, մի անգամ ընդ միշտ բիւրեղացած կրօնա-բարոյական ուղղամենտացիայով մի սարսափելի պատիժ է ոչ միայն «անհաւատների», այլ և հաւա-

տացեալներէի համար, մի ոյժ, որ անագորոյն բռնութեամբ ճըղմում է ամեն ինչ, ստրկացնում է վիթխարի զանգւածներ, ըստեղծում է մի ջոկ, առանձնայատուկ ուղեղային դրութիւն, տափակացնում է առանց այն էլ խեղճ մոխրագոյն, բուսական մի կեանք...

Եւ միթէ մասամբ այդ թունաւոր ազդեցութեան չենք պարտ՝ որ մեր դրացիները մինչև օրս էլ շարունակում են դեգերել նոյն թանձրացման, նախապատմական տգիտութեան մէջ, որ սերունդների մի հսկայական շարք է անցել և ըստ երևոյթին դեռ պիտի անցնի, առանց օգուելու քաղաքակրթութեան լոյսից և բարիքներից, անընդունակ՝ զարգացնելու իրանց մէջ զիտութեան, արւեստի, գրականութեան հեռաւոր նմանութիւններն անգամ: Այդպէս է և տաճիկ ժողովուրդը, այդպէս է ամբողջ Օսմանեան պետութիւնը, որ չը նայած իր նպաստաւոր աշխարհագրական դիրքին և իր մշտնջենական շփման լուսաւոր աշխարհի հետ, հարիւրաւոր տարիների ընթացքում մնում է Եւրօպայի դռների մօտ՝ մի երկրորդ Չինաստան, աւելի ևս յետադէմ,— Չինաստանը անհամեմատ աւելի սիրով է զիմաւորում եւրօպական կուլտուրային:

Որքան, դժբախտաբար, իրաւացի է հեզելեան Գանսը, երբ նա ասում է թէ «Իսլամը լոկ յեղաշրջումն է տարածութեան մէջ և ոչ ժամանակի (eine Umwälzung im Raume, nicht in der Zeit), քանի որ նա իր դատարկ արստրակցիայի, վերացականութեան մէջ չի պարունակում որ և է սաղմ հնարաւորութիւն՝ հեռաւոր դարգացման համար»: Ասես ճակատագրի, Փատումի մի նզովք հալածում է միշտ այդ թշուա ժողովուրդներին, հասարակական այդ մեծածաւալ մարմիններին, որոնց անդամները, կարելի է ասել, որ ամեն տեղ են, իսկ գլուխը, մտածող, գիտակից օրգանը — ոչ մի տեղ...

* * *

Ամեն մի ցեղի, ժողովրդի մէջ՝ միշտ մի աննշան փոքրամասնութիւն է, «ընտիրների» մի դասակարգ է, որ ներկայացնում է առաջադիմական տարր, որ պայքարում է անցեալի դէմ, ապագայի համար: Ո՞ւր է այդ տարրը մահմեդական աշխարհում... Դարեր շարունակ նիրհելուց յետոյ, մեր հարևան թուրք ժողովուրդը վերջապէս «սթափման» նշաններ ցոյց տուց, յանձին իր

ղեկավարող, «գիտակից տարրի», «ինտելիգենցիայի—և ի՞նչ արտադրեց այդ «ինտելիգենցիան»...

Փորձում է նա—տիեզերական «Նամանդուլթեան օրէնքով» փոխ առնել բարձր ազդեցիկ կուլտուրայի նւաճումները: Փորձում է գէթ մասամբ թօթափել Իսլամի և հարազատ, ինքնուհասարակութեան բթացնող լուծը, ուզում է որդեգրել ինքնաբերական գաղափարական ու ինքնամտրակման բեղմնաւոր մեթօղը, որ զբրացի հայր վաղուց ի վեր կիրառում է իր կեանքում այնքան բուռն նախանձախնդրութեամբ ու այնքան աջողութեամբ:

Փորձում է նա քայլել համամարդկային ազատագրութեան ճանապարհով, փոքր ինչ մարզել գաղափարական անձադոնութեան մեծ դպրոցում, ուր իր յեղափոխական գրացին 20 տարուց ի վեր վաստակել է մարտիրոսութեան այնքան պսակներ, երբեմն էլ յաղթութեան դափնիներ...

Ո՛չ, նա հանդիսաւոր կերպով, իր մամուլի էջերում ու փոխարքայական պալատում՝ պարսաւանք է ուղղում յեղափոխութեան և մերժում է սահմանադրութեան սկզբունքը: Նա միւս կողմից հրապարակ է նետում պանիսլամիզմի դրօշակի տակ և այն էլ՝ յարձակողական, թալանող ու յօշոտող պանիսլամիզմի:

Նա գետնատարած փուռում է Նըլզըզի Մեծ Մարդասպանի առաջ և արգարացնելով նրա արիւնոտ սխրագործութիւնները, պատրաստականութիւն է յայտնում ներշնչելու նրա փայփայած մեթօղից և գործադրելու այն՝ նաև Կովկասում, նոյն «ըմբօստ» ու ատելի հայ-գեաւուրի դէմ...

Նև փաղիշահական մեթօղը գործադրում է. հէնց այն ժամանակ, երբ հին բէժիմը փլատակում է ի դէմս ամենամեծ ու դժնդակ ընդհակալութեան, երբ Ռուսաստանի և Կովկասի բոլոր ժողովուրդները, յանձին իրանց առաջագէմ տարրերի, զինւած գիտութեան վերջին խօսքով, տողորւած հասարակական նոր իղէալներով, դիմաւորում են իրանց սեփական արիւնով ներկւած ազատութեան արշալոյսին— թուրք «ինտելիգենցիան», իր ժողովրդի գլուխ կանգնած, նրա կեղեքիչ տարրերի՝ բէկերի ու մօլլաների հետ ձեռք ձեռքի տւած, հանդիսանում է բէակցիայի և խուլիգանութեան մի հզօր պատուար, ապաւինում է հոգևոր ու աշխարհիկ բռնակալութեան... Այդպէս է ահա արտայայտում ինքնատիպ, *suigeneris* հոգեբանութիւնը: Նոր «սթափուղ» ժո-

դովրդի «գիտակից» տարրը որոնում է իր ժողովրդի փրկութեան խարիսխը դարձեալ անցեալի ֆէտիշների մէջ, փոխանակ հետևելու, ընդօրինակելու առաջադէմ ազգերին՝ նա գնում է լուսաւորւելու երկրի ճիւղի մօտ... «Նմանողութեան օրէնքը», քաղաքակրթութեան տարածման այդ նշանաւոր ֆակտորը՝ այդպիսով ծարսում է, գլխիվայր դրւում և նրա կրող քրմապետները իրանց հետ միասին՝ նախապատմական բարբարոսութեան անդունդն են գլորում և իրանց հարազատ ժողովրդին...

Ինտելիգենցիա չը կայ, անհատներ չը կան... Թւում է թէ այդտեղ է ամբողջ ժամանակակից Իսլամականութեան խորագոյնցաւը: Չը կայ այն տարրը, որ ազն է բոլոր քաղաքակրթւող հասարակութիւնների, որ կրողն ու ազգարարն է նոր գաղափարների ու հոսանքների. չը կայ առհասարակ հասարակական մտքի շերտաւորում, չը կայ այլազանութիւն գաղափարների, մօրալի, աշխարհայեցողութեան մէջ: Տնտեսական դասակարգային շերտաւորումը կարծես նոյնպէս բիւրեղացել է ցեղի, կրօնի և բոլոր միւս կատէգորիաների նման, նա չէ անդրադառնում մարդկանց մտքերի ու զգացումների վրայ.—այն ողբերգական, սև թշուառութիւնը, որի մէջ դարերով պահում են թուրք մասսաներին՝ համակրօն ֆէօդալները, կղերական կաստան և աշխարհիկ բռնապետութիւնը՝ ոչինչ չի ասում թուրք «կրթւած» դասին, նա չի արտադրում ժողովրդական դատի համոզւած առաջամարտիկների ու իդէօլոգների շարքերին այն արհաւրալի և բնաջնջող պատերազմն անգամ, որ թուրք տարրի յղացումն է, որ այսօր ներկել է ամբողջ Անդրկովկասը և՛ հայի և՛ թուրքի արիւնով,—այդ եզակի ճրգնածամն անգամ հանդէս չի բերում թուրք ժողովրդի միջից գէթ մի փոքրաթիւ բանակ՝ կարող, ազդեցիկ ու գաղափարական անհատների, որոնք գիտակցելով ընդհարումի բոլոր դժոխային անմտութիւնն ու սարսափները, աշխատէին ուժգին, որոտուն բողոքով, եռանդուն քարոզներով կանգնեցնել հարազատ ամբոխի կոյր, տարերային սլացքը:

Անհատներ չը կան: Ուժեղներն անգամ ենթարկւում են, յարմարւում են իրանց շրջապատին: Բիրտ ու բնական միջավայրը, որ ինչպէս տեսանք, կազմւած է հինաւուրց նախապաշարումներից, նեխւած բարքերից ու սովորութիւններից, պահանջում է իւրաքանչիւրից հլու, դիակնային համակերպումն, perinde ac ca-

daver. Անհատները յարմարուում են խապառ, կորցնելով իրանց առանձնայատուկ գոյնը ու գունաւորելով շրջապատի նման... Այդպէս շնչաւոր տիեզերքի մէջ, որոշ կենդանիներ ու բոյսեր ընդունում են շրջապատող ընութեան գոյնն ու յաակութիւնները, որպէս զի հակասութիւն չը կազմեն միջավայրի հետ, ուշադրութիւն չը գրաւեն իրանց վրայ և դիւրութեամբ պահպանեն իրանց դիրքը գոյութեան դժւար պայքարի մէջ:

Զարհուրելի է սովորութիւնների, բարքերի լուծը: Անհատը ստիպւած է մտածել ծնող-երամի գլխով, զգալ ու կամենալ՝ նրա սրտով ու կամքով... Մի ֆատալ օրէնք՝ որ արտայայտուում է Իսլամի գրեթէ ամբողջ աշխարհագրական գօտիի վրայ... «Երիտասարդ թաթարները» և «Երիտասարդ տաճիկները»—Ահմէդ Աղայեաներն ու Ահմէդ Րիզաները—նոյն անշարժութեան ոգին են մարմնացնում, նոյն հոգեբանութիւնն են արտայայտում՝ իրանց ցեղերի բացասական գծերը. բոլորն էլ ազգայնամուլ, յետադէմ ու արքայապաշտ, բոլորն էլ ատող ու հակառակորդ ուրիշ, լծակից ազգութիւնների, նրանց պարզած ազատութեան դրօշակների, նրանց դաւանած իդէալների: «Երիտասարդ» տաճիկութիւնը, Օսմանեան պրօզրէսի դրօշակակիրը, չը նայած իր ընդունած բարձրագոյն նշանաբաններին՝ մնաց երեսուն տարւայ իր գոյութեան ընթացքում ամուլ ու անդամալոյծ,—մի կուսակցութիւն, կազմւած մտաւոր միջակութիւններից և բարոյական զաճաճներից, որոնք, զազափարական անհրաժեշտ շաղախից զուրկ լինելով, յեղափոխութեան վարդապետութիւնը հարեմներում ու սուլթանական ախոռատներում սովորելով, սխտեմատիքաբար դաւաճանեցին իրանց դատին, կաշառեցին օգոստափառ Ոճրագործից, և իբրև անօրինակ, իրանց տեսակի մէջ եզակի՝ «յեղափոխական» մի կուսակցութիւն՝ զգւանք ու զայրոյթ առաջացրին ամբողջ յեղափոխական մարդկութեան մէջ...

Նրանց սիրած զբաղմունքներից մէկն է եղել՝ ամբաստանել ու արատաւորել յաչս օտարի հայ ու մակեդոնական ժողովրդի ազատագրական շարժումները, ժխտել միջազգային դաշնագիրներով ընդունւած յանձնառութիւնները՝ յատկապէս հայերի և մակեդոնացիների համար, յորդորել վերջիններին՝ օսմանցի դառնալ և մտածել ընդհանուր, օսմանեան հայրենիքի ազատագրութեան մասին... իրանց կղանակով: Սուլթանի արիւնոուշտ քա-

դաքականութիւնը հայերի վերաբերմամբ, տաճկական եաթաղանի տակ ընկած հարիւր հազարաւոր զոհերը երբէք չեն վշտացրել կարգի ու առաջադիմութեան ներկայացուցիչ «Նրիտասարդ տաճիկներին»,—ընդհակառակը... Այդպէս է ահա պատկերանում մեր առջև, իր խոշոր ու հարազատ գծերով, Օսմանեան վերածնունդի աւանդարդը: Մեռելածին մի կուսակցութիւն, ծոյլ, անպրտուղ, առանց անցեալի ու ներկայի... Նրա հետ կարծես կօնուրաստ է կազմում Անդրկովկասեան Նրիտասարդ Թուրքումիւնը, որ բռնեւած է տենդոտ, մրրկալի պայքարներով և հասած «փառքի» գազաթնակէտին... Սակայն, արտաքուստ հակասական՝ ներքուստ խորապէս նման են իսլամական երկու «աւանդարդ» հատուածները,—երկուսն էլ զոհ նոյն ճակատագրի ու ատաւիզմի, երկուսն էլ ծնունդ նոյն դարւինական լարմարեցման իրանց նեխուած իրականութեան ուռտիմային. երկուսն էլ—Անկում ու Այլասեռում:

Ո՞ւր է ելքը: Ո՞վ պիտի փշրէ ուռտիմայի անսասան ապառաժը: Ո՞ւր են բարձր, անկախ հոգիները, որոնք հեռու երամզանգւածի ազդեցութիւններից, անդրջրհզեղեան, փթած հասկացողութիւններից՝ որոճան բարձր, քաղաքակիրթ համայնքների ծանուցած ճշմարտութիւնները և աշխատեն իրագործել նրանց՝ հարազատ միջավայրում: Ո՞ւր են արտակարգ տեմպերամենտները, որ իրենական հզօր ու արգասաւոր մեկուսացման մէջ պատերազմ յայտարարեն բռնաւոր, աւանդապաշտ հասարակութեան և դառնան խթան նրա անսայթաք առաջադիմութեան:

Անցեալը և ներկան, չէ՞ որ, որոշ չափով պատասխանում են ապագայի համար... Վաղը, ոչ հեռու ապագայում, մեր երկիրը յուսով ենք կը մտնէ ազատ կարգերի մէջ.—ընտրողական իրաւունք՝ ընդարձակ և հաւասար բոլորի համար՝ մամուլի, խօսքի ազատութիւն, պարլամենտական կեանք և այլն—և ի՞նչ պիտի տայ մեր դրացիներին ահռելի անշարժութիւնը այդպիսի կարգերի մէջ... Ի՞նչ ուրիշ բարիք կարող է արտադրել նա, բայց եթէ սանձարձակ օլիգարխիա և գեմագօգիա (de magogie), ուր—ինչպէս Հիւսիսային Ամերիկայում, սևամորթների ազատագրումից յետոյ—լպիրշ, անսկզբունք դեմագօգները, պօլիտիկանները, օգտուելով իրանց ժողովրդի անձայր տգիտութիւններից՝ ազդաների պէս կը թափւեն նրա վրայ, կաշխատեն իրանց գձուձ շահերին ծառայեցնել նրա

Թական ոյժը, նրա վրայ հիմնել ազդեցութիւն ու արտօնութիւններ. կաճի քաղաքական կաշառակերութիւնը հրէշաւոր չափերով, ռամկավարութեան միջնորդութեամբ կը թունաւորուի, կապականւի, և դեռ երկար, շատ երկար ժամանակ, նոյն իսկ դէմօկրատիզմի յաղթանակից յետոյ, թուրքական կամարիլլան իր ձեռքում կը պահէ ինքրտ ու հլու մասսաները, և այդ բոլորը, բնականաբար, կանդրադառնայ ամբողջ երկրի ճակատագրի վրայ... Հրապուրիչ է հեռանկարը—ի՞նչ ասել կուզէ...

IX

Գ Ա Ր Մ Ա Ն Ն Ե Ր

Հ. Յ. Պաշնակցութեան դերը

Պարապ մեղադրանքներ.—«Հայերը պէտք է կրթէին թուրքերին».—«Կատաւարօֆրաէտք էր վաղուց նախատեսնել».—Ս.—դ.—ների պանացէումը.—Թուրք պըրօլետարիատը իբրև փրկութեան խարխիւ.—Ժողովուրդները տակից չեն վերածնուում.—Միմպլիստ բմբոնումներ.—Համերաշխութեան պրօպագանդը.—Արիւնոտ ներկան.—Զինւած խաղաղութիւնը.—Թուրք-հայկական ընդհարումները հետեանքները.—Բարբերի վայրենացում.—Վտանգը տակաւին չի անցած.—Ռէակցիան և պրօփօկատօրական դաւերը.—Պաշնակցութիւնը և հայ-թուրքական մերձեցումը.—Հայ ժողովուրդը՝ միշտ պաշտպանուողի դերում.—Ապագան:

Ծայրէ ծայր սև, արտասուելի մի իրականութիւն, ուր բոլոր ձախորդ, հակահասարակական, հակապրօգրէսիւ գործօնները ձեռք ձեռքի տւած, չինական պատնէշ են ուզում բարձրացնել իրանց և զրսի աշխարհի միջև. մի մոայլ, անապատական միակերպութիւն, որի անեզր ու խաւար ֆօնի վրայ դեռ նոր են երևում մի քանի յուսատու, կազդուրիչ կէտեր, մի հիւանդոտ, պաթօլօգիական հոգեբանութիւն, մի սարսափելի ուտիմա, որի հիմքերը ամուր խարսխւած են դարերի զիշերի մէջ և որը բուժելու համար՝ անհրաժեշտ է երկար, անվերջ, քրտնաջան աշխատանք, մի յատուկ ու գերազանց բժշկականութիւն: Հարկաւոր է ուժեղ, կործանարար մի հողմ, որ փոթորկէ, տակն ու վրայ անէ հակայական ճահիճը, թարմացնէ միջնորդութեամբ և հարթէ ազատ ու արգասաւոր դաշտը՝ նոր կեանքի բողբոջների համար:

Ո՞վ պիտի կատարէ այդ կարգինսլ յեղափոխութիւնը...

Մեզ մեղադրում են—պանիսլամիզմի ու սօցիալ-դէմօկրատիզմի կովկասեան իդէօլօգները—որ մենք, «հայ նացիօնալիստներս» միայն հայ ժողովրդի մասին ենք մտածել և չենք զբաղւել նաև հարևան թուրքերի կրթութեամբ ու դաստիարակութեամբ...

Ահա մի օրիգինսլ պահանջ ևս: Նորընծայական խեղկատակութիւնը քաղաքագիտութեան հովեր է առնում և յաղթանակօրէն հասկացնում է մեզ, որ սրանից տասնեակ տարիներ առաջ մենք պիտի նախատեսնէինք փոթորիկը և պիտի մտածէինք նրա առաջն առնել... թուրք ժողովուրդը դաստիարակելով:

Բաւական չէր հայ ինտելիգենցիայի առաջ դրւած սիզիֆեան գործը, կովկասահայ և նոյնիսկ պարսկահայ առաջադիմութեան խնդիրը, տաճկահայերի արիւնոտ դատը՝ կապւած հազարաւոր մտահոգութիւնների ու գերմարդկային ճիգերի հետ, բաւական չէ, որ հայ գործօն երիտասարդութեանը բաժին է ընկել՝ պատմութեան մի չարաշուք տնօրինութեամբ՝ ամենասոսկալի և ամենաապերախտ աշխատանքը—գործել մի դժոխային միջավայրում, առանց գործելու մի ազատ կայանի, շրջապատւած ամեն կողմից մարդակեր խուժաններով ու պետութիւններով, հալածւած և՛ Տաճկաստանում, և՛ Պարսկաստանում, և՛ Ռուսաստանում, հալածւած յաճախ նոյն իսկ հարազատներից, երբէք չը վարձատրւած հայ ժողովրդական դատի պաշտօնական «հովանաւորներից»... բաւական չէ այդ անօրինակ, պատմութեան մէջ չը տեսնւած մաքառումը—մինք, մի չնչին փոքրամասնութիւն, պիտի ստանձնէինք և թուրք ժողովուրդը լուսաւորելու գործը... Չէ, այդ պահանջը ևս լրջութիւն չունի, ինչպէս միւս բոլոր պահանջները, նոյն աղբիւրներից բղխող: Հային երբէք թոյլ չեն տւել ազատ շունչ քաշել իր հայրենիքում, իր ճակատագրի մասին իսկ հոգալ շատ թէ քիչ ազատօրէն. նրա դպրոցներն են փակել, նրա հասարակական հիմնարկութիւններն են անգամալուծել, նրա ամբողջ ազգային գոյութիւնն են ոտքի տակ տւել, մահւան դատապարտել—նրան թոյլ տւել է՞ն ուրիշի մասին մտածել, հոգալ...

Բայց եթէ անգամ թոյլ էլ տային՝ պիտի կարողանանք նա իր սեփական նախաձեռնութեամբ, իր ուժերով որ և է էական փոփոխութիւն մտցնել մի ժողովրդի կեանքում, որ միանգամայն տարբեր, բացառիկ է իր մտաւոր, հոգեկան ու բարոյական կեն-

ցաղով, իր սօցիալական բովանդակ կազմով, որի խարխիւնները ընդհանուր գծերով ցոյց տւինք արդէն: Երանի չէ՞ր, թէ այդպէս լինէր... Իսկ մենք կարծում ենք, որ դա ուսօպիական, լաւատես մի հայեացք է.—Թուրքի կեանքը վերջ ի վերջոյ նա ինքը պիտի փոփոխէ ու բարւոքէ proprio motu, և ոչ հայերը, ոչ իսկ, ի հարկէ, Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, որքան էլ նրանք ջերմ պաշտպան կանգնեն թուրք պրօլետարիատին, որքան էլ նրանք սրբասանց փարեն թուրքական վերածնութեան գործին:

Փոխադարձ օգնութեան սկզբունքը խիստ յարգելի է—տարակոյս չը կայ: Կուլտուրական հարեանների, մասնաւորապէս մօտիկ շփուող հայ ինտելիգենցիայի պարտականութիւնն է՝ հնարաւորութեան թէկուզ և շատ անձուկ—սահմաններում զարկ տալ մտքերի փրկարար խմորումին՝ մեր մահմեդական զրացիների մէջ: Թուրք պրօլետարիատին՝ որ այսպէս թէ այնպէս, նորագոյն ինդուստրիալիզմի յորձանքն ընկնելով, կամաց-կամաց շրփուում է միւս, աւելի քաղաքակիրթ ազգերի պատկանող պրօլետարիատների հետ՝ պէտք է, անշուշտ, ձգտել քարշել նաև դէպի գիտակցական աշխատանք: Աղէտների սկզբնաւորութիւնից ի վեր՝ մեր հրատարակած այլ և այլ թոռւցիկները պարզ վկայում են համերաշխութեան այն զգացման մասին, որով մենք տողորւած ենք թուրք աշխատաւոր ժողովրդի նկատմամբ:

Բայց մենք դարձեալ սխալ, ուսօպիական ենք համարում՝ լաւատես յարաբերութիւնները այն կուսակցութիւնների, որոնք դիտում են թուրք պրօլետարիատին, իբրև միտեսակ փրկութեան խարխիւս, որը ոչ միայն պիտի ազատէ մեզ ջարդերի ու աւերումների մղձաւանջից, այլ և առհասարակ «տակից» պիտի յիշաշրջէ, վերածնեցնէ հարազատ ժողովուրդը:

Ամեն մի պրօլետարիատ, իբրև իր ազգի մի հատւածը, բաժանում է այդ ազգի ժառանգականութիւնը, ատաւիզմը: Սօցիալիստական գաղափարը, որքան էլ ինքնին հրապուրիչ ու մեծագործ լինի, չի կարող հեշտութեամբ թօթափել հին, հաւաքական արատների զարհուրելի բեռը, որ մի թշառ պատմութիւն փաթաթել է մահմեդական պրօլետարիատի վզին:

Վերջապէս, ժողովուրդները առհասարակ «տակից» չեն վերածնուում,—պատմութիւնը գոնէ չի տալիս այդպիսի օրինակներ: Անշուշտ, մասսաներն են ժամանակի անխը առաջ մղող հզօր գոր-

ծծնը, բայց նրանց շարժումները գիտակցական ու նպատակայարմար դարձնելու համար՝ անհրաժեշտ է միշտ և ամեն տեղ մտաւոր կրթութեան որոշ աշխատանք) որ կատարւում է «պատմական փոքրամասնութեան» ձեռքով: Մի դարից աւելի է, ինչ սօցիալիզմի գաղափարը ծայր է տւել արևմտեան Եւրօպայում և 75 տարի է, ինչ սկսել է պրօլետարական գործնական պայքարը կապիտալիզմի դէմ. և այնուամենայնիւ այսօր Եւրօպայում, նոյն իսկ ամենազարգացած ու ամենախնդուտրիական երկրներէ մէջ, աշխատաւոր պրօլետարիատի—չենք ասում զեռ գիւղացիութեան—մի սոււար մասը զուրս է մնում սօցիալիստական բանակից, չի գիտակցում իր պատմական դերը, իր անտագոնիզմը կապիտալի հետ, նոյն իսկ յաճախ այդ կապիտալի ներկայացուցիչներին է հաւատում իր շահերը, իր ճակատագիրը:

Մինչև որ թուրք ժողովուրդը չը ծնէ գաղափարական կուռ ու կոչման բարձրութեան վրայ կանգնած ինտելիգենցիայի մի բանակ՝ թուրք պրօլետարիատի դատը, ինչպէս և առհասարակ թուրքական առաջադիմութեան գործը մի քայլ անգամ չը պիտի առաջ գնայ: Սօցիալիստական շարժումը, աւելի քան որ և է այլ շարժում կարօտ է ինտելիգենցիայի աջակցութեան: Անցիլ է ժամանակը, երբ՝ բարբարոսական մի հասկացողութեամբ՝ կարծում էին թէ «վարձու աշխատաւորների դատը կարող են օրինաւոր կերպով պաշտպանել միմիայն վարձու աշխատաւորները»: Պրօլետարիատը և սօցիալիստական վարդապետութիւնը զուրս են եկել արդէն վաղեմի համքարական սահմանափակումներից, սօցիալիզմը լոկ ստամոքսի խնդիր չէ ժողովորդների համար, այլ հիմնական յեղաշրջման, բովանդակ, լիակատար վերածնութեան մի խնդիր, որ մարդկային էօլիւցիան առաջին անգամն է հրապարակ հանում. նա, հետևապէս, իր առաջադիմութեան ու յաղթանակի համար պահանջում է ամեն տեսակ կուլտուրական, մշակւած ոյժերի աշխատակցութիւնը, նա պահանջում է մտքի հասուն սպասաւորներ, լայն բազմակողմանի կրթութեամբ՝ որոնք կարողանան վարել աշխատաւոր ընդհանրութեան մեծ պատասխանատու դերը:

Բաւական չէ անգիր անել «դասակարգային» կուլի ֆօրմուլան և անգիր անել տալ բանւորական խմբերին՝ երևակայելով թէ ինքն ըստ ինքեան պատասխան է տրւում սօցիալական-քաղաքական կիանքի հազարաւոր տանջող հարցերին: Այդպէս են մտա-

ծում, ըստ երևոյթին, հայ, թուրք և այլ պրօլետարիատների անունից խօսող Կովկասեան սօցիալ-դէմօկրատները, այդպիսի եղբակացութեան են բերում վերջին ժամանակներս նրանց ձեռքով կատարւած «թէօրիական» մարզանքները, անտեսական մատերիալիզմի յախուռն, անհեթեթ կիրառումները և այլն:

Շարժուը և սիմպլիստ ըմբռնումները երբէք օգտակար ծառայութիւն չեն մատուցել... Կեանքի դէմ պէտք է պայքարել այնպէս, ինչպէս պահանջում են նրա իրական Փակտօրները և ոչ այնպէս, ինչպէս կարդում ենք էնգելսի ու Կառլեկու բրօշուրներում: Թէօրիան մեծ ոյժ է, անտարակոյս: Նրա լոյսը անհրաժեշտ է մեզ ճանապարհ բանալու կեանքի այլազան ու առանձնայատուկ երեւոյթների լաբիրինթոսում: Սակայն, չը պէտք է մոռանալ որ թէօրին էսպէս վերացական բան է, որ նա մաքրւած զուած է երեւոյթների հազարաւոր, մանր ու մունր բարեմասնութիւններից, որ իրականութեան մէջ այդ երևոյթները շատ աւելի հարուստ, բարդ ու կնճռոտ են... Դասակարգային կռիւը տարբեր կերպարանք է առնում տարբեր երկրներում ու մթնոլորտներում և երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի ու պրօլետարիտի՝ անտագօնիզմն ու պայքարը չեն լցնում ամբողջ հասարակական կեանքը... Պէտք է ուշի ուշով ուսումնասիրել ջոկ, առանձնայատուկ կեանքի ընտրոշ պահանջներ և ըստ այնմ ղեկավարել կռիւը: Այդ է, որ չեն կարող անել բանւորական մասսաները, որ կարող է և պէտք է անէ ինտելիգենցիան և այն էլ՝ իւրային, համացեղ ինտելիգենցիան:

Թուրք սօցիալիստ կուսակցութիւնը, որ դեռ դժբախտաբար, ապագայի իրողութիւն է, պէտք է ինքնագլուխ իր ձեռքն առնէ իր համացեղ պրօլետարիատի լուսաւորութեան ու կազմակերպութեան գործը, ինչպէս որ հայ, վրացի, ռուս աշխատաւոր դասակարգերին պիտի կազմակերպեն ու դաստիարակեն հայ, վրացի, ռուս սօցիալիստները: Ուրիշ ելք չը կայ: Դա է միակ բանաւոր ճանապարհը, մանաւանդ Կովկասեան Բարիլոնում:

Մեր միտքը սխալ չը հասկանան: Ազգային առանձնացում չենք քարոզում, այլ կազմակերպական ինքնօրինութիւն: Թող ամենաջերմ, ամենամտերմական կապ պահպանուի թուրք, ռուս, հայ ու վրացի պրօլետարիատի ու սօցիալիստների միջև, թող փոխադարձ եղբայրական համերաշխութիւն տիրէ նրանց շարքե-

րում և մենք ևս մեր կարողութեան չափ կը ձգտենք այդ նպատակին: Բայց չի կարելի սահմանափակել պրօլետարիատով—որը ազգաբնակչութեան մի չնչին բեկորն է—այլ ըստ կարելոյն պէտք է աշխատել լայնացնել պրօպագանդը, տարածելով այն՝ ամբողջ թուրք ժողովրդի վրայ:

Աւանդ... Այս հաճելի խորհրդածութիւնների ընթացքում մենք մի վայրկեան չենք անգիտանում արիւնոտ ներկան, որ հրդեհւած աւերակների ծուխը նոր միայն կտրեց և որ ամեն օր բազմաթիւ շիրիմներ են բացւում մեր դժբախտ երկրի ամբողջ տարածութեան վրայ՝ անմիտ եղեռնի անուղղակի զոհերին ամփոփելու համար...

Անպատմելի են այն բոլոր արհաւիրքները, որոնք անմիջական ու անխուսափելի հետևանք կդան թուրք-հայկական ընդհարումների... Աղէտը հարւածեց երկու կողմերին էլ և երկուսն էլ — հայ և թուրք ժողովուրդը — կանգնած են այսօր արիւնաքամ, ուժասպառ, մերկ ու քաղցած: Հայ փլատակ գիւղերի կողքին՝ կանգնած են ամեն տեղ թուրքական աւեր ու կործան գիւղերը: Իրանց ողբալի տնտեսութիւնը հայ և թուրք գիւղացիք ծախսեցին, այս երկու վերջին տարւայ ընթացքում, զէնքի, ռազմամթթերքի, ապա և զինւորական «էկզեկուցիաների» ու տուգանքների... Տնտեսական, առևտրական կեանքը մարեց ամենուրեք, շատ տեղերում երկու պատերազմող կողմերը փոխադարձաբար բոյկոտ հրատարակեցին, թուրքեր ու հայեր կղզիացան, վերջիններս սկսեցին նոյնիսկ մտածել հաղորդակցութեան ջոկ, սեփական ճանապարհների մասին... Սովը թագաւորեց և այսօր ճարակում է կատաղութեամբ՝ իր անբաժան ուղեկից տարափոխիկ հիւանդութիւնների հետ, որոնք հազարաւոր զոհեր են խլում հայ և թուրք ազգաբնակչութիւնից, անտէր ու անօգնական Զանգեզուրում ու Ղարաբաղում... Դրութիւնը սոսկալի է, թշւառութիւնը՝ անծայր, ողբերգական:

Բաւական չէ այդ: Բարքերը քանի գնում վայրենանում են. համատարած չքաւորութեան ու անիշխանութեան մէջ բարգաւաճում են ամեն տեսակ ոճիրներ. անգամ հայ խաղաղ ժողովրդի ծոցում հետզհետէ բազմանում են բախտախնդիրների, խուլիգանանման տիպերի շարքերը, որոնք իրանց շահատակութիւններով

պատուհաս են դառնում աշխատաւոր ընդհանրութեան համար: Աւագակների, վաշխառուների, ժողովրդական բոլոր ցեղերի կեղեքողական ախորժակները սանձարձակ թոխչք են առնում և մի խուլ յուսահատական բառաչիւն է լսւում կոտորածների թատերարեւ եղած հայ-թուրքական գաւառներից...

Ահա թէ ինչ ծնեց Կովկասեան Վանդէան!...

Եւ դեռ վտանգը անցած չի երևում, դեռ ջարդի երկիւղը դամօկիեան սրի պէս կախւած է բազմատանջ երկրի վրայ: Մի տեսակ գինւած խաղաղութիւն է. փոխադարձ հաւատը կարծես մարել է և տեղի տել անդուլ, տենդային սպառազինութեան երկու կողմերից... Վաղան օրը սարսուռ է ազդում իր խորհրդաւորութեամբ... Ռուսական մեծ յեղափոխութիւնը տակաւին չբոլորեց իր շրջանը, միահեծան բիւրօկրատիզմը դեռ կատարեալ տէր է դրութեան, անարգ շէյթանը դեռ հող ունի իր դաւերի համար, և դեռ բազմաթիւ են Կրուշևանները Անդրկովկասեան երկնքի տակ, իսկ զիշատիչ աղալարները, իրանց զիպլօմաւոր խուլիգանների հետ, դեռ անտարակոյս նոր հայաջինջ ծրագիրնիր են որոշում...

Մենք իդիլլիայի բանդագուշանքներով չենք տարւած և գիտենք, ցաւ ի սիրտ, որ երկու դարաւոր հարեանների դրացիական կապը ծանր հարւածներ է ստացել, որ բացել է մի սև դարագլուխ, սկիզբ է դրել անվերջ, մասնակի եղբայրադաւ ոճիրների, որոնք թեր ևս կը շարունակեն փոքրիկ չափերով նոյն իսկ արդար ու օրինաւոր կարգեր հաստատելուց յետոյ. մի դրութիւն՝ որի շատ թէ քիչ արմատական բուժման հոգսը կը պահանջէ անպայման պօստուլատի պէս, ըստ կարելոյն անջատել երկու տարրերը, քչացնել նրանց շփման կէտերը, գէթ ոչ մի տեղ չը թողնել հայկական թոյլ փոքրամասնութիւն և աշխատել որոշ վայրերում կազմել միապաղպղ հայ ազգաբնակչութիւն:

Հայ ժողովուրդը չէ բռնանում ոչ ոքի իրաւունքների վրայ. նա լցւած է խոր ու անկեղծ բարեացակութեամբ դէպի բոլոր դրացի ժողովուրդները, բայց նա իրաւամբ ըմբոստանում է պատմութեան սահմանած տարկանոնութիւնների դէմ, որոնց շնորհիւ այսօր նա անկարող է հանդիսանում իր տարրական կուլտուրական պէտքերը հոգալու իր երկրի մէջ, ստիպւած է մտածել իր ֆիզիքական գոյութեան մասին, և ինքնապաշտպա-

նութեան կռիւների թեք ուղղութեամբ սահելով, հրոսակների հետ շարունակ գործ ունենալով, ինքն էլ հետզհետէ գլորոււմ է վայրենութեան գիրկը... Գէթ այժմ նա ուզում է մեղմել այդ տարկանոնութիւնների պատճառած չարիքները, ապրել փոքր ինչ գլուխը հանգիստ, ըստ կարելւոյն ամփոփւած իր ցեղագրական սահմանների մէջ:

Սակայն այդ բոլորը ապագայի գործ է. իսկ ի՞նչ անել առայժմ:

«Կուե՛լ բռնապետական ուժի մի դէմ, նւաճել ռամկավարական ազատութիւն, որը, վերջ կը տայ խուլիզանութեան ու ազգերի կռիւներին»,— թելադրում է մեզ սօցիալ-դէմօկրատական խրոխտ Փրազէօյոզիան: Ձրի, անմտած մի թելադրութիւն, որ մինչև իսկ ամաչում ենք հերքել,— որ համարեա նոյնքան արժէք ունի մեզ զբաղեցնող խնդրի տեսակէտից, որքան միամիտների ու լաւատեսների ծանօթ յորդորները՝ թափօրներ կազմել, թուրք-հայկական կօնգրէսներ գումարել՝ հաշտութիւն իրագործելու համար:

Հայը իր բոլոր ոյժերով, միացած վրացիների, միացած ուսանների, լեհերի, հրէաների հետ՝ կարող է ամբողջ տարիներ կուել բռնապետութեան դէմ և էլի չը ստանալ այն ցանկալի կարգերը, որոնք ի վերջոյ պէտք է խաղաղեցնեն մեր ալիճուփ երկիրը: Իսկ այդ տարիների ընթացքում ս'վ պէտք է օգնէ մեր խեղճ ժողովրդին, որից խլում են ինքնապաշտպանութեան միջոցները և ձեռք ու ոտը կապած, մատնում խուժանին: Տարիների չէ՞ ամիսների ընթացքում, արիւնարբու վոհմակները գետնի հետ կը հաւասարեցնէին հայաբնակ վայրերը և Ռուսահայաստանը կը վերածէր Տաճկահայաստանից էլ աւելի ցնցող, էլ աւելի վիթխարի մի գերեզմանոցի...

Ի՞նչ անել ուրեմն...

Մենք համերաշխութեան ու միջազգայնութեան պարօլով ենք հրապարակ եկել և համոզւած ենք, որ թուրք մասսաները, թէև չափազանց վատթար գործիք, բայց, վերջապէս գործիք են միայն մի նպովեալ ուժի մի ձեռքում, որը ուզում էր ազգերը բաժանելով յարատեւ իր տիրապետութիւնը, բայց որը հետզհետէ խորտակում է իր լեռնացած ոճիրների ծանրութեան տակ...

Մենք ենք գարշելի վանդէականութեան առաջին զոհը, բայց դարձեալ մենք ենք, որ անկեղծօրէն հաշտութեան յորդորներ ենք կարդում, մենք ենք, որ երեկ խաղաղութիւնը այս կամ այն վայրերում կնքելուց յետոյ՝ հոգում էինք նրա շիտակ ու լայն իրագործումը, պատժելով նոյն իսկ մեր սեփական շարքերի զինուորներին, երբ նրանք այս կամ այն ձևով կարգը խանգարող էին հանդիսանում:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ մեն-մենակ տարաւ իր ուսերի վրայ հայ ժողովրդի վտանգեած դոյութեան պաշտպանութիւնը, որ իր հոանդուն շրջիկների ձեռքով կազմակերպել ու ղինել էր ժողովրդին և իր փորձեած զինուորական առաջնորդների ձեռքով վարել է այնքան բազմաթիւ ու դժւարին ճակատամարտներ սպառազինեած ու հովանաւորեած խուժանի ղէմ,— Հ. Յ. Դաշնակցութիւնը երբէք չի դիտել այդ կռիւը իբրև նպատակ և ամեն անգամ, յարմար առթիւ, երբ պայմանները հնարաւորութիւն տւել են նրան՝ նա մօտեցել է թուրք ժողովրդին, խօսել է նրա հետ համերաշխութեան ու եղբայրութեան լեզուով, լուսաւորել է նրան իր իսկական նպատակների ու կոչման վերաբերմամբ:

Թող վկայ լինի այս մի հատիկ ուշագրաւ ղէպքը, որ տեղի է ունեցել Ղազախի գաւառում, արիւնահեղ կռիւներից յետոյ— միակ ղէպքը, որ արձանագրեած է մամուլի մէջ *).

ՍՊԻՏԱԿ ԴՐՕՇԱԿԻ ՇՈՒՐՁԸ

(Հայ գիւղացիների այցը թուրք գիւղացիներին)

«Մեզ պէտք չեն այլևս խաղաղարար կօմէդիաներ, բիւրոկրատիայի միջնորդութիւնն աւելորդ է երկու ժողովուրդների մէջ հաշտութիւն կայացնելու համար. անհրաժեշտ է վերջապէս, որ հայ և թուրք աշխատաւոր մասսաները՝ գիւղացիութիւնը և քանուորութիւնը, եղբայրութեան, համերաշխութեան ձեռք մեկնեն իրար անմիջապէս»:

Այս են ասել և ասում երկու ժողովուրդների իսկական բարեկամները:

Ահա այսպիսի համերաշխութեան մի գեղեցիկ օրինակ տւեց Լօռու հայ գիւղացիութիւնը անցեալ շաբաթ:

*) Տես «Ալիք» 1906 թ. № 75.

60 հոգուց բաղկացած գիւղացիների մի խումբ, պատգամաւորներ զանազան գիւղերից, զեկալարութեամբ ընկերներ թ. -ի և Մ. -ի, սկսեց իր ցանկալի միասիան՝ դուրս գալով Դսեղ գիւղից, այցի ելնելու Ղազախի և Լօտու սահմանների վրայ տարածող սարերը քոչի եկած զազախեցի թուրք գիւղացիներին: Այդ պատգամաւորները յանձնարարել էին իրանց ուղարկող հայ շինականների կողմից, որ նրանք խօսեն սրտաբաց, առանց տատանումների և առանց փափկանկատութեան:

Լօրուտ գիւղից առաւօտեան վաղ 60 հոգով, ամենքս էլ ձիաւոր, առաջ ենք ընթանում դէպի Չատինդաղ սարը. առջևից գնում է դրօշակալիրը, նա կրում է օդի մէջ ծածանւող սպիտակ դրօշակը, նշան հաշտութեան, եղբայրութեան: Հեռուից թուրքերը նկատում են մեզ, գիմաւորում են մի քանի թուրք ձիաւորներ, բարի գալուստ են մաղթում և հրաւիրում մեզ իրանց վրանները: Մի-երկու հարիւր թուրք քոչւորներ կէս ժամայ ընթացքում հաւաքւում են մի ընդարձակ տարածութեան վրայ: Ամենքի երեսին ժպիտ է, ուրախութիւն՝ մեր այցի համար:

Հայ գիւղացիները բացատրում են թուրք գիւղացիներին իրանց միասիան, նրանց հասկացնում են երկու դարեւոր հարեան ժողովուրդների եղբայրական յարաբերութեան անհրաժեշտութիւնը. պարզում են, թէ որչափ մահաբեր, կործանիչ է այժմեան կռիւր, որ ահա մէկ և կէս տարուց ի վեր քանդում, աւերում է բոլորիս: Նրանք մերկացնում էին առանց տատանելու ներկայ կուր բուն դրդիչներին, ցոյց էին տալիս, թէ պրօփօկատօր կառավարութիւնը իր արեւնարբու, խաւարգործակալնելով սրպիսի գիւլային ծրագիրներ է ուզում առաջ տանել:

Եւ թուրք գիւղացին լսում, հասկանում և համակրում է... Աւերակ, հրդեհի մատնւած երկիրը ամենքի առաջ է: Հազարաւոր զոհերը, տնտեսական կուլտուրական կեանքի քայքայումը ամենքին արդէն համոզել են, թէ որչափ անմիտ, կորստաբեր է ներկայ կռիւր: Թուրքերը խոստովանում են անկեղծաբար իրանց կատարած սխալները, խոստանում են այսուհետև ամուր փարել համերաշխութեան գաղափարին, տեղիք չը տալ ընդհարումների՝ թէ այժմ սարերում, և թէ Ղազախում՝ վերադարձից յետոյ:

Սպիտակ դրօշակը առաջ է ընթանում, և մենք ամենքս էլ նրա ետևից: Մենք այցելում ենք բազմաթիւ օրաներ, ամեն տեղ խօսում, բացատրւում ենք թուրքերի հետ: Մեր գլխաւոր այցելավայրերն էին Սան-Բուլաղ, Տօլրաթլի, Սարիբուլախ սարերը, ուր քոչի են եկել գլխաւորապէս զազախեցի, սալահլեցի և զայմախլեցի թուրքերը: Դրանք մեծ մասով հասարակ աշխատաւոր գիւղացիներ են. նրանց մէջ կան նաև բէգեր և աղալարներ. վերջիններս իրանց հետև են պահում. սակայն դրանց մէջ կան նաև շիտակ, ազնիւ մարդիկ, որ բոլոր հոգով դէմ են եղել հայ-թուր-

քական ընդհարումներին: Դրանցից պէտք է յիշատակել Իսմայէլ աղայի անուշը, որին ճանաչում են Ղազախի հայերը: Նա լաւ է ըմբռնել պրօվօկատօր կառավարութեան դերը: Շուշու և Գանձակի դէպքերից յետոյ, ասում էին զազախեցի թուրքերը, կառավարութեան ազենաներն ատանց քաշելու անամօթաբար գալիս էին և գրգռում մեզ, որ մենք էլ սկսենք Ղազախում կոտորած: «Մեր ժողովուրդը տգէտ է, խաւար, շուտ ենթակայ պրօվօկացիայի. դա մեր դժբախտութիւնն է»—անա թէ ինչ էին խոստովանում թուրք գիւղացիութեան ներկայացուցիչները...

Թ... և Մ... ընկերները, որոնք առաջնորդում էին այդ գեղեցիկ ու օրինակելի միասխային՝ ոչ այլ ոք են, բայց եթէ «Իաշնակցութեան» խմբապետներ:

Եւ նոյնպիսի միասխաններ, համերաշխութեան նոյն ծանուցումներով կը կազմակերպէին անշուշտ նաև ուրիշ վայրերում, եթէ չը լինէր աղալարական ոճրագործ դասակարգի բռնաւոր կօնարօլը թուրք մասսաների վրայ:

Ուրիշ կերպ չէր կարող վարել Իաշնակցութիւնը, ուրիշ ընթացք չի կարող նա բռնել, եթէ ուզենայ հաւատարիմ մնալ իր ծրագրին ու ընդճանուր ժողովներից գծւած տակտիկին:

Նա կը շարունակէ այսուհետև էլ երկու ժողովուրդների համերաշխութեան պրօպագանդը. բայց եթէ թուրք ժողովրդի մութ տարբերն էլ յամառեն իրանց հայադաւ ու հակայեղափոխական ընթացքի մէջ, եթէ թուրք ամբողջ շարունակէ նախկին յանցաւոր պատրաստականութեամբ ենթարկել Կրուշևանների ու բէգերի ներշնչումներին, եթէ բախտի մի անիծեալ տնօրինութեամբ վերսկսել թուրքական նախայարձակների արիւնոտ սերիան,—այդ դէպքում, այն, կռիւը իր բոլոր արհաւիրքներով պիտի շարունակէի, իբրև մի ֆատալ, ճակատագրական անհրաժեշտութիւն և մենք վերստին պիտի զարմացնենք քաղաքակիրթ աշխարհը եզրայրասպանութեան անօրինակ տեսարաններով:

Իարձեալ մենք չենք, որ պիտի կրենք պատասխանատւութիւնը... Անէ՛ծք սկսողին և անէ՛ծք շարունակողին: Մենք պաշտպանողի դերում ենք եղել միշտ և միշտ էլ կը մնանք այդ դերի մէջ: Մենք ականջ չենք կախի այն մի կարգ անգուսպ գատախազների բարբաջանքներին, որոնք տեղի-անտեղի քարեր են շըպրտում հայ ինքնապաշտպան կազմակերպութեան վրայ և որոնց գոնացում կը տայինք՝ միայն իսպառ համակերպելով, Քրիստո-

սի ու Տօլստօյի հրահանգին հետևելով (непротивление злу зломъ) կամ պարզապէս հայ ժողովուրդը բախտի ալիքներին մատնելով...

Ո՛չ, հայ ժողովուրդը այլ ևս չի ուզում էշ-նահատակի անպատիւ դերը: Դարեր շարունակ խաչ ու աւետարանը կրծքներին սեղմած՝ համերաշխութեան քարոզը հնչեցրինք—և կոտորեցինք, զթութիւն աղերսեցի՛նք—և կոտորեցինք... Շատ արդէն վայելեցինք կոտորուողի հոչակը, ամբողջ տիեզերքը սասանեցրինք մեր մարտիրոսութեամբ—հերիք է: Երբէք յարձակողական ախորժակներ չենք ունեցել, երբէք թալանի ու աւարի արշաւանքներ չենք խրախուսել: Մեր հիմնական մտահոգութիւնն է եղել ամեն տեղ՝ պատրաստել մեր խեղճ ու հալածական ժողովրդին, վարժեցնել նրան ինքնապաշտպանութեան դպրոցի մէջ, ապահովել նրա խաղաղ, կուլտուրական գոյութիւնը բռնաւորների հարւածների դէմ. բոլորը գիտեն այդ—թէ թշնամի և թէ բարեկամ:

Անէ՛ծք սկսողին և անէ՛ծք շարունակողին: Մենք չենք, որ նիւթեցինք սաղայէլական Դաւը և տասնեակ տարիներով յետ մը-դեցինք մեր երկրի առաջադիմութեան անիւր: Ի՛նչ էինք երազում և ինչ եղաւ...

Բայց հայ մարտական կազմակերպութիւնը այժմ ևս ամեն վայրկեան պատրաստ է սիրով վերադառնալ նախկին վիճակին: Համերաշխութեան համոզած պաշտպան՝ «Դաշնակցութիւնը» անմիջապէս վար կը դնէ զէնքը և եղբայրաբար կը հաշուի հակառակորդի հետ, հէնց որ վերջինը նոյնպէս ցոյց կը տայ շիտակ ու անկեղծ խաղաղասիրական տրամադրութիւն:

Հայը զարշում է ազգամիջեան կուից և չը նայած բոլոր արեւան ու սարսափներին, նա դարձեալ հաւատում է—այդտեղ է գուցէ նրա փոթորկոտ գոյութեան, նրա անսովոր դիմացկանութեան մեծ գաղանիքը—նա հաւատում է, որ մի օր, վերջապէս, ազգերի եղբայրութեան գաղափարը կը յաղթանակէ իր բազմատանջ հայրենիքում, կանցնի դարերի պղտոր հոսանքը, շուրջը կը լռեն թունաւոր կրքերը, կը լռէ ատամների գազանային կրճտոցը, և նա իր մաճին, արօրին փարած, իր սեփական հանճարին ապաւինած՝ անդորր սրտով կը շարունակէ իր ստեղծագործող աշխատանքը:

Դրացին էլ կը փոխուի... Հին, քարացած պաշտամունքներն էլ
կանհետանան ժամանակի համայնաջինջ ալիքների մէջ... Ապա-
գայի հոյակապ Արևը կը ճառագայթէ այն բոլոր հաստատութիւն-
ների ու դոգմաների փլատակների վրայ, որոնք այսօր ըմբոստ,
թշնամի են քաղաքակրթութեան, և ժողովուրդները՝ Ռամկավա-
րութեան հովանիի տակ եղբայրացած՝ կը տօնեն միասին երբեակ,
պանծալի դաշնակցութիւնը—Աշխատանքի, Ազատութեան և Խա-
ղաղութեան:

1871

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Երես 5 վերջում տպւած է՝ դարերի հայկական բնութիւնը: Պէտք է լինի դարերի հսկայական բնութիւնը:

Երես 7. 8-րդ տող. տպւած է՝ ձիգ էին թափում յետ... Պէտք է լինի. ձիգ էին թափում յետ մղելու:

Նոյն երեսում, 19-րդ տող. տպւած է՝ ժողովրդական ձգնաժամին ապրող: Պէտք է լինի. ժողովրդական ձգնաժամն ապրող:

Երես 10. 16-րդ տող. տպւած է՝ թուրք ամբոխի վայրագնութեան: Պէտք է լինի. թուրք ամբոխի դաշտագնութեան:

Երես 19. 8-րդ տող (ցածից) պէտք է կարդալ այսպէս. մանաւանդ հայերի մէջ, ուր ծանծաղամիտ կօստօսողիտիզմը... և այլն:

Երես 22. 10-րդ տող. տպւած է՝ որի մէջ այդ տարրը... Պէտք է լինի. որի մէջ հայ տարրը...

Երես 28. 16-րդ տող. տպւած է՝ ոչ մի ուրիշ պետութիւն չի ճանաչում: Պէտք է լինի. ոչ մի ուրիշ պաշտամունք չի ճանաչում:

Երես 31. 12-րդ տող. տպւած է՝ անծայր դիմադրութիւն: Պէտք է լինի՝ անծայր տխմարութիւն:

Երես 32. 2-րդ տող ցածից. տպւած է՝ և իբր մեր ընկերը: Պէտք է լինի և իբր մեր ընկերը...

Երես 43. վերջին տող. տպւած է՝ մարտը նոյն մարտն է: Պէտք է լինի՝ մարտը նոյն մարտն է:



Sp

3872

2013

